ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի խորհրդի
24/12/2019թ թիվ 50-Լ որոշմամբ
Փոփոխված է
02/03/2020թ թիվ 8-Լ որոշմամբ
31/03/2020թ թիվ 9-Լ որոշմամբ
28/04/2020թ թիվ 10-Լ որոշմամբ
08/06/2020թ թիվ 21-Լ որոշմամբ
30/06/2020թ թիվ 22-Լ որոշմամբ
29/09/2020թ թիվ 34-Լ որոշմամբ
27/10/2020թ թիվ 38-Լ որոշմամբ
29/01/2021թ թիվ 1-Լ որոշմամբ
30/03/2021թ թիվ 12-Լ որոշմամբ
27/04/2021թ թիվ 13-Լ որոշմամբ
31/08/2021թ թիվ 30-Լ որոշմամբ
28/09/2021թ թիվ 33/1-Լ որոշմամբ
23/12/2021թ թիվ 47-Լ որոշմամբ
29/03/2022թ թիվ 6-Լ որոշմամբ
26/01/2023թ թիվ 5-Լ որոշմամբ
25/04/2023թ թիվ 14-Լ որոշմամբ
25/04/2023թ թիվ 15-Լ որոշմամբ
31/10/2023թ թիվ 24-Լ որոշմամբ
31/10/2023թ թիվ 31-Լ որոշմամբ
26/12/2023թ թիվ 44-Լ որոշմամբ
27/02/2024թ թիվ 5-Լ որոշմամբ
--/--/2024թ թիվ ---Լ որոշմամբ

Հայաստանի Ավտոապահովագրողների
Բյուրոյի խորհրդի նախագահ

___________________ Արմեն Նուրբեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում
«--» -----------ի 2024թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

__________________ Մարտին Գալստյան

# ԿԱՆՈՆՆԵՐ <u>RL 1-001</u>

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈՅԻ

(ԱՊՊԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ)

**ԵՐԵՎԱՆ - 2024**

## ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԳԼՈՒԽ 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

1. Սույն կանոններով կարգավորվում են ԱՊՊԱ ոլորտի մասնակիցների միջև պայմանագրերի կնքման, պատահարների կարգավորման, փորձաքննությունների իրականացման, հատուցումների կարգավորման և հետադարձ պահանջի կիրառման գործընթացում առաջացող հարաբերությունները: Սույն կանոններով սահմանված դրույթները միաժամանակ հանդիսանում են Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները, որոնք ԱՊՊԱ վկայագրի (այսուհետ նաև՝ Վկայագիր) հետ կազմում են ԱՊՊԱ պայմանագիրը և սույն կանոններում անվանվում են ԱՊՊԱ պայմանագիր:

2. ԱՊՊԱ պայմանագրի առարկա հանդիսացող հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք), այլ իրավական ակտերով, Վկայագրով և սույն կանոններով: Ընդ որում, այն դեպքում, երբ Ապահովագրողների համար սույն կանոններով նախատեսված են Օրենքով սահմանվածից առավել խիստ պայմաններ՝ ներառյալ որոշակի գործողությունների իրականացման առավել կարճ ժամկետներ, ապա Ապահովագրողներն այդ մասով առաջնորդվում են սույն կանոններով:

3. Սույն կանոններում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

1) Բյուրո՝ Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո,

2) Ապահովագրող՝ Բյուրոյին անդամակցող և ԱՊՊԱ պայմանագրի կնքման իրավունք ունեցող ապահովագրական ընկերություն, որն իր մեջ ներառում է ՊԿԱ-ի, ԴՍԱ-ի և ՀՊԱ-ի կարգավիճակում հանդես եկող ապահովագրական ընկերությունները,

3) Պայմանագիր կնքած Ապահովագրող կամ ՊԿԱ՝ Ապահովադրի հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած Ապահովագրող, իսկ սույն կանոնների Հավելված 6-ում՝ համապատասխան ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ Բյուրո,

4) Դիմում ստացած Ապահովագրող կամ ԴՍԱ՝ Ապահովագրող, որին, համաձայն սույն կանոնների, պետք է ներկայացվի ապահովագրական հատուցման վերաբերյալ դիմումը, և (կամ) որը փաստացի կարգավորում է տուժողի ապահովագրական հատուցման գործընթացը՝ ներառյալ կատարում է կանխավճարներ կամ նախնական հատուցումներ (այսուհետ՝ Կանխավճարներ), *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

5) Հատուցման պարտավորությամբ Ապահովագրող կամ ՀՊԱ՝ Օրենքի համաձայն տուժողին ապահովագրական հատուցում վճարելու պարտավորություն ունեցող Ապահովագրող կամ Բյուրո,

6) Ապահովադիր՝ Ապահովագրողի հետ ԱՊՊԱ պայմանագիր կնքած անձ,

7) Ապահովագրված անձ՝ Ավտոտրանսպորտային միջոցը (հատուցման գործընթացում՝ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցը (միջոցները)) օրինական հիմքով տիրապետող անձ,

8) տուժող՝ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով Օրենքով նախատեսված անձնական կամ գույքին պատճառված վնասներ կրած ցանկացած անձ, որն Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ունի հատուցման իրավունք: Տուժող են համարվում նաև սույն ենթակետի առաջին նախադասությամբ նախատեսված՝ անձի մահվան դեպքում Օրենքի համաձայն վնասների հատուցման իրավունք ունեցող անձինք: Տուժողի մահվանից կամ գործունեության դադարեցումից հետո նրա վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգավորումները տարածվում են նրա իրավահաջորդների վրա,

9) Ավտոտրանսպորտային միջոց՝ տվյալ ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրում կամ դրա հավելվածում նշված համարանիշին կամ սույն կանոններով նախատեսված դեպքերում նույնացման համարին կամ թափքի համարին՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին պետական հաշվառում իրականացնող մարմնի և (կամ) արտադրողի տվյալներով համապատասխանող ավտոտրանսպորտային միջոց,

10) վնասների փորձագետ՝ Բյուրոյի կանոնների համաձայն՝ ԱՊՊԱ ոլորտում գույքին պատճառված վնասների գնահատում իրականացնելու իրավունք ունեցող անձ,

11) պատճառների փորձագետ՝ Բյուրոյի կանոնների համաձայն՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն իրականացնելու իրավունք ունեցող անձ,

12) փորձագետ՝ վնասների փորձագետ և պատճառների փորձագետ,

13) վերանորոգող կազմակերպություն՝ Բյուրոյի կանոնների համաձայն՝ համապատասխան վնասի վերականգնում իրականացնելու իրավունք ունեցող անձ,

14) Հանձնաժողով՝ Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Բյուրոյի կազմում ստեղծված Բժշկական հանձնաժողով,

15) Ելակետ 1՝ վարչական վարույթի բացակայության դեպքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կազմած (ներառյալ էլեկտրոնային եղանակով)՝ պատահարի հանգամանքները ամրագրող փաստաթուղթ կամ փաստաթղթերի ամբողջություն,

16) Ելակետ 2՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից կազմված (ներառյալ էլեկտրոնային եղանակով)՝ ավտոտրանսպորտային միջոցների հետվթարային դիրքերի և պատահարի վայրի վերաբերյալ սահմանված տվյալներն արտացոլող գծագիր (սխեմա) և (կամ) դրանց՝ անօդաչու թռչող սարքի միջոցով կատարված՝ Բյուրոյի և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի միջև համաձայնեցված պահանջներին բավարարող ամբողջական տեսագրություն և (կամ) լուսանկարներ և (կամ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից տրամադրված պատահարի ամբողջական տեսագրություն,

17) ավտոտրանսպորտային միջոցների միասնական պատուհան կամ ԱՄՄՊ՝ միասնական էլեկտրոնային հարթակ, որտեղ Բյուրոն, Ապահովագրողները և փորձագետներն առցանց ռեժիմով անմիջականորեն իրականացնում են (կազմակերպում են) սույն կանոններով նախատեսված գործողությունները: ԱՄՄՊ-ն ներառում է նաև Տեղեկատվական համակարգի գործառույթները,

18) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոց՝ համապատասխանաբար Հայաստանի

Հանրապետության կամ Արցախի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից սահմանված կարգով հաշվառված Ավտոտրանսպորտային միջոց, որը սահմանված կարգով հաշվառումից չի հանվել՝ ներառյալ ժամանակավոր,

19) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում չհաշվառված Ավտոտրանսպորտային միջոց՝ սույն կետի 18-րդ ենթակետով չնախատեսված Ավտոտրանսպորտային միջոց:

4. ԱՊՊԱ պայմանագրում օգտագործվող՝ սույն կանոններով չնախատեսված այլ հասկացություններն ունեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում և Օրենքում կիրառվող նշանակությունը, եթե կոնկրետ դրույթի բովանդակությունից չի բխում դրա օգտագործման այլ իմաստ:

5. Սույն կանոնները, բացառությամբ **ենթահավելված 8.2.1.3**-ի, հաստատված են Բյուրոյի խորհրդի կողմից, իսկ **ենթահավելված 8.2.1.3**-ը հաստատված է Հանձնաժողովի կողմից: Սույն կանոնների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես Բյուրոյի խորհրդի (**ենթահավելված 8.2.1.3**-ի մասով՝ Հանձնաժողովի) կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից միակողմանի (առանց Ապահովադրի համաձայնության)՝ Օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, սույն կանոններում կատարվող ցանկացած փոփոխությունների և (կամ) լրացումների և (կամ) գործողության դադարեցման մասին Ապահովադիրը տեղեկանում է Բյուրոյի պաշտոնական www.appa.am ինտերնետային կայքից, որտեղ դրանք հրապարակվում են ուժի մեջ մտնելու պահից առնվազն տասն օրացուցային օր առաջ:

6. Սույն կանոններով սահմանված օրերը համարվում են աշխատանքային օրեր՝ բացառությամբ, երբ կանոնի կոնկրետ դրույթում նշված է օրացուցային օր:

## ԳԼՈՒԽ 2. ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ, ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. Սույն կանոնների իմաստով պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե է համարվում՝

1) Ապահովադիրների, Ապահովագրված անձանց և տուժողների համար՝

ա. սույն կանոնների 2-րդ բաժնով նախատեսված գործընթացների և դրանցից բխող տույժերի վճարման ու վեճերի լուծման շրջանակներում Ապահովադրին և Ապահովագրված անձին ուղարկվող ծանուցումների և վերջիններից ստացվող դիմումների, համաձայնությունների կամ անհամաձայնությունների և ցանկացած այլ պատասխանների գծով՝ համապատասխան ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրով նախատեսված՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. սույն կանոնների 3-րդ բաժնով նախատեսված գործընթացների և դրանցից բխող տույժերի վճարման ու վեճերի լուծման շրջանակներում Ապահովադրին, Ապահովագրված անձին և տուժողին ուղարկվող ծանուցումների և վերջիններից ստացվող դիմումների, համաձայնությունների կամ անհամաձայնությունների և ցանկացած այլ պատասխանների գծով՝ համապատասխան պատահարում ներգրավված իրեն պատկանող (իր կողմից վարած) Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ դրա բացակայության դեպքում՝ նրա կողմից վերջին անգամ որևէ Ապահովագրողի հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրում նշված

էլեկտրոնային փոստի հասցեն, բացառությամբ հետևյալ դեպքերի. *(փոփ. է 28/04/2020թ թիվ 10-Լ)*

ա) եթե ծանուցումը, դիմումը, համաձայնությունը (անհամաձայնությունը) կամ այլ պատասխանն ուղարկելու պահին պատահարում ներգրավված՝ ծանուցվող (դիմումը, համաձայնությունը (անհամաձայնությունը) կամ այլ պատասխանը ներկայացնող) անձին պատկանող (նրա կողմից վարված) Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ պատահարի պահին գործած ԱՊՊԱ պայմանագիրը դադարել է, և համապատասխան գործընթացի շրջանակում այդ անձը ներկայացրել է հաղորդակցման այլ էլեկտրոնային փոստի հասցե, ապա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե է համարվում այդ էլեկտրոնային փոստի հասցեն,

բ) եթե ծանուցվող (դիմումը, համաձայնությունը (անհամաձայնությունը) կամ այլ պատասխանը ներկայացնող) անձին պատկանող (նրա կողմից վարված) Ավտոտրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում չհաշվառված Ավտոտրանսպորտային միջոց է, կամ դրա վերաբերյալ պատահարի պահին առկա չի եղել գործող ԱՊՊԱ պայմանագիր, և համապատասխան գործընթացի շրջանակում այդ անձը ներկայացրել է հաղորդակցման այլ էլեկտրոնային փոստի հասցե, ապա պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե է համարվում այդ էլեկտրոնային փոստի հասցեն,

2) Ապահովագրողների համար՝

ա. Ապահովագրողների կողմից ուղարկվող ծանուցումների գծով՝ իրենց պաշտոնական դոմենի ցանկացած էլեկտրոնային փոստի հասցեն (հասցեները) կամ ԱՄՄՊ համակարգի (www.aswa.am դոմենի) ցանկացած էլեկտրոնային փոստի հասցեն (հասցեները),

բ. Ապահովագրողներին ուղարկվող դիմումների, փաստաթղթերի, համաձայնությունների կամ անհամաձայնությունների և ցանկացած այլ պատասխանների գծով՝ այն էլեկտրոնային փոստի հասցեն, որը նշված է որպես տվյալ ծանուցմանը հետպատասխանի հասցե, իսկ այդպիսին նշված չլինելու դեպքում՝ Ապահովագրողի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակած էլեկտրոնային փոստի հասցեն այդ ծանուցումների վերաբերյալ արձագանքների ներկայացման համար, իսկ Ապահովագրողների կողմից ստացված ծանուցումների հետ չկապված դիմումների և ներկայացվող փաստաթղթերի գծով՝ համապատասխան ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեն, իսկ պայմանագրի բացակայության դեպքում՝ Ապահովագրողի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակած էլեկտրոնային փոստի հասցեն, *(փոփ. է 31/03/2020թ թիվ 9-Լ և 28/04/2020թ թիվ 10-Լ)*

3) Բյուրոյի համար (ներառյալ՝ ԱՊՊԱ ոլորտի կարգավորումների վերաբերյալ կատարվող ընդհանուր ծանուցումների շրջանակներում)՝ Բյուրոյի պաշտոնական www.appa.am ինտերնետային կայքի «Բյուրոյի մասին» բաժնում հրապարակված էլեկտրոնային փոստի հասցեն (հասցեները) կամ ԱՄՄՊ համակարգի (www.aswa.am դոմենի) ցանկացած էլեկտրոնային փոստի հասցեն (հասցեները): *(փոփ. է 28/04/2020թ թիվ 10-Լ)*

8. Բյուրոն և Ապահովագրողները միմյանց հետ հաղորդակցման համար որպես պատշաճ էլեկտրոնային փոստի հասցե կարող են կիրառել միմյանց միջև գրավոր եղանակով համաձայնեցված և Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում

հրապարակված՝ սույն կանոնների 7-րդ կետից տարբերվող էլեկտրոնային փոստի հասցեներ: *(փոփ. է 28/04/2020թ թիվ 10-Լ)*

9. Բյուրոն և Ապահովագրողները պարտավոր են սույն կանոններով նախատեսված բոլոր ծանուցումները սույն կանոններով նախատեսված անձանց ուղարկել իրենց պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից ծանուցվողի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեով:

10. (ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 28/04/2020թ թիվ 10-Լ որոշմամբ):

11. Սույն կանոններով նախատեսված կարգով ծանուցումներն անձի կողմից համարվում են պատշաճ ստացված ծանուցող անձի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկելու օրը, և ~~վերջինների~~ ծանուցվող անձի կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ~~ծանուցող անձի կողմից~~ սկսվում են հաշվարկվել էլեկտրոնային փոստով ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից: *(փոփ. է 28/04/2020թ թիվ 10-Լ)*

12. Ապահովադիրը սույն կանոններով նախատեսված ծանուցումն ստանալուց անմիջապես հետո պարտավոր է ծանուցմամբ նախատեսված տեղեկատվությունը փոխանցել իր հետ կնքված ԱՊՊԱ պայմանագրով Ապահովագրված անձին՝ կրելով վերջինի կողմից ծանուցումը փաստացի չստանալու հետ կապված բացասական հետևանքների համար պատասխանատվության ռիսկը:

13. Ապահովադիրը, Ապահովագրված անձը և տուժողը սույն կանոններով նախատեսված դիմումները, ինչպես նաև ստացված ծանուցումների վերաբերյալ իրենց համաձայնությունը կամ անհամաձայնությունը կամ սույն կանոններով նախատեսված ցանկացած այլ պատասխանները համապատասխան անձանց կարող են ներկայացնել հետևյալ եղանակներից որևէ մեկով՝

1) առձեռն՝ համապատասխան անձի գրասենյակում, որի դեպքում անձի նույնականացումն ապահովելու նպատակով ներկայացվում է նաև անձը հաստատող փաստաթուղթը, իսկ ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նաև համապատասխան գործողությունների իրականացման լիազորություններ ունենալու փաստը հավաստող փաստաթղթերը (նախկինում դրանք ներկայացված չլինելու դեպքում),

2) իրենց պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից համապատասխան անձանց պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով: Սույն ենթակետով նախատեսված եղանակով ուղարկված դիմումները, համաձայնությունները, անհամաձայնությունները և սույն կանոններով նախատեսված այլ պատասխանները համարվում են ստորագրված համապատասխան Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ տուժողի կողմից,

3) *(ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 29/09/2020թ թիվ 34-Լ որոշմամբ):*

4) սույն կանոններով նախատեսված դիմումների ներկայացման համար՝ Ապահովագրողի պաշտոնական հեռախոսահամարին հեռախոսազանգի կամ տվյալների փոխանցման փաստն արձանագրող այլ տեխնիկական միջոցով դիմումի լրացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը Ապահովագրողին հայտնելու միջոցով՝ պայմանով, որ հայտնած տեղեկատվության հիման վրա դիմողի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին Ապահովագրողի կողմից ուղարկվել է ծանուցում, որին կցված է սույն կանոններով սահմանված ձևով լրացված

համապատասխան դիմումը, և ծանուցման պահից հետո՝ 1 օրվա ընթացքում, դիմողն Ապահովագրողին չի ներկայացրել սույն կանոններով սահմանված ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում, ընդ որում՝ անձի կողմից սույն ենթակետում նշված ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում չներկայացնելը չի զրկում վերջինին հետագայում այն սույն կանոնների 113-րդ կետի համաձայն ներկայացնելու իրավունքից,

5) սույն կանոններով նախատեսված դիմումների ներկայացման համար՝ Ապահովագրողի (Բյուրոյի) պաշտոնական ինտերնետային կայքի համապատասխան բաժնում (առկայության դեպքում) կամ համապատասխան բջջային հավելվածի միջոցով դիմումի լրացման համար անհրաժեշտ ամբողջական տեղեկատվությունը մուտքագրելու միջոցով՝ պայմանով, որ մուտքագրված տվյալների փոխանցումը պետք է հաստատվի դիմողի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին կամ դիմողի հետ կնքված ԱՊՊԱ վկայագրում նշված Ապահովադրի հեռախոսահամարին ուղարկված հաղորդագրությունում նշված նույնականացնող ծածկագրի մուտքագրմամբ կամ հատուկ հղման հաստատմամբ: Տվյալների փոխանցումը կարող է հաստատվել նաև Ապահովադրի հեռախոսահամարին ձայնագրվող հեռախոսազանգի կամ տվյալների փոխանցման փաստն արձանագրող այլ տեխնիկական միջոցով ներկայացված դիմումի հաստատմամբ: *(13-րդ կետը լրաց. է 30/06/2020թ թիվ 22-Լ և փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

14. Սույն կանոնների համաձայն՝ դիմումներին կամ պատասխաններին կից ներկայացման ենթակա փաստաթղթերն Ապահովադիրը, Ապահովագրված անձը և տուժողը սույն կանոններով նախատեսված համապատասխան անձանց կարող են ներկայացնել հետևյալ եղանակով՝

1) այն դեպքում, երբ սույն կանոններով նախատեսված է փաստաթղթի բնօրինակի կամ դրա նոտարական կարգով հաստատված պատճենի ներկայացում, այն ներկայացվում է համապատասխան անձի գրասենյակ կամ ուղարկվում է նրա պաշտոնական փոստային հասցեին: Ընդ որում, ՊԿԱ-ն, ԴՍԱ-ն կամ ՀՊԱ-ն պարտավոր է գրասենյակում ներկայացված փաստաթուղթն անմիջապես պատճենահանել և վերադարձնել այն ներկայացրած անձին, իսկ փոստով ուղարկված փաստաթղթի բնօրինակը մեկ օրվա ընթացքում պատճենահանել և փոստով հետ վերադարձնել այն ուղարկողի նշած եղանակով կամ փոստային հասցեով: Սույն ենթակետի համաձայն պատճենահանված փաստաթղթի վրա փաստաթուղթն ստացած անձի կողմից կատարում է «Բնօրինակն անձամբ տեսել եմ» նշումը, լրացվում տեսնելու ամսաթիվը և ստորագրվում: Սույն ենթակետով նախատեսված՝ ՊԿԱ-ի, ԴՍԱ-ի կամ ՀՊԱ-ի կողմից ստացված փաստաթղթի վերադարձման պահանջը չի տարածվում լիազորագրերի կամ դրանց նոտարական կարգով հաստատված պատճենների վրա,

2) այն դեպքում, երբ սույն կանոններով նախատեսված է փաստաթղթի պատճենի (լուսապատճենի) ներկայացում, այն ներկայացվում է առձեռն՝ համապատասխան անձի գրասենյակում (որի դեպքում սույն կանոնների 13-րդ կետով սահմանված կարգով իրականացվում է դրանք ներկայացրած անձի նույնականացում) կամ ուղարկվում է պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից կամ, համապատասխան Ապահովագրողի համաձայնությամբ, ուղարկվում է ԱՊՊԱ պայմանագրի վկայագրում նշված Ապահովադրի հեռախոսահամարով գրանցված բջջային հավելվածով (Viber, WhatsApp, այլ) Ապահովագրողի կողմից տրված հեռախոսահամարին: *(14-րդ կետը փոփ. և լրաց. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

15. Բյուրոն, Ապահովագրողներն ու փորձագետները սույն կանոններով նախատեսված բոլոր գործընթացների շրջանակներում միմյանց միջև հաղորդակցումներն իրականացնում են առցանց ռեժիմով՝ ԱՄՄՊ միջոցով: : Եթե որևէ հաղորդակցման իրականացումը Բյուրոյի կանոններով սահմանված պահանջներին համապատասխան տեխնիկապես հնարավոր չէ իրականացնել ԱՄՄՊ համակարգի միջոցով, և այդ տեխնիկական հնարավորության ապահովումը չի կարող իրականացվել ողջամիտ ժամկետում, ապա, Բյուրոյի համաձայնությամբ, հաղորդակցումն իրականացվում է համապատասխան անձանց պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեների միջև: Նման դեպքերում հաղորդակցումն իրականացրած անձն ԱՄՄՊ համակարգում համապատասխան տեխնիկական հնարավորությունն ապահովվելուց հետո՝ ողջամիտ ժամկետում, պարտավոր է իրականացված հաղորդակցման արդյունքներն արտացոլել ԱՄՄՊ համակարգում: (*փոփ. և լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

15.1. Որևէ գործընթացի շրջանակներում ԱՄՄՊ միջոցով կամ Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված էլեկտրոնային համակարգերից կամ հարթակներից (այսուհետ՝ հաղորդակցման այլ եղանակներ) ստացված կամ ստեղծված տեղեկատվությունը և (կամ) փաստաթուղթը և (կամ) կատարված գործողությունը համարվում է Բյուրոյի, Ապահովագրողի և փորձագետի կողմից պատշաճ ստացված (ներկայացված, կատարված) տվյալ փաստաթղթին կամ տեղեկատվությանը վերջինների կողմից փաստացի տիրապետելու պահից և ենթակա չէ լրացուցիչ ներկայացման դրանք ներկայացնելու պարտավորություն ունեցող անձի կողմից: *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

16. Սույն կանոններով նախատեսված ցանկացած գործընթացի շրջանակներում ներկայացված և (կամ) կիրառվող փաստաթղթերում պարունակվող (ներառյալ՝ բջջային հավելվածի միջոցով փոխանցված) տեղեկությունները ԱՊՊԱ ոլորտում համարվում են հավաստի, քանի դեռ սույն կանոններով սահմանված կարգով կամ ՀՀ օրենսդրության համաձայն տվյալ փաստաթուղթը կազմած (բջջային հավելվածի միջոցով տեղեկությունները փոխանցած) անձանց կամ մարմինների, դրանց վերադաս մարմինների կողմից կամ դատական կարգով այլ փաստ չի հաստատվել, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով: Անձի՝ Ձև 11-ի համաձայն տրված գրավոր հայտարարության հիման վրա Ապահովագրողը և (կամ) Բյուրոն կարող են այդ անձի հետ կապված ապահովագրական հատուցման և (կամ) հետադարձ պահանջի կիրառման գործընթացներում սույն կետով նախատեսված փաստաթղթերի՝ տվյալ անձին վերաբերող տեղեկատվության փոխարեն հավաստի համարել ներկայացված հայտարարության մեջ նշված տեղեկատվությունը: Ընդ որում՝ Ձև 11-ով ներկայացված հայտարարության մեջ նշված՝ փոփոխվող տեղեկատվությունը և դրա հետևանքները կիրառելի են միայն տվյալ անձի և հայտարարությանը համաձայնություն տված Ապահովագրողի և (կամ) Բյուրոյի միջև հարաբերություններում և չեն կարող դրվել այլ անձանց շահերին առնչվող գործընթացների հիմքում: Միևնույն պատահարի շրջանակներում բջջային հավելվածի միջոցով մեկից ավելի համաձայնեցված հայտարարագիր լրացվելու դեպքում հավաստի են համարվում սույն կանոնների համաձայն վերջին անգամ լրացված համաձայնեցված հայտարարագրի միջոցով փոխանցված տեղեկությունները: *(փոփ. և լրաց. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

17. ԱՊՊԱ պայմանագրի կնքմամբ Ապահովադիրները թույլատրում են Ապահովագրողներին և Բյուրոյին ինչպես տվյալ պայմանագրի կնքման և գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության ավարտից հետո միմյանց միջև կամ

երրորդ անձանց հետ ցանկացած եղանակով և կրիչի վրա շրջանառել (ստանալ և տրամադրել) իրենց վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ՝ ԱՊՊԱ պայմանագրում անհրաժեշտ տվյալների արտացոլման կամ արտացոլված տեղեկությունների ստուգման, ԱՊՊԱ պատահարի և դրա գծով իրականացվող հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների իրականացման, ինչպես նաև հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման և ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: Սույն կետում նշված տվյալները կամ դրանց մի մասը կարող են օգտագործվել ~~այլ~~ ԱՊՊԱ ~~պայմանագրի վերակնքման~~ կամ ապահովագրության այլ տեսակների գծով առաջարկություն ներկայացնելու նպատակով միայն տվյալ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից (նրա անունից) և միայն այն դեպքում, եթե այդ նպատակով օգտագործման թույլտվությունը տրվել է Ապահովադրի կողմից, և համապատասխան թույլտվությունը հետ չի կանչվել: Ընդ որում, Ապահովադիրներն իրավունք ունեն ցանկացած պահի գրավոր եղանակով մասամբ կամ ամբողջությամբ հետ կանչել սույն կետում նշված թույլտվությունը, որը հիմք է Ապահովագրողի կողմից ԱՊՊԱ պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հետ է կանչվել միայն ԱՊՊԱ կամ ապահովագրության այլ տեսակների գծով առաջարկություն ներկայացնելու նպատակով տվյալներն օգտագործելու թույլտվությունը: Թույլտվության հետ կանչելը չի ազդում մինչ այդ իրականացված տվյալների մշակման գործողությունների օրինականության վրա: (*փոփ. է 31/03/2020թ թիվ 9-Լ)*

18. Սույն կանոններով նախատեսված դիմումները, պատասխանները կամ փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ տեղեկացումները սահմանված ժամկետում չկատարելու դեպքում համապատասխան ժամկետները կետանցած անձը զրկվում է դիմումը, փաստաթղթերը կամ պատասխանը ներկայացնելու արդյունքում առաջացող իրավունքից և (կամ) կրում է չտեղեկացման համար սահմանված բացասական հետևանքները, բացառությամբ այն դեպքերի, երբ ժամկետի բացթողումը սույն կանոններով սահմանված հիմքերով հարգելի է ճանաչվել դիմումը, պատասխանը կամ տեղեկացումն ստացած անձի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից կամ դատական կարգով:

19. Սույն կանոններով ժամկետի բացթողումը հարգելի է ճանաչվում, եթե ժամկետները բաց թողած անձն ապացուցում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության փաստը.

1) ժամկետի բացթողնման պատճառ է հանդիսացել տվյալ անձի անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում գտնվելը, որն անհնարին է դարձրել նրա կողմից սահմանված ժամկետում դիմումի, պատասխանի կամ փաստաթղթերի ներկայացումը կամ տեղեկացման պարտավորության կատարումը՝ ներառյալ ներկայացման ենթակա իրավասու պետական մարմնի ակտն ընդունված և (կամ) ուժի մեջ մտած չլինելու պատճառով, կամ եթե այդ անձը տեղյակ չի եղել և չէր կարող տեղյակ լինել համապատասխան գործողությունների կատարման հիմքերի մասին (ընդ որում, նման դեպքում, որպես տեղյակ չլինելու հիմնավոր պատճառ սույն կանոններով կարող է գնահատվել միայն անձի՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմաններից դուրս գտնվելը),

2) անձը դիմումը կամ պատասխանը ներկայացրել է կամ տեղեկացման պարտավորությունը կատարել է սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված

հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ համապատասխան գործողության կատարման համար սույն կանոններով սահմանված ժամկետում:

20. Ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումների ներկայացման համար սույն կանոններով սահմանված ժամկետը սույն կետով նախատեսված դեպքերում սկսում է գործել հետևյալ պահից (մինչև այդ պահն ընկած ժամանակահատվածում համարելով, որ առկա են եղել դիմելն անհնարին դարձնող հանգամանքներ, ինչը տուժողի կողմից լրացուցիչ ապացուցման ենթակա չէ)՝

1) տուժողի իրավահաջորդի համար ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնելու մասով՝ համապատասխան ժառանգության վկայագիրն ստանալու օրվանից, իսկ ժառանգության վկայագիրն ստանալու նպատակով դիմում ներկայացնելու համար օրենսդրությամբ նախատեսված ժամկետում համապատասխան դիմում չներկայացնելու դեպքում՝ այդ ժամկետի վերջին օրվանից,

2) ապահովագրական պատահարի գծով իրավասու պետական մարմնի կողմից վարույթ և (կամ) դատական գործընթաց իրականացվելու դեպքում՝ այդ վարույթի և (կամ) դատական գործընթացի գծով այնպիսի գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) կամ գործը կասեցնող ակտի ուժի մեջ մտնելու և տուժողի կողմից դրա ստանալու օրվանից, որով տուժողը կարող էր ակնկալել վնաս պատճառած անձի մեղավորության կամ մեղավորության ավելի բարձր աստիճանի հաստատումը՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ակտում մեղավորության հանգամանքին փաստացի անդրադարձ կատարվել է, թե՝ ոչ,

3) տուժողի մահվանից հետո ծնված նրա երեխայի համար որպես կերակրողին կորցրած անձ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնելու մասով՝ երեխայի ծնվելու օրվանից,

4) տուժողի խնամքի ներքո գտնվող և նրա մահվանից հետո՝ 5 տարվա ընթացքում, անաշխատունակ դարձած անձի համար որպես կերակրողին կորցրած անձ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ներկայացնելու մասով՝ այդ անձին անաշխատունակ ճանաչելու օրվանից:

21. Սույն կանոններով սահմանված ծանուցումները, տեղեկացումները և ցանկացած այլ հաղորդակցումները հավաստող փաստաթղթերը և (կամ) նյութերը, ինչպես նաև սույն կանոնների համաձայն պայմանագրերի կնքման և հատուցման գործընթացում իրենց ներկայացված փաստաթղթերը և դրանց հիման վրա կազմված փաստաթղթերը Բյուրոյի, ՊԿԱ-ի և ԴՍԱ-ի մոտ պահպանվում են՝

1) գույքին պատճառված վնասներով հատուցումների դեպքում՝ հատուցման (տվյալ գործով վերջին հատուցման) վճարման ամսաթվից հետո՝ առնվազն 5 տարի ժամկետով,

2) անձնական վնասներով հատուցումների դեպքում՝ հատուցման (տվյալ գործով վերջին հատուցման) վճարման ամսաթվից հետո առնվազն 10 տարի ժամկետով,

3) այլ փաստաթղթերը՝ դրանց ներկայացման կամ կազմման ամսաթվից հետո՝ 5 տարի ժամկետով:

22. Ծանուցումները, տեղեկացումները և ցանկացած այլ հաղորդակցումները հավաստող փաստաթղթեր և (կամ) նյութեր են համարվում՝

1) ծանուցումը, տեղեկացումը և ցանկացած այլ հաղորդակցումն էլեկտրոնային փոստով ուղարկման դեպքում՝ համակարգչում և (կամ) փոստային սերվերում պահպանված՝ ուղարկված էլեկտրոնային ծանուցումը, որտեղ պետք է հստակ տեսանելի լինի, թե ում, երբ և ինչ տեղեկատվություն է ուղարկվել,

2) ծանուցումը, տեղեկացումը և ցանկացած այլ հաղորդակցումն ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ ստացման մասին հասցեատիրոջ ստորագրության նշումով ծանուցման մեկ օրինակը կամ պատճենը,

3) ծանուցումը, տեղեկացումը և ցանկացած այլ հաղորդակցումը պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ տվյալ ծանուցման գծով ստացված հետպատասխան տեղեկացման կտրոնը,

4) ծանուցումը, տեղեկացումը և ցանկացած այլ հաղորդակցումը տվյալ անձի համար ինտերնետային կայքում ստեղծված համապատասխան բաժնում տեղադրելու դեպքում՝ ծանուցումն իրականացրած անձի սերվերի և (կամ) համակարգչի վրա ծանուցումը տեղադրելը, ընթերցելը և դրանց ժամկետները հավաստող լոգերը~~, իսկ սույն կանոնների 11-րդ կետի 4)-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հեռախոսային ձայնագրությունը~~,

5) ծանուցումը, տեղեկացումը և ցանկացած այլ հաղորդակցումը հեռախոսազանգով իրականացնելու դեպքում՝ տվյալ հեռախոսազանգի ամբողջական ձայնագրությունը: Սույն կանոններով նախատեսված ծանուցումների, տեղեկացումների և ցանկացած այլ հաղորդակցումների, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի՝ սույն կանոններով նախատեսված ժամկետներում չպահպանելու բացասական հետևանքների ռիսկը կրում է տվյալ ծանուցումը, տեղեկացումը, ցանկացած այլ հաղորդակցումը և փաստաթուղթը պահպանելու պարտավորություն ունեցող անձը:

23. Սույն կանոններով նախատեսված այն դեպքերում, երբ ծանուցման պարտականություն ունեցող անձը համընկնում է ծանուցվող անձի հետ, այդ մասով ծանուցման պարտականությունը դադարում է:

24. Այն դեպքում, երբ սույն կանոնների համաձայն՝ Բյուրոյի կամ Ապահովագրողների կողմից ծանուցման ենթակա փաթեթում ներառված են լուսանկարներ և (կամ) տեսանյութեր, որոնք պարունակում են տվյալ գործընթացում ներգրավված անձանցից բացի այլ ֆիզիկական անձանց վերաբերյալ ակնհայտ գաղտնիք պարունակող պատկերներ, ապա տվյալ մասը պետք է տեխնիկական եղանակով անհասանելի դարձվի հասցեատերերի համար:

25. ԱՊՊԱ ոլորտում կիրառվում են սույն կանոնների **Հավելված 1**-ով սահմանված հետևյալ տիպային ձևերը՝

| | |
|---|---|
| Ձև 1 | Ձև 1.1՝ Վկայագրի ձևը |
| | Ձև 1.2՝ Ապահովագրավճարի հերթական մասի վճարման և դրա չվճարման հետևանքների վերաբերյալ հիշեցում-ծանուցում |
| | Ձև 1.3՝ ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման արդյունքում վերադարձվող (վճարման ենթակա) ապահովագրավճարի հաշվարկ – ծանուցում |
| | Ձև 1.4՝ ԱՊՊԱ վճարման կտրոնը |
| | Ձև 1.5՝ ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ դիմում |
| Ձև 2 | Ձև 2.1՝ Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում |
| | Ձև 2.1.1՝ Վնասված գույքի առանձնացված գնահատում իրականացնելու վերաբերյալ դիմում |
| | Ձև 2.2՝ Անձնական վնասների գծով ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում |

| | |
|---|---|
| | Ձև 2.3՝ Ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում |
| | Ձև 2.4՝ Ապահովագրական հատուցման գործընթացը դադարեցնելու վերաբերյալ ծանուցում |
| | Ձև 2.5՝ Ապահովագրական հատուցում ստանալու համար ներկայացման ենթակա և դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկ |
| | Ձև 2.6՝ Ապահովագրական հատուցման գործընթացը կասեցնելու վերաբերյալ ծանուցում *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)* *(Ձև 2.6 ուժի մեջ կմտնի համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրազեկվի:)* |
| Ձև 3 | Պատահարում կողմերի մեղավորության մասով նախնական նշումների վերաբերյալ համաձայնություն ստանալու վերաբերյալ հարցում |
| Ձև 4 | Ձև 4.1՝ Առաջնային (լրացուցիչ) փորձաքննություն կատարելու վերաբերյալ պատվեր *(պայմանագրից փորձագետին)* |
| | Ձև 4.1.1՝ Առաջնային (լրացուցիչ) փորձաքննություն կատարելու վերաբերյալ պատվերին ընթացք չտալու վերաբերյալ դիմում *(պայմանագրից փորձագետին)* |
| | Ձև 4.1.2՝ Հետքաբանական և (կամ) նյութագիտական փորձաքննություն կատարելու վերաբերյալ պատվեր *(պայմանագրից փորձագետին)* |
| | Ձև 4.2՝ Կրկնակի փորձաքննություն կատարելու վերաբերյալ պատվեր *(պայմանագրից փորձագետին)* |
| | Ձև 4.2.1՝ Կրկնակի փորձաքննություն կատարելու վերաբերյալ պատվերին ընթացք չտալու վերաբերյալ դիմում *(պայմանագրից փորձագետին)* |
| Ձև 5 | Ձև 5.1՝ Պատահարի առաջացման պատճառների առաջնային (լրացուցիչ) փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն |
| | Ձև 5.1.1՝ Պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն |
| | Ձև 5.1.2՝ Հետքաբանական և (կամ) նյութագիտական փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն |
| | Ձև 5. 2՝ Վնասների գնահատման առաջնային (լրացուցիչ) փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն |
| | Ձև 5.2.1՝ Վնասների գնահատման կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետի եզրակացություն |
| | Ձև 5. 3՝ Վնասված գույքը զննության ներկայացնելու վերաբերյալ փորձագետից ծանուցում |
| | Ձև 5. 4՝ Գույքին պատճառված վնասների գնահատման համար իրականացված զննության արձանագրություն |
| Ձև 6 | Փորձաքննության անհնարինության ծանուցում |
| Ձև 7 | Ձև 7.1՝ Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշում-ծանուցում *(կիրառելի է Պարզեցված հայտուցման գործընթացի դեպքում)* |
| | Ձև 7.2՝ Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշում-ծանուցում *(կիրառելի է Ստանդարտ հայտուցման հայտուցման գործընթացի դեպքում)* |

| | |
|---|---|
| | Ձև 7.3՝ Ապահովագրական հատուցումը մերժելու վերաբերյալ որոշում-ծանուցում |
| Ձև 8 | Ձև 8.1՝ Լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում |
| | Ձև 8.2՝ Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում |
| | Ձև 8.3՝ Կրկնակի (լրացուցիչ) փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում |
| | Ձև 8.4՝ Կրկնակի փորձաքննության դիմումն ստացված լինելու մասին ծանուցում |
| | Ձև 8.5՝ Գույքի վերանորոգման տարբերակ ընտրելու մասին դիմում |
| Ձև 9 | Ձև 9.1՝ Կրկնակի (լրացուցիչ) փորձաքննության նշանակման (մերժման (չնշանակման)) վերաբերյալ ծանուցում *(փոփ. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | Ձև 9.2՝ Կրկնակի փորձաքննության արդյունքների ծանուցում |
| Ձև 10 | Ապահովագրական հատուցման վճարման վերաբերյալ ծանուցում ԴՍԱ-ից ՀՊԱ-ին (ՀՊԱ-ներին) |
| Ձև 11 | Հայտարարություն տեղեկատվության ճշգրտման վերաբերյալ |
| Ձև 12 | ԱՄՄՊ համակարգում օգտատիրոջ հաշվից օգտվելու վերաբերյալ պարտավորագիր *(լրաց. է 02/03/2020թ թիվ 8-Լ)* |

26. Սույն գլխով նախատեսված բոլոր տիպային ձևերում արտացոլված՝

1) տեղեկությունների տրամադրումը և (կամ) փաստաթղթերի կցումը համարվում է սույն կանոններով նախատեսված պարտադիր պահանջ համապատասխան փաստաթուղթը ներկայացնող (ծանուցող) անձի համար, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով կամ տվյալ տիպային ձևում,

2) բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման, ընդ որում՝ եթե կոնկրետ տողը կամ դաշտը նախատեսված է միայն կոնկրետ դեպքերում լրացման համար, ապա այդ տողը կամ դաշտը փաստաթղթում փաստացի արտացոլվում և լրացվում է միայն համապատասխան դեպքերում: Ապահովադրի, Ապահովագրված անձի և տուժողի՝ սույն կանոնների 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն ուղարկած կամ ԱՄՄՊ համակարգի միջոցով ստեղծված կամ Բյուրոյի և Ապահովագրողների պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված կամ ԱՄՄՊ միջոցով Բյուրոյի և Ապահովագրողների միջև և (կամ) փորձագետների հետ փոխանակված փաստաթղթերի՝ ստորագրության համար նախատեսված դաշտերում կարող է արտացոլվել միայն տվյալ անձի անունը (անվանումը). նման փաստաթղթերը համարվում են տվյալ անձի (նրա անունից համապատասխան փաստաթուղթն ստորագրելու իրավասություն ունեցող անձի) կողմից փաստացի ստորագրված (ունեն նույն իրավական ուժը)՝ էլեկտրոնային փոստով ուղարկվելու (ԱՄՄՊ միջոցով ստեղծվելու և (կամ) փոխանցվելու) ուժով: Սույն ենթակետով նախատեսված փաստաթղթերի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով ԱՄՄՊ համակարգում թույլատրվում է միայն այն օգտատերերի գործունեությունը, որոնք ստորագրել են սույն կանոնների Ձև 12-ով սահմանված օրինակելի ձևին համապատասխան պարտավորագիր և դրանք ներկայացրել են համապատասխան Ապահովագրողին (Բյուրոյին), իսկ փորձագետները՝ Բյուրոյին: Բյուրոն կարող է սահմանել ԱՄՄՊ համակարգի էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված և (կամ) ԱՄՄՊ համակարգի միջոցով ստեղծված փաստաթղթերի

պաշտպանվածությանը, նշված համակարգի էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկված կամ դրա միջոցով ստեղծված լինելու փաստի հավաստմանը ներկայացվող տեխնիկական պահանջներ, ԱՄՄՊ համակարգի միջոցով փաստաթղթերն ստեղծող կամ ուղարկող (փոխանակող) անձանց կողմից այդ կապակցությամբ կատարվող հաստատումներին ներկայացվող պահանջներ: Նման պահանջները և, կիրառելիության դեպքում, դրանց ստուգման ուղեցույցը ներկայացվում են ԱՄՄՊ սպասարկող կազմակերպության կողմից և համաձայնեցվում Բյուրոյի գործադիր տնօրենի հետ, որից հետո հրապարակվում են Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքում, *(փոփ. և լրաց. է 02/03/2020թ թիվ 8-Լ և փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

3) տեքստը կազմվում է համակարգչի առնվազն 10 տառաչափով՝ բացառությամբ տիպային օրինակներով նախատեսված տողատակի նշումների, որոնք պետք է լինեն առնվազն 8 տառաչափով:

27. Բյուրոն և Ապահովագրողներն իրենց պաշտոնական ինտերնետային կայքերում Word կամ Excell տարբերակով մշտապես ապահովում են ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացում սույն կանոններով նախատեսված այն տիպային ձևերի հրապարակումը՝ յուրաքանչյուրն իր մասով լրացված վավերապայմանների նշումով, որոնք ենթակա են լրացման և (կամ) ներկայացման Ապահովադիրների, Ապահովագրված անձանց և (կամ) տուժողների կողմից:

28. Ապահովագրողներն իրենց պաշտոնական ինտերնետային կայքերում մշտապես հրապարակում են հետևյալ տեղեկատվությունը՝ հնարավորություն ընձեռելով Ապահովադիրներին այդ տեղեկատվությունը հաշվի առնել Ապահովագրողի ընտրություն իրականացնելիս.

1) իրենց հետ համագործակցող՝ առնվազն 3 վերանորոգող կազմակերպությունների ցանկը, որոնցից իրենք և իրենց հետ համագործակցող փորձագետներն օգտվում են սույն կանոններով նախատեսված գույքին պատճառված վնասների գնահատման և այդ վնասների վերականգնման կազմակերպման գործընթացներում,

2) ԱՊՊԱ ոլորտում իրենց գծով ներկայացված բողոքների և (կամ) գործարար վարվելակերպի, սպառողների սպասարկման որակը բնութագրող այլ ցուցանիշների վերաբերյալ կիսամյակային վիճակագրություն՝ Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված ձևաչափով՝ թարմացված մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա վերջին օրը: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

29. Սույն կանոններով նախատեսված՝ ծանուցվող անձանց գործողությունների և իրավունքների ուղեցույցը հաստատվում է Բյուրոյի գործադիր տնօրենի կողմից՝ հիմք ընդունելով Օրենքով, այլ իրավական ակտերով և Բյուրոյի կանոններով նախատեսված կարգավորումները: Սույն կետում նշված ուղեցույցը մշտապես հրապարակվում է Բյուրոյի և Ապահովագրողների պաշտոնական ինտերնետային կայքերում:

30. Բյուրոն, Ապահովագրողները և փորձագետներն ԱՊՊԱ ոլորտում իրավունք չունեն օգտագործել սույն գլխով նախատեսված տիպային ձևերից տարբերվող ցանկացած այլ փաստաթղթեր՝ անկախ դրանց օգտագործման նպատակից, իսկ օգտագործվելու դեպքում այդպիսի փաստաթղթերը որևէ իրավական հետևանք չեն առաջացնում, բացառությամբ սույն կանոնների 31-րդ կետով նախատեսված դեպքերից:

31. Բյուրոն, Ապահովագրողները և փորձագետներն ԱՄՄՊ միջոցով միմյանց միջև հաղորդակցվելիս սույն գլխով նախատեսված տիպային ձևերը կարող են փոխարինել այդ հարթակներով նախատեսված համապատասխան գործողություններով և (կամ)

ծանուցումներով, եթե այդ ձևերը նախատեսված չեն այլ անձանց հետագա ծանուցման համար: *(փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

32. ՊԿԱ-ն, ԴՍԱ-ն կամ ՀՊԱ-ն Ապահովադրից, Ապահովագրված անձից կամ տուժողից սույն գլխով նախատեսված ձևերից տարբերվող ձևերով դիմումներ ստանալու դեպքում պարտավոր են 1 օրվա ընթացքում տեղեկացնել վերջինին համապատասխան դիմումը ընդունված չհամարելու և սահմանված ձևով ներկայացնելու անհրաժեշտության մասին՝ կցելով համապատասխան դիմումի տիպային օրինակը: Ընդ որում, ՊԿԱ-ի, ԴՍԱ-ի կամ ՀՊԱ-ի կողմից սույն կետով սահմանված պարտավորությունը չկատարվելու դեպքում համապատասխան անձի կողմից իրեն ներկայացման ենթակա դիմումները համարվում են պատշաճ ձևով ներկայացված, և պարտավորությունը խախտած Ապահովագրողը կրում է դիմումը սահմանված ձևով ներկայացված չլինելու արդյունքում առաջացող բացասական հետևանքների ռիսկը: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

33. Սույն կանոնների համաձայն Ապահովադիրներին, Ապահովագրված անձանց և տուժողներին վճարման ենթակա ապահովագրական հատուցումները, վերադարձման ենթակա ապահովագրավճարները, կրկնակի փորձաքննության վճարների մասով վերադարձման ենթակա գումարները, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրերի սպասարկման գործընթացում առաջացած ցանկացած այլ վճարումները (գումարի վերադարձները) կատարվում են հետևյալ կարգով.

1) եթե վճարումը պետք է կատարվի համապատասխան ԱՊՊԱ պայմանագրում նշված՝ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի գծով տվյալ պայմանագրով Ապահովադիր հանդիսացող անձին, ապա գումարը փոխանցվում է այդ Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ վերջին անգամ կնքված ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրում նշված՝ Ապահովադրի կամ վերջինի (ֆիզիկական անձ հանդիսանալու դեպքում) կողմից նոտարական կարգով վավերացված լիազորագրով համապատասխան գումարների ստացման համար լիազորված անձի (այսուհետ՝ սույն կետում Լիազորված անձ) բանկային հաշվին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է Ապահովադրին՝ վերջինի հետ համաձայնեցված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող կարգով,

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված դեպքերում գումարը փոխանցվում է համապատասխան գործընթացի շրջանակներում տվյալ անձի կողմից ներկայացված դիմումում նշված բանկային հաշվեհամարին, իսկ ապահովագրական հատուցումից տարբերվող գործընթացի շրջանակներում այդպիսի հաշվեհամար չներկայացվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետությունում տվյալ անձի հաշվառման մարզում (եթե գումար ստացողը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում) առնվազն մեկ մասնաճյուղ ունեցող և տվյալ բանկի ցանկացած մասնաճյուղից գումարի վճարման հնարավորությամբ օժտված որևէ առևտրային բանկում վճարում կատարող Բյուրոյի կամ Ապահովագրողի կողմից բացված հաշվեհամարին՝ ստացող անձի անվան (անվանման) և անձը հաստատող փաստաթղթի (ՀՎՀՀ-ի) նշումով և տվյալ բանկի ցանկացած մասնաճյուղից ստացող անձին վճարելու հանձնարարականով:

34. Եթե սույն կանոնների 33-րդ կետով նախատեսված եղանակով գումարը վճարելուց հետո գումարը վճարած Բյուրոյին կամ Ապահովագրողին ներկայացվում են ապացույցներ՝ առ այն, որ անձը, ում անվամբ կատարվել է վճարումը, վճարելու պահի դրությամբ մահացած (վերակազմակերպված) է եղել, ապա համապատասխան գումարը

ենթակա է վճարման այդ անձի իրավահաջորդին, բացառությամբ այն դեպքերի, երբ արդեն վճարված գումարը փաստացի ստացվել է որևէ երրորդ անձի կողմից:

## ԳԼՈՒԽ 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՈՂՄԵՐԸ

35. ԱՊՊԱ պայմանագրի կողմեր են համարվում Վկայագրի համապատասխան դաշտերում նշված Ապահովագրողը և Ապահովադիրը: Սույն կանոնների և Վկայագրի դրույթներն ու պահանջները պարտադիր են պայմանագրի կողմերի համար: Այն դեպքում, երբ Ապահովադիրն Ավտոտրանսպորտային միջոցը վարման է հանձնում այլ անձի, ապա Ապահովադիրը պարտավոր է վերջիններին տեղեկացնել սույն կանոններով նախատեսված պարտավորությունների անվերապահ կատարման մասին: Նման պարտավորությունների չկատարման առնչությամբ ապահովագրական հատուցումների հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը կրում է Ապահովադիրը՝ բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

## ԳԼՈՒԽ 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

36. ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրության օբյեկտ են համարվում Ապահովադրի (Ապահովագրված անձի) այն գույքային շահերը, որոնք կապված են Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող Ապահովադրի (Ապահովագրված անձի) քաղաքացիական պատասխանատվության հետ, որն առաջանում է Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից տուժողին կամ նրա գույքին պատճառված Օրենքով և սույն կանոններով սահմանված վնասների գծով:

# ԲԱԺԻՆ 2. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

## ԳԼՈՒԽ 5. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

37. ԱՊՊԱ պայմանագրերը կնքվում են անձի բանավոր կամ գրավոր դիմումի (պահանջի)՝ ներառյալ համապատասխան էլեկտրոնային միջավայրում կատարված հարցման համաձայն և Օրենքի և սույն կանոնների շրջանակներում նրա համար նախընտրելի պայմաններով, բացառությամբ ապահովագրավճարի վճարման կարգին և ժամկետին վերաբերող պայմանի, որը համաձայնեցվում է կողմերի միջև: Ապահովագրողները պարտավոր են անձի պահանջը և սույն կանոններով նախատեսված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալուց անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան՝ մինչև հինգ Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրի կնքման դեպքում 1 օրվա ընթացքում, իսկ հինգ և ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության պայմանագրերի կնքման դեպքում՝ 3 օրվա ընթացքում, վերջինիս հետ կնքել ԱՊՊԱ պայմանագիր կամ 2 օրվա ընթացքում գրավոր պատասխանել մերժման մասին՝ նշելով նաև մերժման հիմնավորումները:

38. Ապահովագրողները պարտավոր են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում գրանցված՝ իրենց անունից ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող առևտրային բանկերի և «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ ցանցային վաճառքներ կազմակերպող ապահովագրական գործակալներ) հետ ունենալ գրավոր համաձայնություն հետևյալի վերաբերյալ.

1) տվյալ ապահովագրական գործակալը պարտավոր է ցանկացած այլ Ապահովագրողի կողմից պահանջ ներկայացվելու դեպքում նրա հետ կնքել ԱՊՊԱ

ոլորտում ապահովագրական միջնորդային գործունեության իրականացման պայմանագիր,

2) տվյալ ապահովագրական գործակալը պարտավոր է ԱՊՊԱ պայմանագիր կնքել Ապահովադրի նախընտրած Ապահովագրողի անունից, եթե վերջինի հետ ունի ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական միջնորդային գործունեության իրականացման պայմանագիր:

39. Ապահովագրական գործակալի կողմից սույն կանոնների 38-րդ կետով սահմանված որևէ պահանջի խախտման դեպքում Ապահովագրողները պարտավոր են Բյուրոյի հետ համաձայնեցված կարգով դադարեցնել տվյալ ապահովագրական գործակալի հետ կնքված պայմանագիրը՝ ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական միջնորդային գործունեության իրականացման մասով:

40. ԱՊՊԱ պայմանագրերը կարող են կնքվել՝

1) Ապահովագրողների կողմից անձամբ կամ իրենց կողմից լիազորված անձանց (ներառյալ ապահովագրական գործակալների) միջոցով, կամ՝

2) սույն կանոններով նախատեսված կարգով և դեպքերում՝ Ապահովադրի կողմից առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով՝ ներառյալ ինտերնետային կայքի, վճարային համակարգերի, տերմինալների միջոցով և բջջային հավելվածներով (այսուհետ՝ առցանց էլեկտրոնային եղանակով կնքում): Ընդ որում՝ առցանց էլեկտրոնային եղանակով կնքվող պայմանագրերը համարվում են առանց ապահովագրական գործակալի միջնորդության կնքված պայմանագրեր:

41. Ապահովագրողի կողմից պատշաճ լիազորված անձի՝ ներառյալ ապահովագրական գործակալի հետ կնքված, ինչպես նաև առցանց էլեկտրոնային եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագիրն Ապահովադրի տեսանկյունից բոլոր դեպքերում համարվում է տվյալ Ապահովագրողի հետ պատշաճ կնքված ԱՊՊԱ պայմանագիր, և Ապահովագրողի լիազորված անձի կողմից իր լիազորությունների շրջանակն անցնելու, զեղծարարության, պայմանագիրն ԱՄՄՊ-ի միջոցով չկնքվելու կամ ցանկացած պատճառով փաստացի չհաշվառվելու և նմանատիպ այլ հանգամանքների բացասական հետևանքների ռիսկը կրում է Ապահովագրողը, բացառությամբ սույն կանոնների 47-րդ կետի համաձայն Ապահովադրի վրա դրված ռիսկերի:

42. Վկայագրի ձևը և հավելվածը, իսկ սույն կանոններով նախատեսված դեպքերում և կարգով կանխիկի ընդունման վճարային տերմինալների միջոցով ԱՊՊԱ պայմանագիրն առցանց էլեկտրոնային տարբերակով կնքվելու դեպքում՝ տրամադրվող ԱՊՊԱ վճարման կտրոնի ձևը սահմանված են սույն կանոնների **Հավելված 1**-ով (**Ձև 1.1՝** Վկայագրի ձևը և հավելվածը, **Ձև 1.4՝** ԱՊՊԱ վճարման կտրոնը): Վկայագիրը կազմելու տեխնիկական պահանջները և Վկայագիրը լրացնելու հրահանգը, ԱՊՊԱ վճարման կտրոնը լրացնելու հրահանգը, ԱՊՊԱ պայմանագրի կնքման ժամանակ պահանջվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի ձևը սահմանված են սույն կանոնների **Հավելված 2**-ով (**Հավելված 2.1**՝ Վկայագիրը կազմելու տեխնիկական պահանջները և Վկայագիրը լրացնելու հրահանգը, **Հավելված 2.1.1**՝ ԱՊՊԱ վճարման կտրոնը լրացնելու հրահանգը, **Հավելված 2.2**՝ ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, **Հավելված 2.3**՝ ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագրի ձևը): Ապահովագրողին (ներառյալ իր լիազորված անձի կամ

ապահովագրական գործակալի միջոցով) արգելվում է ԱՊՊԱ պայմանագիր կնքելու համար իրեն դիմած անձից պահանջել **Հավելված 2.2**-ով չնախատեսված տեղեկություններ կամ փաստաթղթեր կամ այդպիսի տեղեկությունների (փաստաթղթերի) ներկայացումը համարել ԱՊՊԱ պայմանագրի կնքման նախապայման կամ այդպիսի տեղեկությունների (փաստաթղթերի) չներկայացման հիմնավորմամբ ԱՊՊԱ պայմանագիրը կնքել Ապահովադրի վիճակը վատթարացնող պայմաններով:

43. Վկայագրի դաշտերը լրացվում են սույն կանոններով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված և Ապահովադրի կողմից ներկայացված (հայտարարված) տեղեկությունների հիման վրա: ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար սույն կանոններով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված տեղեկությունները, ինչպես նաև ապահովագրավճարի հաշվարկման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացում իրական ժամանակի ռեժիմում ստացվում են ԱՄՄՊ-ի միջոցով, եթե վերջինն ինտեգրված է այլ համապատասխան տեղեկատվական համակարգերի հետ, այդ համակարգերը ներառում են պահանջվող համապատասխան տեղեկատվությունը, և ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին առկա չեն տեխնիկական խոչընդոտներ նշված տվյալների ստացման համար: Ընդ որում, նման դեպքերում Ապահովագրողը ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար պարտավոր է հիմք ընդունել ԱՄՄՊ-ի միջոցով ստացված տվյալները՝ անկախ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում արտացոլված տեղեկությունների հետ դրանց անհամապատասխանության հանգամանքից: Բոլոր դեպքերում, որպես Ապահովադրի Բոնուս-Մալուս դաս հիմք է ընդունվում ԱՄՄՊ-ից ստացված տեղեկատվությունը: Եթե ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին ԱՄՄՊ-ում առկա են տեխնիկական խոչընդոտներ ինտեգրված այլ համապատասխան տեղեկատվական համակարգերում առկա արդիական տվյալների ստացման համար, ապա ԱՄՄՊ-ի կողմից ներկայացվում է համապատասխան խոչընդոտների առկայության վերաբերյալ տեղեկատվություն, իսկ ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է բացառապես, եթե Ապահովադրի և Ապահովագրողի կողմից հանդես եկող անձի (առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագրերի կնքման դեպքերում միայն Ապահովադրի) կողմից հաստատվում է, որ ԱՄՄՊ-ում արտացոլված տեղեկատվությունը համապատասխանում է Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում առկա տեղեկատվությանը: *(լրաց. է 30/06/2020թ թիվ 22-Լ)*

44. ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է Ապահովադրի համար նախընտրելի՝ Օրենքով թույլատրված ժամկետով, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում չհաշվառված Ավտոտրանսպորտային միջոցների համար կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի, որոնք կարող են կնքվել նվազագույնը տասն օր ժամկետով:

45. ԱՄՄՊ համակարգում Վկայագրին կցվում են Ապահովադրի կողմից ներկայացված և սույն կանոններով նախատեսված այն փաստաթղթերի լուսապատճենները, որոնք հիմք են հանդիսացել Վկայագրի համապատասխան դաշտերի լրացման համար: Սույն կետով սահմանված պահանջը չի տարածվում առցանց էլեկտրոնային եղանակով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի վրա, ինչպես նաև այն պայմանագրերի վրա, որոնց Վկայագրում տեղեկատվության լրացման համար հիմք են հանդիսացել սույն կանոններով սահմանված կարգով ԱՄՄՊ-ից ինքնաշխատ

ստացված տվյալները (համապատասխան տվյալների մասով), որոնց դեպքում համապատասխան փաստաթղթերի լուսապատճենները չեն կցվում:

46. ԱՊՊԱ պայմանագիրը կարող է կնքվել առցանց էլեկտրոնային եղանակով, եթե բավարարված են հետևյալ պայմանները միաժամանակ՝

1) (ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 27/04/2021թ թիվ 13-Լ որոշմամբ):

2) առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագրի կնքման հնարավորություններն Ապահովագրողի կողմից սահմանափակված չեն Օրենքով և սույն կանոններով նախատեսված Ապահովադիրների և ավտոտրանսպորտային միջոցների որևէ խմբի, ավտոտրանսպորտային միջոցների օգտագործման նպատակի, պայմանագրի գործողության ժամկետի և ապահովադրի համար նախընտրելի ցանկացած այլ պայմանով կնքման համար՝ բացառությամբ ապահովագրավճարի վճարման կարգին և ժամկետին վերաբերող պայմանի,

3) ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված և ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար անհրաժեշտ տեղեկությունները կարող են ստացվել ԱՄՄՊ-ի միջոցով՝ ներառյալ վերջինին ինտեգրված այլ համապատասխան տեղեկատվական համակարգերից այդ տվյալների ստացման միջոցով: Սույն ենթակետով նախատեսված պայմանը չի տարածվում այն Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի վրա, որոնք հաշվառված չեն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում,

4) ԱՊՊԱ պայմանագրի կնքման գործընթացում՝ Ապահովագրողի ընտրության էջում Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված ձևաչափով ապահովվում է Ապահովադրի հասանելիությունը ԱՊՊԱ ոլորտում բոլոր Ապահովագրողների դեմ ներկայացված բողոքների և (կամ) գործարար վարվելակերպի, սպառողների սպասարկման որակը բնութագրող այլ ցուցանիշների վերաբերյալ կիսամյակային վիճակագրությանը՝ ըստ յուրաքանչյուր Ապահովագրողի:

47. ԱՊՊԱ պայմանագիրն առցանց էլեկտրոնային եղանակով կնքվելու դեպքում սույն կանոններով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվում ՊԿԱ-ին, և դրանց տիրապետելու և այդ տվյալներն առցանց մուտքագրելու միջոցով Օրենքի համաձայն Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասություն ունենալու համապատասխան հիմքերի առկայության, ինչպես նաև մուտքագրվող տվյալների՝ իրականությանը համապատասխանելու համար պատասխանատվությունը (բացասական հետևանքների ռիսկը) կրում է Ապահովադիրը: Ընդ որում, առցանց էլեկտրոնային եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագիրը բոլոր դեպքերում համարվում է անձամբ Ապահովադրի կողմից կնքված՝ անկախ այն հանգամանքից, թե համապատասխան տվյալները փաստացի ում կողմից է մուտքագրվել, կամ պայմանագրի դիմաց վճարումն ում կողմից է կատարվել: *(լրաց. է 27/04/2021թ թիվ 13-Լ)*

48. Վկայագրի էլեկտրոնային տարբերակը ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահից անմիջապես հետո, բայց ոչ ուշ, քան 10 րոպեի ընթացքում ուղարկվում է Ապահովադրի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ կանխիկի ընդունման վճարային տերմինալների միջոցով ԱՊՊԱ պայմանագիրն առցանց էլեկտրոնային տարբերակով կնքվելու դեպքում կնքման պահին անձին տերմինալի միջոցով տրամադրվում է նաև սույն կանոններով նախատեսված ԱՊՊԱ վճարման կտրոն: Ընդ որում՝ ԱՊՊԱ

պայմանագիրն առցանց էլեկտրոնային տարբերակով կնքվելու դեպքում պայմանագրի կնքման պահ է համարվում համապատասխան էլեկտրոնային միջավայրում գործարքի հաստատման մասին հաղորդագրության արտացոլման պահը: *(փոփ. է 02/03/2020 թիվ 8-Լ և 28/04/2020թ թիվ 10-Լ)*

49. ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո Վկայագրի հետ միասին Ապահովադրին (նրա կողմից լիազորված անձին) տրվում է Բյուրոյի կայքում հրապարակված համաձայնեցված հայտարարագրի նմուշը: Առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում համաձայնեցված հայտարարագրի էլեկտրոնային տարբերակն ուղարկվում է Ապահովադրի պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին՝ Վկայագրի էլեկտրոնային տարբերակի հետ միասին: Ապահովադիրը (նրա կողմից լիազորված անձը) իրավունք ունի պայմանագրի գործողության ընթացքում ցանկացած ժամանակ դիմել իր ՊԿԱ-ին (գլխամասային գրասենյակ կամ մասնաճյուղեր կամ նրա ցանկացած ապահովագրական գործակալին)՝ համաձայնեցված հայտարարագրի թղթային նմուշ ստանալու նպատակով: Բոլոր դեպքերում ցանկացած անձ համաձայնեցված հայտարարագրի նմուշը կարող է ներբեռնել Բյուրոյի պաշտոնական կայքից: Բյուրոն իր կայքում մշտապես ապահովում է համաձայնեցված հայտարարագրի նմուշի և դրա լրացման հրահանգի հրապարակումը: *(փոփ. է 28/04/2020թ թիվ 10-Լ)*

50. ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են ՊԿԱ-ի և Ապահովադրի միջև **Հավելված 2.3**-ով սահմանված ձևով համաձայնագիր կնքելու միջոցով, որի նկատմամբ, կիրառելիության դեպքում, տարածվում են ԱՊՊԱ պայմանագրի կնքման նկատմամբ սահմանված պահանջները, բացառությամբ առցանց էլեկտրոնային եղանակով կնքմանը վերաբերող դրույթների: Ընդ որում, կնքված ԱՊՊԱ պայմանագրում փոփոխման ենթակա չէ Ապահովադիրը և ՊԿԱ-ն, իսկ 2018 թվականի փետրվարի 14-ին և դրանից հետո կնքված պայմանագրերի գծով՝ նաև պայմանագրի գործողության ժամկետը: Այն դեպքում, երբ Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի փոփոխության մասին ՊԿԱ-ն տեղեկատվություն է ստանում ԱՄՄՊ-ի միջոցով, նշված փոփոխությամբ պայմանավորված՝ ԱՊՊԱ պայմանագրում փոփոխության կատարումը համարվում է պայմանագրի կողմերի միջև գրավոր համաձայնեցված ՊԿԱ-ի՝ փոփոխության փաստացի տիրապետելու և համաձայնագրի էլեկտրոնային տարբերակը սահմանված կարգով Ապահովադրին ծանուցելու պահից:

* *Կարմիր գունավորմամբ նշված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրազեկվի:*

## ԳԼՈՒԽ 6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ԱՍՏԻՃԱՆԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

51. ԱՊՊԱ պայմանագրի համաձայն՝ ապահովագրական պատահար (ԱՊՊԱ պատահար) է համարվում Ապահովադրի և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցն (միջոցներն) օրինական հիմքերով տիրապետող այլ անձի (անձանց) կողմից տվյալ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքում Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով տուժող անձին (անձանց) հետևյալ վնասների պատճառումը.

1) անձնական վնասներ, որոնք ներառում են տուժողի առողջությանը պատճառված վնասները և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտները), ինչպես նաև տուժողի մահը,

2) գույքին պատճառված վնասներ, որոնք ներառում են տուժողի ավտոտրանսպորտային միջոցի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, տուժողին պատկանող այլ գույքի վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը, ինչպես նաև վնաս պատճառող Ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող և սեփականության իրավունքով տուժողին պատկանող գույքին պատճառված վնասվածքը, ոչնչացումը կամ կորուստը:

52. ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է ՊԿԱ-ին ոչ ուշ, քան 10 օրվա ընթացքում, իսկ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակի փոփոխման վերաբերյալ՝ նախապես, հայտնել ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս սույն կանոններով նախատեսված՝ Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերում ներառված և (կամ) Ապահովադրի կողմից ներկայացված (հայտարարված) այն տեղեկություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք հիմք են ընդունվել ԱՊՊԱ պայմանագրի կնքման (փոփոխության) համար, եթե այդ փոփոխությունները կարող են որակապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ընդ որում, սույն գլխի իմաստով՝ ապահովագրական ռիսկի մեծանալու վրա որակապես ազդող փոփոխություններ են համարվում այն փոփոխությունները, որոնց պայմաններում ԱՊՊԱ պայմանագրի կնքման (փոփոխության) դեպքում ենթակա կլիներ վճարման ավելի բարձր ապահովագրավճար: ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը պարտավոր է ՊԿԱ-ին սույն կետում նախատեսված ժամկետում հայտնել նաև Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի փոփոխության մասին և ՊԿԱ-ի հետ կնքել Վկայագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիր, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան փոփոխության մասին տեղեկատվությունը ՊԿԱ-ն ստացել է ԱՄՄՊ-ի միջոցով, և նշված համաձայնագրի էլեկտրոնային տարբերակը սահմանված կարգով ծանուցել է Ապահովադրին:

** Կարմիր գունավորմամբ նշված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրազեկվի:*

53. Բոլոր դեպքերում ապահովագրական ռիսկի մեծանալու կամ նվազելու վրա որակապես ազդող փոփոխություն չի համարվում ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադրի Բոնուս-Մալուս դասի փոփոխությունը:

54. Ապահովագրական ռիսկի փոփոխման վրա որակապես ազդող փոփոխության մասին տեղեկացված ՊԿԱ-ն կամ Ապահովադիրն իրավունք ունեն միմյանցից պահանջելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, Օրենքի և սույն կանոնների շրջանակներում փոփոխել Վկայագրի պայմանները կամ ճշգրտել ապահովագրավճարի չափն ԱՊՊԱ պայմանագրի գործողության մնացած ժամանակահատվածի համար:

55. Ապահովադրի կողմից սույն գլխով սահմանված տեղեկացման պարտականությունը պատշաճ կերպով չկատարվելու դեպքում փոփոխված հանգամանքները համարվում են առկա ԱՊՊԱ պայմանագիրը կնքելու պահից, որոնց մասին սուտ տեղեկություններ հայտնած Ապահովադիրը կրում է սույն կանոններով նախատեսված պատասխանատվությունը:

## ԳԼՈՒԽ 7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ ՉՀԱՄԱՐՎՈՂ ԴԵՊՔԵՐԸ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ

56. ԱՊՊԱ պատահար չեն համարվում և ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում ենթակա չեն հատուցման Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման հետևանքով հետևյալ վնասների պատճառումը՝

1) անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

2) ահաբեկչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,

3) վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,

4) տուժողի դիտավորության հետևանքով տվյալ տուժողին պատճառված վնասները,

5) պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,

6) արվեստի գործերին, թանկարժեք զարդերին, քարերին կամ մետաղներին պատճառված վնասները,

7) բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները,

8) օրենքով նախատեսված այլ վնասներ:

57. Ապահովագրական պատահարի ժամանակ տվյալ ԱՊՊԱ պայմանագրով տուժող չեն համարվում և դրա շրջանակներում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չեն օգտվում՝

1) Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը և պատահարի պահին այն տիրապետող այլ անձը, ինչպես նաև Ապահովադիրը,

2) անձինք, ովքեր գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած Ավտոտրանսպորտային միջոցի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք տեղյակ չեն եղել, որ Ավտոտրանսպորտային միջոցը հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած է եղել, կամ Ավտոտրանսպորտային միջոցի մեջ գտնվել են իրենց կամքին հակառակ.

3) Ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները՝ գույքին պատճառված վնասների մասով:

58. ԱՊՊԱ ոլորտում չհատուցվող գումարի չափը 0 ՀՀ դրամ է:

## ԳԼՈՒԽ 8. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ

59. Ապահովագրական գումարը ապահովագրական պատահարի դեպքում Ապահովագրողի կողմից տուժողին կամ Օրենքով և (կամ) սույն կանոններով նախատեսված դեպքերում այլ անձանց վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է:

60. ԱՊՊԱ պայմանագրով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի հետ կապված ապահովագրական գումարը մեկ ապահովագրական պատահարի հետևանքով յուրաքանչյուր տուժողին պատճառված վնասների գծով կազմում է՝

1) անձնական վնասների համար՝ երեք միլիոն երեք հարյուր հազար ՀՀ դրամ,

2) գույքին պատճառված վնասների համար՝ մեկ միլիոն ութ հարյուր հազար ՀՀ դրամ:

61. ԱՊՊԱ պայմանագրով մեկ ապահովագրական պատահարի հետևանքով բոլոր տուժողներին պատճառված վնասների հանրագումարի գծով ապահովագրական գումարը կազմում է՝

1) անձնական վնասների համար՝ երեսուներեք միլիոն ՀՀ դրամ,

2) գույքին պատճառված վնասների համար՝ տասնութ միլիոն ՀՀ դրամ՝ բացառությամբ մեկ ապահովագրական պատահարի հետևանքով յուրաքանչյուր ավտոտրանսպորտային միջոցին և այդ ավտոտրանսպորտային միջոցին կամ դրա կցորդին (կիսակցորդին) կցված կամ դրանց մեջ (վրա) գտնվող՝ այլ անձանց պատկանող գույքին պատճառված վնասների, որոնց հանրագումարի գծով ապահովագրական գումարը մեկ ապահովագրական պատահարի հետևանքով կազմում է մեկ միլիոն ութ հարյուր հազար ՀՀ դրամ:

62. Պատահարի հետևանքով տուժողների վնասներն ապահովագրական գումարը գերազանցելու դեպքում հատուցվող գումարը տուժողների միջև բաշխվում է Օրենքով սահմանված կարգով:

63. Բյուրոյի անունից իրականացվող հատուցումների գործընթացում ապահովագրական գումարը սահմանված է Օրենքով: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

64. Ապահովագրական գումարը պայմանագրի գործողության ընթացքում ենթակա չէ նվազեցման՝ անկախ այդ ընթացքում ապահովագրական պատահարների դիմաց վճարված ապահովագրական հատուցումների ծավալից և քանակից:

## ԳԼՈՒԽ 9. ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

65. ԱՊՊԱ ոլորտում ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանությունը՝ ներառյալ հիմնական և բազային ապահովագրավճարների առավելագույն սահմանաչափերը, ռիսկայնության գործակիցների թույլատրելի արժեքները, Բոնուս-Մալուս համակարգի կիրառման կարգը, Բոնուս-Մալուս գործակիցների մեծությունները և Ապահովագրողների կողմից ապահովագրավճարի սահմանման և դրա կիրառման գործընթացի նկատմամբ նվազագույն պահանջները սահմանված են սույն կանոնների **Հավելված 3**-ով:

## ԳԼՈՒԽ 10.ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

66. Ապահովագրավճարը վճարվում է Վկայագրում նշված չափով և ժամկետներում:

67. Ապահովագրավճարի վճարման եղանակը՝ միանվագ կամ տարաժամկետ (վերջինի դեպքում՝ նաև վճարման նվազագույն պարբերականությունը և չափերը) որոշվում և Վկայագրում ամրագրվում են Ապահովադրի և ՊԿԱ-ի փոխադարձ համաձայնությամբ: Ընդ որում, ֆիզիկական անձ Ապահովադիրների հետ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերով ապահովագրավճարն ամբողջությամբ պետք է փաստացի վճարվի ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին:

68. Վկայագրով սահմանված ապահովագրավճարի վճարումը կարող է կատարվել՝

1) կանխիկ կերպով՝

ա. ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին մասը) ՊԿԱ-ի գրասենյակում համապատասխան աշխատակցին կամ ՊԿԱ ապահովագրական գործակալին անմիջապես վճարելու (գումարը նրան հանձնելու)

միջոցով, ինչպես նաև առցանց էլեկտրոնային եղանակով՝ վճարային տերմինալների միջոցով վճարում կատարելու միջոցով,

բ. ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո՝ Վկայագրով նախատեսված ժամկետներում, վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին կամ հետագա մասերը) Վկայագրում կամ ՊԿԱ-ի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին վճարելու կամ ՊԿԱ-ի դրամարկղ վճարելու միջոցով,

2) անկանխիկ կերպով՝

ա. ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին մասը) առցանց եղանակով ինտերնետային կայքի, վճարային համակարգերի կամ բջջային հավելվածների միջոցով վճարումներ կատարելու միջոցով,

բ. ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո՝ Վկայագրով նախատեսված ժամկետներում, վճարվող ապահովագրավճարը (դրա առաջին կամ հետագա մասերը) Վկայագրում կամ ՊԿԱ-ի կողմից ներկայացված վճարման հաշվում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:

69. Սույն կանոնների 68-րդ կետի 1-ին ենթակետի «ա» և 2-րդ ենթակետի «ա» պարբերություններով նախատեսված դեպքերում ԱՊՊԱ պայմանագրի կնքման և դրանով նախատեսված ապահովագրավճարի (դրա առաջին մասի) վճարման գործընթացները համարվում են մեկ միասնական (անբաժանելի) ամբողջություն՝ արդյունքում ստեղծվող և Ապահովադրին տրվող մեկ միասնական փաստաթղթով՝ կնքված Վկայագրով: Սույն կանոնների 68-րդ կետի 1-ին ենթակետի «բ» և 2-րդ ենթակետի «բ» պարբերություններով նախատեսված դեպքերում ԱՊՊԱ պայմանագրի կնքումը և դրանով նախատեսված ապահովագրավճարի (դրա առաջին կամ հետագա մասերի) վճարումը համարվում են սույն կանոններով նախատեսված առանձին գործընթացներ՝ յուրաքանչյուր գործընթացի արդյունքում ստեղծվող առանձին փաստաթղթերով՝ համապատասխանաբար Վկայագրով և վճարման հիմքը հավաստող փաստաթղթով (անդորրագրով):

## ԳԼՈՒԽ 11. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ

70. ԱՊՊԱ պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե Ապահովադիրը պայմանագրում որպես գործողության ժամկետի սկիզբ չի նշում (ներառյալ՝ կատարված նշմանը համաձայնություն տալու միջոցով) կնքման պահին գործող ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի ավարտին հաջորդող պահը, կամ եթե Ապահովագրողը և Ապահովադիրը փոխադարձ համաձայնությամբ չեն սահմանում, որ այն ուժի մեջ է մտնում նշված ժամկետներից ավելի ուշ ժամկետում: Ամեն դեպքում՝

1) Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ (մուտք գործելու օրվա կամ դրան հաջորդող ինն օրվա ընթացքում կնքված) ԱՊՊԱ պայմանագրերն ուժի մեջ են մտնում կնքման պահից,

2) այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ (սեփականության իրավունքի գրանցման և (կամ) հաշվառման օրվա կամ դրան հաջորդող ինն օրվա ընթացքում կնքված) ԱՊՊԱ պայմանագրերն ուժի մեջ են մտնում կնքման պահից, բայց ոչ շուտ, քան Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը իրավասու պետական մարմնի կողմից նոր սեփականատիրոջ անունով գրանցելը և Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառելը,

3) ԱՊՊԱ պայմանագրի կնքման օրվան անմիջապես նախորդող 10 օրվա ընթացքում ոչ մի օր գործող ԱՊՊԱ պայմանագիր չունեցող Ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագրերը (բացառությամբ այն դեպքերի, երբ համաձայն ԱՄՄՊ-ում արտացոլված տեղեկատվության կամ Ապահովադրի ներկայացրած ապացույցների՝ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվությունը, համաձայն Օրենքի, պայմանագրի կնքումից տասն օր առաջ ենթակա չի եղել իր կողմից պարտադիր ապահովագրման) ուժի մեջ են մտնում կնքման օրվան հաջորդող օրը, իսկ Ապահովագրողի և Ապահովադրի փոխադարձ համաձայնության դեպքում՝ ավելի ուշ ժամկետում:

71. ԱՊՊԱ պայմանագիրը համարվում է ուժի մեջ չմտած (գործողությունը համարվում է դադարած կնքման պահից) և ենթակա է չեղարկման ԱՄՄՊ համակարգում հետևյալ դեպքերում.

1) Վկայագրում որպես Ապահովադիր նշված անձը (նրա ներկայացուցիչը) հրաժարվել է ստորագրել իրեն ստորագրման ներկայացված ԱՊՊԱ պայմանագիրը: Նշված դեպքում մուտքագրված ԱՊՊԱ պայմանագրի չեղարկման մասին նշումն ԱՄՄՊ-ում կատարվում է ոչ ուշ, քան Վկայագրում նշված՝ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը, իսկ պայմանագիրը կնքման պահին կամ դրան հաջորդող 15 րոպեի ընթացքում ուժի մեջ մտնելու դեպքում՝ ոչ ուշ, քան կնքմանը հաջորդող 15-րդ րոպեն:

2) ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո այն օրենսդրությամբ սահմանված կարգով անվավեր է ճանաչվել: Նշված դեպքում մուտքագրված ԱՊՊԱ պայմանագրի չեղարկման մասին նշումն ԱՄՄՊ-ում կատարվում է ոչ ուշ, քան ՊԿԱ-ի կողմից անվավերության վերաբերյալ համապատասխան հիմքն ստանալուց հետո 1 օրվա ընթացքում՝ ԱՄՄՊ-ում կցելով տվյալ հիմք հանդիսացող փաստաթղթի լուսապատճենը: *(սույն կետով նախատեսված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրազեկվի:)*

72. Ապահովագրողները (Ապահովագրողի լիազորված անձինք՝ ներառյալ ապահովագրական գործակալները) պարտավոր են կիրառել ԱՊՊԱ պայմանագրերի կնքման և վաճառքի կազմակերպման (ներառյալ՝ Ապահովադիրներին ԱՊՊԱ պայմանագրի նախագծի ներկայացման, նախապես համաձայնեցման և վերջնական տաբերակի ստորագրման ներկայացման հետ կապված) այնպիսի գործընթացներ, որոնք կապահովեն սույն կանոնների 71-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված պահանջների պահպանումը: *(սույն կետով նախատեսված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրազեկվի:)*

73. ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը դադարում է Վկայագրի «Ապահովագրության ժամկետը» դաշտում նշված ավարտի ժամկետը լրանալու պահից:

74. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքերը, յուրաքանչյուր հիմքի դեպքում ԱՊՊԱ պայմանագրի դադարման պահը և ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման դեպքերը, ինչպես նաև վերադարձման ենթակա ապահովագրավճարի հաշվարկման կարգն ու պայմանները սահմանված են **Հավելված 4**-ով: ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում վերադարձման ենթակա ապահովագրավճարն ԱՊՊԱ պայմանագրի դադարեցման ամսաթվին հաջորդող 2 օրերի ընթացքում սույն կանոններով սահմանված կարգով վերադարձվում է Ապահովադրին:

75. Այն դեպքում, երբ Վկայագրում նշված են մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցներ և **Հավելված 4**-ով սահմանված պայմանագրի դադարման հիմքերը

վերաբերում են դրանցից ոչ բոլորին, ապա պայմանագիրը դադարեցվում է միայն տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) մասով, և **Հավելված 4**-ով սահմանված հաշվարկները կատարվում են միայն այդ Ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) մասով:

### ԳԼՈՒԽ 12. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԿԱՅԱԳՐԻ ՎՆԱՍՄԱՆ (ԽՈՏԱՆՄԱՆ), ԿՈՐՍՏԻ, ՀԱՓՇՏԱԿՄԱՆ ԿԱՄ ՈՉՆՉԱՑՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ

76. Վկայագրի վնասման (խոտանման), կորստի, հափշտակման կամ ոչնչացման դեպքում այն ենթակա է փոխարինման կրկնօրինակով:

77. Վկայագրի կրկնօրինակ ստանալու նպատակով Ապահովադիրը կորստից հետո ցանկացած ժամկետում դիմում է տվյալ Վկայագրով ՊԿԱ-ին և վերջինի որևէ բանկային հաշվին վճարում է նրա կողմից «Կրկնօրինակ վկայագրի տրամադրման համար» սահմանված ծառայության վճարը (առկայության դեպքում), որը չի կարող 1 000 ՀՀ դրամից ավելի լինել:

78. Ապահովադիրը կարող է Վկայագրի կրկնօրինակ ստանալ նաև առցանց եղանակով՝ www.appa.am կամ www.aswa.am կայքերից որևէ մեկով տեղեկատվության առցանց հարցում իրականացնելու միջոցով:

79. Սույն կանոնների 77-րդ կետով սահմանված վճարումն ստանալուց հետո ՊԿԱ-ն Ապահովադրին տրամադրում է Վկայագրի կրկնօրինակը՝ Վկայագրի վրա սահմանված կարգով կատարելով «ԿՐԿՆՕՐԻՆԱԿ» նշագրում՝ ՊԿԱ-ի գրասենյակ Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) ներկայանալուց և համապատասխան անդորրագիրը ներկայացնելուց անմիջապես հետո կամ Ապահովադրի համապատասխան պահանջից անմիջապես հետո, եթե ՊԿԱ-ն այդ ծառայության համար որևէ վճար չի սահմանել:

## ԲԱԺԻՆ 3. ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

### ԳԼՈՒԽ 13. ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԽՄԲԵՐԸ

80. ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական պատահարների և հատուցման դիմումների կարգավորման գործընթացները տարանջատվում են երկու հիմնական խմբերի՝

1) Պարզեցված ընթացակարգով ապահովագրական պատահարների և հատուցումների կարգավորման գործընթաց (այսուհետ՝ Պարզեցված հատուցման գործընթաց),

2) Ստանդարտ ընթացակարգով ապահովագրական պատահարների և հատուցումների կարգավորման գործընթաց (այսուհետ՝ Ստանդարտ հատուցման գործընթաց):

81. Պարզեցված հատուցման գործընթացը կիրառվում է այն դեպքերում, երբ առկա են հետևյալ պայմանները միաժամանակ՝

1) տեղի է ունեցել ապահովագրական պատահար,

2) ապահովագրական պատահարում ներգրավված է միայն երկու ավտոտրանսպորտային միջոց, որոնցից առնվազն մեկի վերաբերյալ ապահովագրական պատահարի պահին առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր,

3) ապահովագրական պատահարի արդյունքում վնաս է պատճառվել միայն այդ ավտոտրանսպորտային միջոցներին կամ դրանցից մեկին,

4) ապահովագրական պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցներից որևէ մեկի վարորդն ընդունում է, որ ապահովագրական պատահարի առաջացման մեջ միակ մեղավորն ինքն է, և դրա վերաբերյալ ավտոտրանսպորտային միջոցների վարորդների միջև առկա է փոխադարձ համաձայնություն,

5) տուժողի կամ նրա ավտոտրանսպորտային միջոցի վարորդի կողմից վնաս պատճառողից ակնկալվող վնասի հատուցման չափը չի գերազանցում Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը: *(փոփ. է 08/06/2020թ թիվ 21-Ն)*

82. Ստանդարտ հատուցման գործընթացը կիրառվում է Պարզեցված հատուցման գործընթացի պայմաններին չբավարարող բոլոր այլ դեպքերում և կարգավորման տեսանկյունից իր հերթին բաժանվում է երկու ենթախմբի՝

1) ապահովագրական պատահարներ, որոնց գծով չի իրականացվել քրեական և (կամ) վարչական վարույթ, և չի հարուցվել քաղաքացիական գործ, (այսուհետ՝ Ստանդարտ հատուցման գործընթաց 1),

2) ապահովագրական պատահարներ, որոնց գծով իրականացվել է քրեական և (կամ) վարչական վարույթ, կամ հարուցվել է քաղաքացիական գործ, (այսուհետ՝ Ստանդարտ հատուցման գործընթաց 2):

83. Օրենքով նախատեսված համաձայնեցված հայտարարագրի միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը և սույն կանոնների 81-րդ կետով սահմանված պայմաններին չբավարարող դեպքերի համար Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը սույն կանոններով սահմանվում են 0 ՀՀ դրամ: Սույն կանոնների 81-րդ կետով սահմանված պայմաններին բավարարող դեպքերի համար Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով հատուցվող վնասի առավելագույն չափը սույն կանոններով սահմանվում է 100 000 ՀՀ դրամ, բացառությամբ համաձայնեցված հայտարարագիրը բջջային հավելվածի միջոցով լրացվելու դեպքերի, որոնց համար սահմանվում է.

1) 400 000 ՀՀ դրամ, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Երևան քաղաքում,

2) 200 000 ՀՀ դրամ, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Երևան քաղաքից դուրս: *(լրաց. է 08/06/2020թ թիվ 21-Ն)*

84. Այն դեպքում, երբ սույն գլխով նախատեսված մի խմբի (ենթախմբի) համար սահմանված գործընթացների կիրառման ընթացքում կամ դրա ավարտից հետո պարզվում է, որ առկա են այլ խմբի (ենթախմբի) գործընթացի կիրառման պայմանները, արդեն իրականացված գործընթացները և դրանց հիման վրա ընդունված որոշումները ենթակա են համապատասխանեցման կիրառման ենթակա գործընթացների համար սահմանված կարգավորումներին:

## ԳԼՈՒԽ 14.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻՑ ՀԵՏՈ

85. Պարզեցված հատուցման գործընթացի դեպքում ապահովագրական պատահարի մասնակից վարորդներն ապահովագրական պատահարի վայրում պարտավոր են ձեռնարկել հետևյալ գործողությունները՝

1) որևէ կերպ՝ այդ թվում ցանկացած հեռախոսի միջոցով առնվազն երեք անգամ լուսանկարահանել կամ տեսանկարահանել ապահովագրական պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները: Ընդ որում, լուսանկարահանումը (տեսանկարահանումը) պետք է կատարվի այնպես, որպեսզի լուսանկարները (տեսանյութը) առնվազն արտացոլեն երկու ավտոտրանսպորտային միջոցների հետվթարային փոխադարձ դիրքերը և ապահովագրական պատահարի հետևանքով դրանցից յուրաքանչյուրի ընդհանրական վնասվածքները, որից հետո միայն կարող են ճանապարհի երթևեկելի մասից հեռացնել նշված ավտոտրանսպորտային միջոցները:

2) լրացնել համաձայնեցված հայտարարագիրը և համատեղ ստորագրել այն: Ընդ որում՝ համաձայնեցված հայտարարագիրը կարող է լրացվել և ստորագրվել (համարվել ստորագրված) ինչպես թղթային եղանակով՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված լրացման հրահանգին համապատասխան, այնպես էլ բջջային հավելվածի միջոցով՝ սույն կանոնների Հավելված 11-ում սահմանված լրացման հրահանգին համապատասխան:

*3) (ուժը կորցրել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի խորհրդի 26/01/2023թ թիվ 5-Լ որոշմամբ):*

4) մեղավորությունն ընդունած վարորդն ապահովագրական պատահարը տեղի ունենալուն հաջորդող 40 րոպեի ընթացքում իր կողմից վարած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ կնքված ԱՊՊԱ պայմանագրի Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով տեղեկացնում է համապատասխան ՊԿԱ-ին տեղի ունեցած ապահովագրական պատահարի մասին՝ համապատասխան հարցադրումների առկայության դեպքում ՊԿԱ-ին պատասխանելով համաձայնեցված հայտարարագրում լրացված, ինչպես նաև պարզեցված հատուցման գործընթացի համար պայմանների համապատասխանության ստուգման համար անհրաժեշտ այլ տեղեկատվությունը: Ընդ որում ՊԿԱ-ն՝

ա. նախքան համաձայնեցված հայտարարագրում լրացված տեղեկատվության վերաբերյալ իր հարցադրումներն իրականացնելը պարտավոր է հավաստիանալ, որ վարորդները չեն խոչընդոտում բնականոն երթևեկությունը,

բ. իրավունք չունի սույն ենթակետում նշված տեղեկատվությունից ավելի տեղեկատվություն հարցնել հեռախոսով իրեն տեղեկացրած վարորդից:

86. Սույն կանոնների 85-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված տեղեկացման պարտականությունը մեղավորությունն ընդունած վարորդի կողմից համարվում է պատշաճ կատարված՝ համաձայնեցված հայտարարագիրը սույն կանոններով սահմանված կարգով բջջային հավելվածի միջոցով լրացնելու և հաստատելու ուժով:

87. Համաձայնեցված հայտարարագիրը սույն կանոններով սահմանված կարգով բջջային հավելվածի միջոցով լրացվելու դեպքում համապատասխան հավելվածում Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման (գրանցման) վկայագրի և վարորդական վկայականի կամ անձը հաստատող փաստաթղթի լուսանկարների ներբեռնման և հաստատման ուժով համարվում է, որ պատահարի պահին տվյալ Ավտոտրանսպորտային միջոցը տիրապետել է այդ վարորդական վկայականում կամ անձը հաստատող փաստաթղթում նշված անձը, և համապատասխան համաձայնեցված հայտարարագիրն ստորագրվել է վերջինի կողմից:

88. Ամեն դեպքում, անձնական վնասներ չառաջացրած պատահարի մասին տեղեկացված ՊԿԱ-ն պարտավոր է հեռախոսային խոսակցության ընթացքում պատահարի մասին իրեն տեղեկացրած անձից պարզել սույն կանոնների 81-րդ կետով նախատեսված պայմանների առկայությունը և այդ պայմանների առկայության դեպքում

հեռախոսով վերջինիս բացատրել համաձայնեցված հայտարարագիր լրացնելու հնարավորության, դրա իրականացման կարգի և հետևանքների մասին: Ընդ որում՝ նման դեպքերում և եղանակով վարորդների կողմից լրացված համաձայնեցված հայտարարագրով պատահարի գրանցումը և հատուցման հետագա գործընթացները նույնպես համարվում են սույն կանոնների 81-րդ կետով նախատեսված՝ Օրենքով նախատեսված ինքնուրույն կարգավորման միջոցով վնասի հատուցման գործընթաց:

89. Ստանդարտ հատուցման գործընթացի դեպքում Ապահովադիրը և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձն ապահովագրական պատահարի վայրում պարտավոր են ձեռնարկել հետևյալ գործողությունները՝

1) կատարել «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում վարորդների համար նախատեսված գործողությունները և (կամ) ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից տրված օրինական ցուցումները, իսկ ապահովագրական պատահարը ճանապարհատրանսպորտային պատահարից տարբերվող այլ հանգամանքներում առաջանալու դեպքում՝ դրա մասին անհապաղ հայտնել համապատասխան իրավասու պետական մարմնին և մինչև վերջինի ներկայացուցիչների ժամանումը չտեղաշարժել պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցները և պատահարի հետ կապ ունեցող այլ առարկաներն ու գույքը,

2) ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո, իսկ սույն կանոնների 19-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում՝ այդ հանգամանքները վերանալու մասին իրեն հայտնի դառնալուց հետո՝ պատահարի մասին հայտնել տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի գծով ՊԿԱ-ին՝ հետևյալ ժամկետներում զանգահարելով Վկայագրի վրա նշված հեռախոսահամարով (հեռախոսահամարներից որևէ մեկով) և պատասխանելով ՊԿԱ-ի օպերատորի հեռախոսային հարցադրումներին.

ա. պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի մահվան դեպքում՝ պատահարի պահից 30 օրվա ընթացքում,

բ. պատահարի հետևանքով պատահարում ներգրավված որևէ անձի առողջությանը վնաս պատճառված լինելու դեպքում՝ պատահարի պահից 3 օրվա ընթացքում, պայմանով, որ տվյալ պատահարի հետևանքով առողջությանը վնաս պատճառված անձը պատահարի պահից 3 ժամվա ընթացքում տվյալ պատահարի հետևանքով ստացված վնասվածքների հետ կապված դիմել է (ինքնուրույնաբար կամ նրան տեղափոխել են) բժշկական հաստատություն: Ընդ որում՝ այն դեպքում, երբ պատահարի արդյունքում առաջացել են սույն ենթակետի միաժամանակ «ա» և սույն պարբերություններում նշված հետևանքները, ապա պատահարի մասին տեղեկացման մասով կիրառելի է սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված ժամկետը,

գ. սույն ենթակետի «ա» և «բ» պարբերություններով չնախատեսված դեպքերում՝ պատահարի պահից 40 րոպեի ընթացքում:

89.1. Եթե պատահարում ներգրավված երկու կամ ավելի ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագրերը կնքված են եղել միևնույն ապահովագրական ընկերությունում, ապա դրանցից մեկի վարորդի կողմից սույն կանոնների համապատասխանաբար 85-րդ կետի 4-րդ ենթակետով կամ

89-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկացման պարտավորությունը պատշաճ կատարվելու դեպքում մյուս ավտոտրանսպորտային միջոցների վարորդների կողմից նույնպես այդ պարտավորությունը համարվում է պատշաճ կատարված՝ անկախ տվյալ ապահովագրական ընկերությանն անմիջականորեն իրենց կողմից տեղեկացնելու հանգամանքից:

89.2. Ապահովագրական պատահարի վերաբերյալ տեղեկացված Ապահովագրողը պարտավոր է հեռախոսային խոսակցության ընթացքում ստուգել պատահարի մասին տեղեկատվություն տրամադրող անձի կողմից նշված Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ իր հետ կնքված և պատահարի տեղի ունենալու պահի դրությամբ գործող ԱՊՊԱ պայմանագրի առկայության փաստը, և տվյալ Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիրն այլ Ապահովագրողի հետ կնքված լինելու դեպքում այդ անձին իրազեկել՝ համապատասխան Ապահովագրողին ծանուցելու անհրաժեշտության մասին՝ տրամադրելով վերջինի՝ պատահարի մասին ծանուցման համար նախատեսված հեռախոսահամարը: Ապահովագրողը պարտավոր է նաև պատահարի մասին տեղեկատվություն տրամադրող անձին հեռախոսային խոսակցության ընթացքում մատչելի եղանակով ներկայացնել Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող անձանց պարտավորությունները ապահովագրական պատահարի վայրում:

90. Ապահովագրողները պարտավոր են պահպանել ապահովագրական պատահարի ծանուցման համար նախատեսված հեռախոսահամարների շուրջօրյա հասանելիությունը (ներառյալ ոչ աշխատանքային օրերին) և հեռախոսազրույցի ձայնագրումը և պահպանումն առնվազն հինգ~~երեք~~ տարի՝ սկսած ապահովագրական պատահարի տեղի ունենալու ամսաթվից:

91. Վարորդի կողմից սույն գլխի 85-րդ և 89-րդ կետերով սահմանված կարգով պարտականությունների պատշաճ կատարումից հետո ապահովագրական պատահարի վայրից հեռանալը ՊԿԱ-ի կողմից չի կարող գնահատվել իբրև ապահովագրական պատահարի վայրն առանց հիմնավոր պատճառի լքում և չի կարող նրա, Ապահովադրի կամ տուժողների համար առաջացնել որևէ բացասական հետևանք:

92. Պարզեցված հատուցման գործընթացի և Ստանդարտ հատուցման գործընթացի դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) սույն կանոնների համապատասխանաբար 85-րդ և 89-րդ կետերում նշված գործողությունները ձեռնարկելուց բացի պարտավոր է նաև՝

1) ողջամիտ և մատչելի միջոցներ ձեռնարկել ապահովագրական պատահարի հետևանքով հնարավոր վնասները նվազեցնելու համար: Հատուցման ենթակա վնասները նվազեցնելու նպատակով տուժողի (նրա ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձի) կողմից կատարված ծախսերը, եթե այդպիսիք անհրաժեշտ են եղել կամ կատարվել են իր ՊԿԱ-ի կամ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցներից որևէ մեկի գծով ՊԿԱ-ի ներկայացուցչի ցուցումներին համապատասխան, հատուցվում են ՀՊԱ-ի կողմից նույնիսկ այն դեպքում, երբ համապատասխան միջոցներն արդյունավետ չեն եղել: Նման ծախսերը հատուցվում են անկախ այն բանից, որ դրանք այլ վնասների հատուցման հետ մեկտեղ կարող են գերազանցել ապահովագրական գումարը:

2) ապահովագրական պատահարից հետո սույն կանոններով նախատեսված կարգով պատահարում ներգրավված ցանկացած Ապահովագրողի և (կամ) Բյուրոյի

ներկայացուցչին և (կամ) փորձագետին տրամադրել համապատասխան Ավտոտրանսպորտային միջոցի և այլ գույքի (պատահարի արդյունքում վնասված) զննում անցկացնելու հնարավորություն՝ համապատասխան գրավոր կամ բանավոր պահանջն ստանալուց հետո երկու, իսկ պարզեցված հատուցման գործընթացի դեպքում՝ մեկ օրվա ընթացքում, *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

3) մինչև պատահարում ներգրավված Ավտոտրանսպորտային միջոցի կամ ապահովագրական պատահարի արդյունքում վնասված այլ գույքի գծով հատուցում վճարելու կամ հատուցման վճարումը մերժելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելը չիրականացնել այդ Ավտոտրանսպորտային միջոցի կամ գույքի վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պայմանավորված են մարդկանց անվտանգության ապահովման անհրաժեշտությամբ կամ իրավասու պետական մարմինների ցուցումով, կամ վնասված բաղադրիչների ապամոնտաժման արդյունքում ամբողջական կպահպանվեն պատահարի արդյունքում պատճառված վնասները: Նման դեպքերում Ապահովադիրը և (կամ) Ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող այլ անձը հնարավորության առկայության դեպքում պարտավոր են վերանորոգման կամ ապամոնտաժման աշխատանքներն սկսելուց առաջ տեղեկացնել այդ մասին ԴՍԱ-ին (վերջինիս ներկայացուցչին): Սույն ենթակետով նախատեսված արգելքը չի տարածվում այն Ավտոտրանսպորտային միջոցների և այլ գույքի նկատմամբ, որոնց գծով առկա է հետևյալ պայմաններից առնվազն մեկը՝

ա. սույն կանոններով սահմանված կարգով և դեպքերում իրականացվել է վնասված գույքի առանձնացված գնահատում, և դրա արդյունքները սույն կանոններով սահմանված կարգով ուժի մեջ են մտել,

բ. ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը բողոքարկված է դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակում, և բողոքարկումը չի վերաբերում տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին (այլ գույքին) պատճառված վնասի գնահատված չափին, պատահարում այդ Ավտոտրանսպորտային միջոցը տիրապետած անձի մեղքի առկայությանը, չափին և այդ Ավտոտրանսպորտային միջոցի վրա առկա հետքերի՝ պատահարի հետ համատեղելիության հարցին:

93. Ապահովագրողներն իրավունք ունեն պատահարի հետ կապված հավաքագրել սույն կանոններով սահմանված՝ փորձաքննության համար փորձագետներին ներկայացվող լրացուցիչ ելակետային տվյալներ:

## ԳԼՈՒԽ 15. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

94. Ապահովագրական հատուցում ստանալու համար տուժողը ապահովագրական պատահարից հետո եռամսյա ժամկետում **Ձև 2.1-ով կամ Ձև 2.2-ով** սահմանված ձևով գրավոր դիմում ներկայացնելու միջոցով դիմում է հետևյալ Ապահովագրողին՝

1) տեղի ունեցած պատահարի պահին Ապահովադիր հանդիսացող տուժողը՝ պատահարի պահին նրա հետ գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին (մեկից ավելի ՊԿԱ-ի դեպքում՝ այն ՊԿԱ-ին, որի հետ պայմանագրում նշված ավտոտրանսպորտային միջոցը ներգրավված է պատահարում, իսկ այդպիսի ավտոտրանսպորտային միջոցի բացակայության դեպքում՝ տուժողի նախընտրությամբ դրանցից ցանկացածին),

2) տեղի ունեցած պատահարի պահին Ապահովադիր չհանդիսացող՝ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցներից որևէ մեկի վարորդ-տուժողները՝ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած Ապահովագրողին, վերջինի բացակայության դեպքում՝ տվյալ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած Ապահովագրողներից ցանկացածին՝ տուժողի նախընտրությամբ, իսկ վերջինների բացակայության դեպքում՝ տուժողի նախընտրությամբ այլ ցանկացած Ապահովագրողին,

3) տեղի ունեցած պատահարի պահին Ապահովադիր և վարորդ չհանդիսացող տուժողները՝ տվյալ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած Ապահովագրողներից ցանկացածին՝ տուժողի նախընտրությամբ, իսկ վերջինների բացակայության դեպքում՝ տուժողի նախընտրությամբ այլ ցանկացած Ապահովագրողին,

4) այն դեպքում, երբ սույն կետի 1-3-րդ ենթակետերով նախատեսված Ապահովագրողը դիմումի ներկայացման ամսաթվի դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անվճարունակ կամ սնանկ է, ապա՝ տուժողի նախընտրությամբ այլ ցանկացած Ապահովագրողին: Ընդ որում՝ Բյուրոյի պաշտոնական ինտերնետային կայքի ապահովագրական ընկերություններ բաժնում մշտապես նշվում է տվյալ պահին որևէ Ապահովագրողի անվճարունակ կամ սնանկ լինելու մասին տեղեկատվությունը: *(94-րդ կետը փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

95. Սույն կանոնների 94-րդ կետով նախատեսված դիմումն Ապահովադրի կողմից համարվում է ներկայացված համապատասխան Ապահովագրողին նաև հետևյալ դեպքերում և պայմանների միաժամանակյա առկայությամբ.

1) Պարզեցված հատուցման գործընթացի դեպքում՝ սույն կանոններով սահմանված կարգով պատահարը գրանցել է բջջային հավելվածի միջոցով, իսկ Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի դեպքում՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմինն ԱՄՄՊ-ում գրանցել է պատահարը, և մուտքագրվել են Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը: Ընդ որում, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից ԱՄՄՊ-ում պատահարը գրանցելիս Ելակետ 1-ում և Ելակետ 2-ում պարունակող տվյալները ԱՄՄՊ-ում չմուտքագրվելու դեպքում ներբեռնված համապատասխան փաստաթղթերի հիման վրա դրանք պետք է մուտքագրվեն Ելակետ 1-ում ՏՄ 1-ի ներքո մուտքագրված Ավտոտրանսպորտային միջոցի գծով ԱՊՊԱ պայմանագիր կնքած ՊԿԱ-ի (այդպիսի ՊԿԱ-ի բացակայության դեպքում՝ այն ՊԿԱ-ի, որի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագրում նշված Ավտոտրանսպորտային միջոցին Ելակետ 1-ում տրված հերթական համարն ամենափոքրն է գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող մյուս Ավտոտրանսպորտային միջոցներին տրված հերթական համարների համեմատ) կողմից ԱՄՄՊ-ում պատահարը գրանցվելուց հետո՝ երկու օրվա ընթացքում: Ապահովագրողը պատասխանատվություն է կրում իր կողմից սույն ենթակետով նախատեսված մուտքագրման պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու՝ ներառյալ տվյալներն սխալ մուտքագրելու հետևանքով առաջացած լրացուցիչ ծախսերի համար, *(փոփ. է 30/06/2020թ թիվ 22-Լ)*

2) տվյալ Ապահովադրին պատկանող և պատահարում ընդգրկված Ավտոտրանսպորտային միջոցը Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոց է, և պատահարի պահին դրա վերաբերյալ առկա է կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագիր,

3) տվյալ Ապահովադրին ԴՍԱ-ի կողմից ուղարկվել է ծանուցում, որին կցված է սույն կանոններով սահմանված ձևով լրացված ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում, և ծանուցման պահից հետո 1 օրվա ընթացքում, Ապահովադիրը ԴՍԱ-ին չի ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում՝ համաձայն սույն կանոնների Ձև 2.3-ի: Ընդ որում՝ Ապահովադրի կողմից սույն կետում նշված ժամկետում ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումին ընթացք չտալու վերաբերյալ դիմում չներկայացնելը չի զրկում վերջինին հետագայում այն սույն կանոնների 113-րդ կետի համաձայն ներկայացնելու իրավունքից: *(95-րդ կետը փոփ. և լրաց. է 28/04/2020թ-ի թիվ 10-Լ)*

4) տվյալ Ապահովադիրը, համաձայնեցված հայտարարագրում կամ Եվրակետ 1-ում կատարված նշումների կամ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքների համաձայն, համարվել է (ճանաչվել է) անմեղ կամ մասամբ մեղավոր:

96. ԴՍԱ-ն պարտավոր է ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ընդունել ցանկացած անձից, ով ներկայանում է որպես սույն կանոնների 94-րդ կետի համաձայն իրեն դիմելու իրավունք ունեցող տուժող կամ վերջինի կողմից պատշաճ կարգով լիազորված անձ՝ անկախ դիմելու պահին իր կարգավիճակը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու հանգամանքից: Հատուցում ստանալու վերաբերյալ դիմում ստացած՝ ԴՍԱ չհանդիսացող Ապահովագրողը պարտավոր է ԴՍԱ չլինելու փաստն իրեն հայտնի դառնալուց անմիջապես հետո դիմում ներկայացրած անձին ուղղորդել ԴՍԱ-ի մոտ՝ 3 օրվա ընթացքում վերջինին փոխանցելով համապատասխան դիմումը և դրա գծով իր կողմից ստացված այլ փաստաթղթերը: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ և 30/03/2021թ թիվ 12-Լ)*

97. Սույն կանոնների 94-րդ կետով տուժողի համար նախատեսված ԴՍԱ-ի ընտրության իրավունքը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ տվյալ տուժողը տվյալ պատահարի գծով արդեն իսկ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմում է ներկայացրել համապատասխան Ապահովագրողներից որևէ մեկին, կամ երբ համապատասխան Ապահովագրողներից որևէ մեկն առանց ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի ստացման, սույն կանոնների համաձայն, արդեն իսկ տվյալ տուժողի համար կատարել է Կանխավճարներ, որի դեպքում ԴՍԱ է համարվում հատուցման գործընթացը կարգավորող կամ Կանխավճարներ կատարած Ապահովագրողը:

~~98.~~ Ապահովագրական հատուցում ստանալու համար ԴՍԱ-ին ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը սահմանված է **Հավելված 5-ով**: Այն դեպքում, երբ տուժողն ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումին կից չի ներկայացնում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, ապա ԴՍԱ-ն պարտավոր է դիմումի ստացման օրը կամ դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում սույն կանոնների **Հավելված 1-ի Ձև 2.5-ով** սահմանված ձևով տուժողին տրամադրել վերջինի կողմից ներկայացման ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը: Նշված ցանկը տուժողին տրամադրվում է ԱՄՄՊ միջոցով: Եթե տուժողի կողմից չեն ներկայացվել այնպիսի

փաստաթղթեր, որոնք, որպես կանոն, ստացվում են ԱՄՄՊ միջոցով կամ հաղորդակցման այլ եղանակներով, ապա այդպիսի փաստաթղթերի մասով ներկայացման ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը տուժողին տրամադրվում է ԱՄՄՊ միջոցով կամ հաղորդակցման այլ եղանակներով ստացվելու անհնարինության փաստը ԴՍԱ-ին հայտնի դառնալու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում: Սույն կետով նախատեսված պակաս փաստաթղթերը պետք է ԴՍԱ-ին ներկայացվեն փաստաթղթերի ցանկն ստանալուց հետո՝ եռամսյա ժամկետում, իսկ Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի դեպքում՝ 1 տարվա ընթացքում: Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո համապատասխան տուժողին տվյալ ԱՊՊԱ պատահարի հետևանքով պատճառված անձնական վնասի չափի վրա ազդող լրացուցիչ փաստաթղթեր կազմվելու դեպքում նախկինում սկսված հատուցման գործընթացը, սույն կանոնների համաձայն, վերաբացվելու համար նշված փաստաթղթերը ենթակա են ներկայացման ԴՍԱ-ին այդ փաստաթղթերը տուժողին տրամադրվելուց հետո՝ 1 տարվա ընթացքում:

~~99.~~98.

~~100.~~99. Սույն կանոնների 1-ին կետով նախատեսված փաստաթղթերը ենթակա չեն ներկայացման՝ ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը, սույն կանոնների 95-րդ կետի համաձայն, Ապահովադրի կողմից ինքնաշխատ ներկայացված լինելու դեպքերում, բացառությամբ, եթե դիմումն ինքնաշխատ ներկայացված լինելու օրը կամ դրան հաջորդող մեկ օրվա ընթացքում պարզվել է, որ դիմումը ներկայացված լինելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը և (կամ) նյութերը (լուսանկարներ, տեսագրություն և այլն) թերի են, որի դեպքում նույն օրվա ընթացքում տուժողին ուղարկվում է վերջինի կողմից ներկայացման ենթակա, բայց դեռևս չներկայացված փաստաթղթերի ցանկը:

## ԳԼՈՒԽ 16.ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

~~101.~~100. Ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացը, դրանում մասնակցող անձինք և յուրաքանչյուրի համար նախատեսված գործողությունները (պարտականությունները)՝ ըստ առանձին հատուցման գործընթացների, սահմանված են **Հավելված 6**-ով (**Հավելված 6.1**՝ Պարզեցված հատուցման գործընթաց, **Հավելված 6.2**՝ Ստանդարտ հատուցման գործընթաց 1 և **Հավելված 6.3**՝ Ստանդարտ հատուցման գործընթաց 2):

~~102.~~101. Սույն կանոններով նախատեսված հատուցման գործընթացների համար ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումը համարվում է ստացված տվյալ տեսակի վնասի (գույքին պատճառված վնաս, առողջությանը պատճառված վնաս, առողջությանը պատճառված վնասի արդյունքում կորցրած աշխատավարձ (եկամուտներ), տուժողի հուղարկավորության հետ կապված ծախսեր, տուժողի մահվան հետևանքով կերակրողին կորցրած անձի կրած վնասներ) հատուցման համար ներկայացման ենթակա բոլոր փաստաթղթերն ամբողջական և պատշաճ կերպով ԴՍԱ-ի կողմից ստացվելու պահին, և վնասի տվյալ տեսակներից յուրաքանչյուրի գծով ապահովագրական հատուցման հետ կապված գործընթացներն իրականացվում և որոշումները կայացվում են միմյանցից առանձին՝ անկախ այն հանգամանքից, թե

դրանց գծով պահանջները ներկայացվել են առանձին, թե՝ միավորվել են մեկ դիմումի մեջ:

~~103.~~102. Ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումների կարգավորման գործընթացում ԴԱԱ-ն հանդես է գալիս ՀՊԱ-ի անունից: Ընդ որում, եթե տուժողին վնասը պատճառվել է մի քանի անձանց կողմից, և հնարավոր չէ պարզել նրանցից յուրաքանչյուրի պատճառած վնասի չափը, ապա ԴԱԱ-ն վնասի գծով ողջ հատուցումն իրականացնում է բոլոր ՀՊԱ-ների՝ որպես տուժողի առջև համապարտ պատասխանատվություն կրող անձանց անունից, իսկ եթե հնարավոր է տուժողին պատճառված վնասը տարանջատել՝ ըստ այն պատճառած անձանց, ապա ԴԱԱ-ն յուրաքանչյուր վնասի գծով հատուցումն իրականացնում է համապատասխան ՀՊԱ-ի անունից: Սույն կետի երկրորդ նախադասությամբ նախատեսված դեպքերում ԴԱԱ-ն ապահովագրական գումարի վերաբերյալ դրույթները վնաս պատճառողներից յուրաքանչյուրի գծով կիրառում է առանձին:

~~104.~~103. Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ում գործում է վնասված գույքի առանձնացված գնահատման գործընթացը, որը, ինչպես նաև դրանից հետո տվյալ պատահարի գծով կարգավորվող հատուցման գործընթացն իրականացվում է հետևյալ պահանջներին համապատասխան.

1) Գործընթացի իրականացման հիմք է հանդիսանում տուժողի կողմից ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումում համապատասխան նշման կատարումը կամ ապահովագրական հատուցում ստանալու դիմումի ներկայացումից հետո գույքին պատճառված վնասների առանձնացված գնահատում իրականացնելու դիմումի (պահանջի) ներկայացումը ԴԱԱ-ին՝ համաձայն Ձև 2.1.1-ի:

2) Գործընթացը կարող է իրականացվել միայն այն դեպքերում, երբ ԴԱԱ-ին ներկայացվել են Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի համար սույն կանոնների հավելված 5-ով նախատեսված՝ գույքին պատճառված վնասի հատուցում ստանալու համար սահմանված բոլոր փաստաթղթերը՝ բացառությամբ պատահարի գծով հարուցված գործով համապատասխան պետական մարմնի կողմից կայացված վերջնական ակտի պատճենի (լուսապատճենի):

3) Գործընթացն իրականացվում է սույն կանոններով գույքին պատճառված վնասների գնահատման համար նախատեսված պահանջներին, մեթոդաբանությանը և ընթացակարգերին համապատասխան՝ ներառյալ ստացված արդյունքների ծանուցման, համաձայնեցման, բողոքարկման և ուժի մեջ մտնելու ժամկետներին ու պայմաններին վերաբերող:

4) Գործընթացի իրականացման ժամանակահատվածում դրանց արդյունքների բողոքարկման իրավունքից օգտվող ցանկացած անձ իրավունք ունի սույն կանոններով սահմանված կարգով համապատասխան պատվեր ներկայացնել փորձագետին (Ապահովագրողների դեպքում) կամ նման պատվեր ներկայացնելու պահանջ ներկայացնել ԴԱԱ-ին (Ապահովագրողներից բացի մյուս անձանց դեպքում)՝ տվյալ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի համատեղելիությունը պարզելու (հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտություն կատարելու) վերաբերյալ: Սույն ենթակետով նախատեսված փորձաքննության իրականացման նկատմամբ տարածվում են ԱՊՊԱ ոլորտում պատճառների փորձաքննության իրականացման համար սահմանված պահանջները՝ բացառությամբ պատահարում մեղավորության որոշման պահանջի, և ենթակա է իրականացման՝ ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի

համատեղելիությունը պարզելու (հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտություն կատարելու) պատվերի կատարման համար սույն կանոններով նախատեսված ժամկետներում:

5) Գույքի առանձնացված գնահատման արդյունքներն սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո տվյալ պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի համատեղելիությունը պարզելու (հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտություն կատարելու) պատվերներ չեն կարող տրվել, իսկ այդ գործընթացում սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված պահանջը ներկայացված լինելու դեպքում համապատասխան փորձաքննության արդյունքները հետագայում ենթակա են տրամադրման տվյալ պատահարի գծով պատահարի առաջացման փորձաքննություն իրականացնող փորձագետին:

6) Գույքի առանձնացված գնահատման՝ սահմանված կարգով ուժի մեջ մտած արդյունքները համարվում են տվյալ գույքին պատճառված վնասների գնահատման փորձաքննության վերջնական արդյունքներ, և ապահովագրական հատուցման կարգավորման հետագա գործընթացում տվյալ գույքին պատճառված վնասների գնահատման գործընթաց (առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի) այլևս չի իրականացվում, իսկ ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթին կցվում է տվյալ գույքին պատճառված վնասների գծով վնասների գնահատման այն եզրակացությունը, որը որպես արդյունք ստացվել և ուժի մեջ է մտել:

~~105.~~104. Սույն կանոնների 103-րդ կետով նախատեսված վնասված գույքի առանձնացված գնահատման գործընթացում կազմված և ուժի մեջ մտած փորձագիտական եզրակացության հիման վրա ԴՍԱ-ն իրավունք ունի իր հայեցողությամբ նախքան պատահարի մեջ սահմանված կարգով մեղավորության որոշումը և (կամ) ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումը կատարել համապատասխան գույքին պատճառված վնասների հատուցման Կանխավճարներ՝ Կանխավճարի կատարումը ձևակերպելով տուժողի հետ կնքված գրավոր համաձայնագրով: Սույն կետով նախատեսված համաձայնագիրն առնվազն պետք է պարունակի Կանխավճարի վճարման կարգը և տվյալ դեպքով ապահովագրական հատուցման գործընթացի վերջնական կարգավորումից հետո կողմերի միջև փոխադարձ հաշվարկների իրականացման՝ սույն կանոններին չհակասող կարգն ու ժամկետները: Ընդ որում սույն կետով նախատեսված համաձայնագրում տուժողի պարտավորությունների մասին տեղեկատվությունը պետք է շարադրվի ընդգծված և սույն կանոններով ծանուցումների համար նախատեսված նվազագույն տառաչափերով:

~~106.~~105. Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ում անձնական վնասների մասով գործում է Կանխավճարների համակարգը՝ համաձայն **Հավելված 6.3.1-ի**: Օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Կանխավճարների համակարգը համարվում է տուժողին տրամադրված բժշկական օգնության հետ կապված ծախսերի՝ այդ հոդվածի համաձայն վճարման համար ԴՍԱ-ի կողմից ի սկզբանե համաձայնեցրած չափ և կարգ: Ընդ որում, սույն կանոնների ուժով նշված հոդվածով սահմանված պարտականությունը Բյուրոյի կողմից համարվում է պատվիրակված ԴՍԱ-ին:

~~107.~~106. Ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացում պատահարի առաջացման մեջ մեղավորության աստիճանը որոշվում է հետևյալ կարգով.

1) Պարզեցված հատուցման գործընթացի դեպքում պատահարի առաջացման մեջ ամբողջությամբ մեղավոր է համարվում համաձայնեցված հայտարարագրում որպես մեղավոր կողմ նշված (սույն կանոնների 16-րդ կետի համաձայն ճշգրտված) անձը՝ առանց որևէ փորձաքննության (առաջնային, լրացուցիչ, կրկնակի) իրականացման,

2) Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ում ԱՊՊԱ պատահարում անձի մեղավորության աստիճանը որոշվում է պատճառների փորձագետի կողմից՝ համաձայն **Հավելված 7**-ի:

3) Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի դեպքում ԱՊՊԱ պատահարում անձի մեղավորության աստիճանը որոշվում է գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ (վարույթ) հարուցված (նախաձեռնված) չլինելու կամ այդպիսի գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտ չընդունվելու կամ այդպիսի ակտով մեղավորություն չհաստատվելու դեպքում՝ քրեական կամ վարչական վարույթի գծով եզրափակիչ ակտ ընդունող պետական այլ մարմնի (այսուհետ՝ համապատասխանաբար քրեկան կամ վարչական վարույթ իրականացնող մարմին) կողմից: Այն դեպքում, երբ ոչ քրեական, ոչ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից չի հաստատվել ԱՊՊԱ պատահարում անձի մեղավորության աստիճանը, կամ այդ ակտի գծով սահմանված կարգով ներկայացվել է կրկնակի փորձաքննության պահանջ, ԱՊՊԱ պատահարում անձի մեղավորության աստիճանը որոշվում է պատճառների փորձագետի կողմից՝ **Հավելված 7**-ի համաձայն: Ընդ որում՝

ա. վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ԱՊՊԱ պատահարում անձի մեղավորության աստիճանը համարվում է որոշված այն դեպքում, երբ մեղավորության հստակ բաշխման (պատահարում ներգրավված անձանց կամ դրանցից մեկի կողմից սույն կանոնների Հավելված 7-ով նախատեսված իրավական ակտերի խախտման) վերաբերյալ հետևությունները կատարվել են այդ մարմնի կողմից ընդունված ակտում կամ այդ ակտին կցված փորձագիտական եզրակացությունում,

բ. քրեական վարույթ իրականացնող մարմնի կողմից ԱՊՊԱ պատահարում անձի մեղավորության աստիճանը համարվում է որոշված այն դեպքում, երբ մեղավորության հստակ բաշխման (պատահարում ներգրավված անձանց կամ դրանցից մեկի կողմից սույն կանոնների հավելված 7-ով նախատեսված իրավական ակտերի խախտման) վերաբերյալ հետևությունները կատարվել են քրեական վարույթի գծով ընդունված եզրափակիչ դատավարական ակտով ինչպես նաև այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի կապակցությամբ նախաձեռնվել է քրեական վարույթ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու և (կամ) ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելու հանցակազմի հատկանիշներով, սակայն ավելի քան երկու ամիս չի հարուցվել քրեական հետապնդում, կամ քրեական հետապնդում հարուցվել է, բայց քրեական հետապնդման ժամկետները կասեցվել են քննությունից խուսափելու կամ այլ պատճառներով մեղադրյալի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով:

~~108.~~107. Ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացում պատահարի հետևանքով պատճառված վնասի չափը որոշվում է հետևյալ կարգով.

1) Պարզեցված հատուցման և Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի դեպքում ԱՊՊԱ պատահարի հետևանքով պատճառված վնասների չափը գնահատվում է վնասների փորձագետի կողմից՝ համաձայն **Հավելված 8.1**-ի:

2) Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի դեպքում ԱՊՊԱ պատահարի հետևանքով պատճառված վնասների չափը Օրենքով սահմանված հատուցման ենթակա վնասների և Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն կանոններով սահմանված սահմանաչափերի շրջանակներում գնահատվում է գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, իսկ այդպիսի գործ (վարույթ) հարուցված (նախաձեռնված) չլինելու կամ այդպիսի գործն (վարույթն) ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտ չընդունվելու դեպքում՝ գույքին պատճառված վնասների մասով՝ վնասների փորձագետի կողմից՝ համաձայն **Հավելված 8.1**-ի, իսկ անձնական վնասների մասով՝ համաձայն **Հավելված 8.2**-ի:

~~109.~~108. Ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացում կրկնակի և (կամ) լրացուցիչ փորձաքննության պահանջը ներկայացվում և իրականացվում է՝ **Հավելված 9**-ի համաձայն:

~~110.~~109. ԴՍԱ-ն ապահովագրական հատուցում վճարելու կամ մերժելու վերաբերյալ որոշումներն ընդունում է սույն կանոններով նախատեսված կարգով որոշված պատահարի առաջացման մեջ մեղավորության աստիճանի և պատահարի հետևանքով պատճառված վնասի չափի հիման վրա:

~~111.~~110. Ապահովագրական հատուցումն իրականացվում է հետևյալ եղանակներից որևէ մեկով (ըստ կիրառելիության)՝

1) Ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ որոշման մեջ նշված՝ տուժողին վճարման ենթակա հատուցման գումարը ԴՍԱ-ի կողմից սույն կանոններով սահմանված կարգով և ժամկետներում փոխանցվում է տուժողին՝ բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

2) Մինչև ապահովագրական հատուցման վճարումը տուժողի կողմից սույն կանոնների Հավելված 1-ի **Ձև 8.5**-ով սահմանված ձևով գույքին պատճառված վնասի վերականգնման տարբերակի ընտրության դեպքում գույքին պատճառված վնասները վերականգնվում են՝ համաձայն **Հավելված 10-ի**, բացառությամբ այն վնասների, որոնց վերականգնումը համաձայն փորձագետի եզրակացության հնարավոր չէ կամ ողջամիտ չէ, որոնց մասով հատուցումն իրականացվում է սույն կետի 1-ին ենթակետով սահմանված եղանակով: Ընդ որում սույն ենթակետի իմաստով՝ վնասի վերականգնումը համարվում է անհնար կամ ոչ ողջամիտ նաև այն դեպքերում, երբ վնասների գնահատման փորձաքննության եզրակացությունում նշված է, որ համապատասխան վնասված բաղադրիչը ենթակա է փոխարինման, և փոխարինվող բաղադրիչի մատակարարը (ապահովողը) միևնույն եզրակացությամբ վնասների վերականգնման աշխատանքներ կատարող անձը չէ:

~~112.~~111. Սույն կանոնների 110-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված եղանակով հատուցումն իրականացվելու դեպքերում որպես ապահովագրական հատուցման չափ դիտարկվում է տուժողին ծանուցված և սույն կանոններով սահմանված կարգով ուժի մեջ մտած հատուցում վճարելու վերաբերյալ որոշման մեջ նշված հատուցման գումարի չափը, բայց ոչ ավելի, քան տվյալ վնասի վերականգման համար ԴՍԱ-ի կողմից տուժողին և վերանորոգող կազմակերպությանը փաստացի վճարված գումարի չափը:

~~113.~~112. Արգելվում է տուժողի կողմից սույն կանոնների համաձայն ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը (պահանջը) փոխանցել այլ անձի (պահանջի զիջում):

~~114.~~113. Ապահովագրական հատուցումների կարգավորման գործընթացի ցանկացած փուլում՝ մինչև ապահովագրական հատուցման վճարումը կամ տուժողի

կողմից վերանորոգման տարբերակի ընտրության դեպքում՝ գույքի վերանորոգման գործընթացի փաստացի սկսվելը, տուժողն իրավունք ունի իր ցանկությամբ հրաժարվել ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումից՝ ԴԱԱ-ին Հավելված 1-ի **Ձև 2.3-ով** սահմանված ձևով գրավոր դիմում ներկայացնելու միջոցով: ԴԱԱ-ի կողմից սույն կետով սահմանված դիմումն ստանալու պահից համապատասխան հատուցման գործընթացը դադարեցվում է (ԴԱԱ-ի կողմից ընդունված ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը համարվում է չեղարկված), որի մասին ԴԱԱ-ն Հավելված 1-ի **Ձև 2.4-ով** սահմանված ձևով ծանուցում է այն անձանց, ում սույն կանոնների համաձայն պարտավոր է ծանուցել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը: Տուժողի կողմից ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումից հրաժարվելը չի զրկում նրան սահմանված ժամկետում սույն կանոններով սահմանված ընդհանուր կարգով ապահովագրական հատուցման դիմում ներկայացնելու իրավունքից:

~~115.~~114. Սույն գլուխը չի տարածվում ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ այն դիմումների գծով իրականացվող հատուցման գործընթացների վրա, որոնք ենթակա են մերժման հետևյալ հիմքերից որևէ մեկով.

1) չեն պահպանվել սահմանված ժամկետները,

2) տուժողին վնասը պատճառվել է բացառապես ոչ ավտոտրանսպորտային միջոցի կամ անհայտ ավտոտրանսպորտային միջոցի կամ առավելագույն արագությունը 50 կմ/ժ-ը կամ շարժիչի ծավալը 50 սմ$^3$-ը չգերազանցող ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ կամ այնպիսի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է,

3) դիմում ներկայացրած անձը, անկախ պատահարում մեղավորության բաշխման հանգամանքից, Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չօգտվող անձ,

4) ներկայացվել է Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կամ 5-7-րդ կետերով նախատեսված վնասների հատուցման դիմում:

~~115.1.~~114.1. Սույն կանոնների 114-րդ կետով նախատեսված դեպքերում ԴԱԱ-ն համապատասխան հիմքերն ի հայտ գալուց (դրանց տիրապետելուց) հետո՝ մեկ օրվա ընթացքում, առանց սույն գլխով նախատեսված գործընթացների իրականացման, սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 7.3-ով սահմանված ձևով կայացնում է ապահովագրական հատուցումը մերժելու մասին որոշում-ծանուցում և այն ծանուցում դիմում ներկայացրած անձին:

## ԳԼՈՒԽ 17. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

~~116.~~115. ԴԱԱ-ն մերժում կամ սույն գլխով նախատեսված դեպքերում համապատասխան չափով նվազեցնում է ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

1) տուժողը տվյալ վնասի գծով արդեն իսկ հատուցում է ստացել այլ ԱՊՊԱ պայմանագրի հիման վրա կամ Բյուրոյի անունից (անկախ հատուցման գումարը վճարված լինելու հանգամանքից) կամ վնասը պատճառած անձից և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձից կամ նրանց անունից՝ բացառությամբ, եթե նշված

անձանց միջև առկա է գրավոր ձևով կնքված և գործող համաձայնագիր կամ գրավոր հայտարարություններ, համաձայն որոնց՝ տուժողը ստանձնում է կողմերի միջև առկա այլ հարաբերություններով չպայմանավորված պարտավորություն ապահովելու նախապես իր կողմից ստացված և (կամ) նախապես իր համար վճարված գումարների վերադարձը վնաս պատճառած անձին և (կամ) վնասի համար պատասխանատու այլ անձին: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում ԴՍԱ-ի կողմից սույն կանոններով նախատեսված կարգով հատուցվող գումարից մասհանվում է տուժողի կողմից սույն ենթակետով նկարագրված կարգով ստացված գումարները (հատուցումները): Ընդ որում՝ սույն ենթակետով նախատեսված հատուցման ստացման փաստը, ի թիվս այլ հիմքերի, համարվում է հաստատված նաև այն դեպքերում, երբ տուժողը հայտարարել է պատահարի հետևանքով իրեն պատճառված վնասը հարթված լինելու (ներառյալ՝ վնասի հատուցման համար պատասխանատու անձանց նկատմամբ գույքային պահանջ չունենալու) մասին, որն իրավական նշանակություն է ունեցել քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից եզրափակիչ դատավարական ակտ կայացնելու համար, կամ այդպիսի հայտարարություն կատարված լինելու մասին նշումն առկա է օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտում, բացառությամբ հետևյալ ծախսերի՝

ա. ծախսեր, որոնց գծով մինչև համապատասխան հայտարարության կատարումը սույն կանոնների համաձայն կատարվել է կանխավճար, կամ կանխավճար կատարվելու համար ներկայացվել են վճարման հաշիվներ,

բ. ծախսեր, որոնք առաջացել են համապատասխան հայտարարությունը ներկայացվելուց հետո:

2) տուժողի կողմից խախտվել են սույն կանոններով սահմանված ապահովագրական հատուցում ստանալու համար ԴՍԱ-ին դիմելու կամ սույն կանոններով պահանջվող բոլոր փաստաթղթերը ԴՍԱ-ին ներկայացվելու ժամկետները և չի հիմնավորվել սույն կանոնների 19-րդ կետում նշված հանգամանքների առկայությունը,

3) տուժողի կողմից հատուցում ստանալու համար ներկայացված փաստաթղթերում առկա են կեղծ տեղեկություններ և (կամ) փաստաթղթեր, որոնք վերացնում են տվյալ տուժողին ապահովագրական հատուցման վճարումը մերժելու կամ ավելի պակաս չափով հատուցելու՝ սույն կանոններով նախատեսված հիմքերը,

4) տուժողը պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցի սեփականատեր է կամ օրինական հիմքով տիրապետող այլ անձ, և համաձայն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) ակտի կամ փորձաքննության արդյունքների՝ բացակայում է տվյալ պատահարում նրան վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի (միջոցների) տիրապետողի (տիրապետողների) մեղավորությունը, բացառությամբ, եթե վերջինի (վերջինների) անմեղությունը պայմանավորված է իր (իրենց) մահով կամ առողջական վիճակով կամ պատահարի առաջացման պատճառ (կամ պատճառներից մեկը) հանդիսացող այնպիսի գործոններով, որոնք, սույն կանոնների համաձայն, հաշվի չեն առնվում պատճառների փորձագետի կողմից վարորդի մեղավորության որոշման համար: Նշված բացառություն կազմող դեպքերում համապատասխան հիմքով անմեղ ճանաչված ավտոտրանսպորտային միջոցի տիրապետողի կողմից բոլոր այլ անձանց պատճառված վնասի հատուցման պարտավորությունն առաջանում է առանց նրա մեղքի՝ որպես առավել վտանգի աղբյուրով տվյալ պայմաններում իրենցից այդպիսի վտանգ

չներկայացնող օբյեկտներին և անձանց պատճառված վնասի համար պատասխանատվության արդյունք,

5) պատահարի առաջացման մեջ առկա է տուժողի կամ տուժողի ավտոտրանսպորտային միջոցը տիրապետող անձի ոչ դիտավորյալ մեղքը, որի դեպքում հատուցումը նվազեցվում է տվյալ տուժողի գույքին պատճառված վնասների՝

ա. 100%-ի չափով, եթե վերջինս տվյալ պատահարում միակ մեղավորն է,

բ. 50%-ի չափով, եթե պատահարում առկա է նաև այլ անձանց մեղքը,

6) տուժողը խախտել է սույն կանոնների 92-րդ կետի 2)-րդ կամ 3)-րդ ենթակետի պահանջները, որի արդյունքում ապահովագրական հատուցման գործընթացում ներգրավված անձանցից որևէ մեկը զրկվել է սույն կանոններով իրեն վերապահված որևէ իրավունքի իրականացման հնարավորությունից, բացառությամբ, եթե հետագայում, բայց ոչ ուշ, քան ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելը, վերացվել են խախտման հետևանքները,

7) 6.1) առկա չէ ԱՊՊԱ պատահար՝ ներառյալ չի առաջացել սույն կանոնների 51-րդ կետով նախատեսված վնասներից ոչ մեկը,Օրենքով կամ սույն կանոններով նախատեսված այլ դեպքերում: *(115-րդ կետը փոփ. և լրաց. է 29/09/2020թ թիվ 34-Ն)*

~~117.~~116. Բյուրոյի անունից հատուցման մերժման կամ նվազեցման հիմքերը սահմանված են Օրենքով: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Ն)*

## ԳԼՈՒԽ 18. ՀԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

~~118.~~117. Տուժողին վճարված ապահովագրական հատուցման չափով սույն գլխով նախատեսված կարգով և դեպքերում հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռքբերում ՀՊԱ-ն: Մի քանի ՀՊԱ-ի առկայության դեպքում յուրաքանչյուր ՀՊԱ հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք է ձեռքբերում վճարված հատուցման գումարում օրենքով նախատեսված իր մասնաբաժնին համապատասխան:

~~119.~~118. Հետադարձ պահանջի իրավունքն առաջանում է հետևյալ դեպքերում՝

1) *վնաս պատճառած անձի նկատմամբ, եթե*՝

ա. նա ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցը վարել է ալկոհոլի, թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի ազդեցության ներքո: Ընդ որում, սույն պարբերության իմաստով անձը համարվում է որպես ալկոհոլի ազդեցության ներքո գտնվող միայն ալկոհոլի այնպիսի ազդեցության դեպքում, որը, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի դրույթների, համարվում է ոչ սթափ վիճակ,

բ. նա առանց հիմնավոր պատճառի լքել է պատահարի վայրը կամ խուսափել է ալկոհոլի, թմրանյութերի կամ այլ հոգեմետ նյութերի օգտագործման փաստի վերաբերյալ քննություն անցնելուց: Ընդ որում, սույն պարբերության իմաստով անձը չի համարվում պատահարի վայրը լքած կամ համապատասխան քննություն անցնելուց խուսափած, եթե պատշաճ կերպով իրականացրել է սույն կանոնների 89-րդ կետով նախատեսված գործողությունները,

գ. նա ապահովագրական պատահարի պահին չի ունեցել ավտոտրանսպորտային միջոցը վարելու իրավունք կամ օրենքով սահմանված կարգով զրկված է եղել այդպիսի իրավունքից, բացառությամբ սույն կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված դեպքի: Ընդ որում՝ սույն պարբերության և սույն կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված դեպքերում ապահովագրական պատահարի

պահին անձի վարորդական վկայականի գործողության ժամկետի ավարտված լինելը կամ վարորդական վկայականը վարորդի մոտ չգտնվելը ինքնին հիմք չէ սույն պարբերության կամ սույն կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով հետադարձ պահանջի իրավունքի կիրառման համար: Սույն պարբերության և սույն կետի 2)-րդ ենթակետի «գ» պարբերության հիմքով հետադարձ պահանջի իրավունքը չի կիրառվում նաև այն դեպքերում, երբ վնասը պատճառվել է.

ա) վարորդական վկայական ստանալու համար քննություններին մասնակցելու շրջանակներում՝ քննության ընթացքում կամ

բ) գործնական վարման ուսուցում անցնող անձի կողմից, և եթե պահպանված են գործնական վարման ուսուցման նպատակով Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները (ներառյալ՝ տեխնիկական պահանջները),

դ. սահմանված ժամկետում և կարգով Ապահովագրողը չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,

2) *վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (Ապահովադրի) նկատմամբ, եթե՝*

ա. ավտոտրանսպորտային միջոցը վնասի պատճառման պահի դրությամբ չի անցել տեխնիկական զննություն, և պատահարի առաջացման անմիջական պատճառ է դարձել ավտոտրանսպորտային միջոցի այնպիսի անսարքությունը, որը կարող էր բացահայտվել տեխնիկական զննություն անցնելու դեպքում,

բ. սահմանված ժամկետում և կարգով ՊԿԱ-ն չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին,

գ. ավտոտրանսպորտային միջոցի վարումը վստահել է այն վարելու իրավունք չունեցող անձին և գիտեր կամ կարող էր իմանալ, որ այդ անձը չունի վարելու իրավունք:

դ. պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ՊԿԱ-ին ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ՊԿԱ-ին մինչև ապահովագրական պատահարը: Ընդ որում, սույն պարբերության իմաստով՝ էական նշանակություն ունեցող հանգամանքներ են համարվում Ապահովադրի կողմից ներկայացված՝ սույն կանոնների **Հավելված 2.2**-ով նախատեսված այն փաստաթղթերի և տեղեկությունների կեղծ լինելը, որոնք հիմք են ընդունվել ԱՊՊԱ պայմանագրի կնքման (փոփոխության) համար, և որոնց՝ իրականությանը համապատասխանող պայմաններով ԱՊՊԱ պայմանագրի կնքման (փոփոխության) դեպքում ենթակա կլիներ վճարման ավելի բարձր ապահովագրավճար: Բոլոր դեպքերում, Ապահովագրողի կողմից սույն պարբերության հիմքով հետադարձ պահանջ չի կարող կիրառվել ինքնին այն տվյալների սխալ լինելու համար, որոնք սույն կանոնների 43-րդ կետով նախատեսված դեպքերում և կարգով ստացվել են ԱՄՄՊ-ից, կամ որոնց հիման վրա պայմանագիրը կնքվել է այդ նույն կետով սահմանված դեպքերում և կարգով՝ ներկայացված փաստաթղթերում և ԱՄՄՊ-ում անհրաժեշտ տեղեկատվության բացակայության հիմքով համանման ավտոտրանսպորտային միջոցի համար կիրառելի համապատասխան տեղեկատվությունը հիմք ընդունելու արդյունքում:

~~120.~~119. Սույն կանոնների 118-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հետադարձ պահանջի իրավունքի իրականացման հիմքերը բոլոր դեպքերում համարվում են առկա, եթե ապացուցվում է, որ վնաս պատճառած

Ավտոտրանսպորտային միջոցը պատահարի պահին իրականում վարել է այլ անձ, քան նշվել է պատահարի վերաբերյալ կազմված փաստաթղթերում: Սույն կետով նախատեսված դեպքերում հետադարձ պահանջի իրավունքը ծագում է իրական վնաս պատճառած անձի նկատմամբ, ով համարվում է հետադարձ պահանջի հիմք հանդիսացող փաստերը թաքցրած:

~~121.~~120. Եթե սույն գլխի համաձայն՝ ՀՊԱ-ն հետադարձ պահանջի իրավունք է ձեռք բերում մի քանի անձի նկատմամբ, ապա այդ անձինք ՀՊԱ-ի նկատմամբ հանդես են գալիս որպես համապարտ պարտապաններ:

~~122.~~121. Այն դեպքում, երբ ՀՊԱ-ն մտադիր է օգտվել հետադարձ պահանջի իրականացման իր իրավունքից, ապա նման պահանջը ՀՊԱ-ի կողմից սահմանված ձևով և բովանդակությամբ նախ և առաջ պետք է ներկայացվի պարտապանին ծանուցում իրականացնելու միջոցով՝ պարտավորության կատարման համար ողջամիտ ժամկետ տրամադրելով:

~~123.~~122. Սույն գլխով նախատեսված դեպքերում և կարգով հետադարձ պահանջի իրավունքի իրացումից և դրա արդյունքում՝ ԱՊՊԱ պատահարների հիման վրա վճարված ողջ գումարը, ինչպես նաև հատուցման վճարման և (կամ) հետադարձ պահանջի իրականացման գծով պարտապաններից գանձվող այլ ծախսերը ՀՊԱ-ին վճարվելու (ցանկացած այլ եղանակով մարվելու) պահից հետո՝ 3 օրվա ընթացքում, ՀՊԱ-ն այդ մասին համապատասխան տեղեկատվությունը մուտքագրում է ԱՄՄՊ-ում:

~~124.~~123. Բյուրոյի անունից հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի ներկայացման հիմքերը սահմանված են Օրենքով: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

## ԲԱԺԻՆ 4. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## ԳԼՈՒԽ 19. ՏՈՒՅԺԵՐ ԵՎ ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

~~125.~~124. Ապահովագրական հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների, Վնասված գույքի առանձնացված գնահատման գործընթացի իրականացման, ապահովագրական հատուցման վճարման և ծանուցումների իրականացման համար սույն կանոններով նախատեսված ժամկետների խախտման դեպքում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձն իրավունք ունի ԴՍԱ-ից պահանջել յուրաքանչյուր կետանցված օրացուցային օրվա համար վճարել տույժ՝ Օրենքով սահմանված չափով, իսկ Օրենքով համապատասխան խախտման համար տույժ սահմանված չլինելու դեպքում՝ տուժողի կրած տվյալ տեսակի վնասի համար նախատեսված ապահովագրական գումարի 0,1 տոկոսի չափով, որը չի կարող պակաս լինել հիսուն հազար ՀՀ դրամից, եթե միևնույն հատուցման գործընթացում սույն կանոններով նախատեսված բոլոր գործողությունների համար սահմանված ժամկետների կետանցված օրացուցային օրերի քանակը 7 և ավելի է: Ընդ որում՝ միևնույն համադրելի ժամանակահատվածում ԴՍԱ-ի կողմից սույն կանոններով նախատեսված տարբեր գործընթացներ կետանցվելու դեպքում այդ ժամանակահատվածի համար տույժերը հաշվարկվում են մեկ անգամ: ԴՍԱ-ն պարտավոր է սույն կետով նախատեսված տույժը ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձին վճարել վերջինի կողմից գրավոր դիմումը (պահանջը) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում:

~~126.~~125. Փորձագետի կողմից փորձաքննությունների և վնասված գույքի առանձնացված գնահատման գործընթացի համար սույն կանոններով նախատեսված ժամկետների խախտման դեպքում փորձագետին պատվեր ներկայացրած անձն իրավունք ունի փորձագետից պահանջել վճարել տույժ այն չափով, որ չափով համապատասխան ժամկետների խախտման համար տույժ վճարելու պահանջ ներկայացնելու՝ սույն կանոններով նախատեսված իրավունք է ձեռք բերում ապահովագրական հատուցում վճարելու վերաբերյալ դիմում ներկայացրած անձը: Փորձագետը պարտավոր է սույն կետով նախատեսված տույժը վճարել պատվեր ներկայացրած անձին՝ վերջինի կողմից գրավոր դիմումն (պահանջն) ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, եթե վերջիններս միմյանց միջև կնքված պայմանագրով վճարման այլ կարգ և (կամ) եղանակ չեն սահմանել: Այն դեպքում, երբ սույն կետով նախատեսված պատվերը ներկայացվել է ոչ ԴՍԱ-ի կողմից, ԴՍԱ-ն սույն կետով նախատեսված միևնույն պահանջը ձեռք է բերում պատվեր ներկայացրած անձի նկատմամբ:

~~126.1.~~125.1. ԱՊՊԱ պայմանագրի վերակնքման կամ ապահովագրական այլ ծառայությունների վերաբերյալ առաջարկություն որևէ եղանակով ներկայացնելու նպատակով սույն կանոնների 17-րդ կետում նշված տվյալները կամ դրանց մի մասը նշված կետով չնախատեսված Ապահովագրողի կողմից կամ նրա անունից օգտագործվելու դեպքում (այսուհետ՝ ապօրինի տեղեկացում) համապատասխան տվյալների կրող Ապահովադիրն իրավունք ունի ապօրինի տեղեկացում իրականացրած անձից պահանջել հատուցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված վնասները և (կամ) վճարել տուգանք՝ հետևյալ դեպքերում և չափով.

1) եթե սույն կետում նշված վնասի չափը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված չէ, ապա տուգանքի չափ է սահմանվում երեք հարյուր հազար ՀՀ դրամը՝ տեղեկատվության ապօրինի օգտագործման յուրաքանչյուր դեպքի համար,

2) եթե ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված է վնասի չափը, և այն պակաս է երեք հարյուր հազար ՀՀ դրամից, ապա տուգանքի չափ է սահմանվում տեղեկատվության ապօրինի օգտագործման յուրաքանչյուր դեպքի համար՝ երեք հարյուր հազար ՀՀ դրամի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված վնասի չափի տարբերությունը:

~~126.2.~~125.2. Սույն կանոնների 125.1-րդ կետով սահմանված ՝ ապօրինի տեղեկացման փաստը և այն իրականացրած անձը համարվում են հաստատված գործն ըստ էության լուծող և օրինական ուժի մեջ մտած դատական ակտով կամ քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված այլ եզրափակիչ դատավարական ակտով կամ անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմնի համապատասխան ակտով:

~~126.3.~~125.3. Սույն գլխի իմաստով ապօրինի տեղեկացում իրականացրած անձ է համարվում.

1) Ապահովագրողը, եթե ԱՊՊԱ պայմանագրի վերակնքման կամ ապահովագրության այլ տեսակների գծով առաջարկությունը ներկայացվել է Ապահովագրողի, նրա աշխատողի և (կամ) այլ լիազորված անձի՝ ներառյալ ապահովագրական գործակալի և (կամ) նրա աշխատողի (լիազորված անձի) կողմից՝ բացառությամբ սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

2) Ապահովագրական գործակալը, եթե ԱՊՊԱ պայմանագրի վերակնքման կամ ապահովագրության այլ տեակների գծով առաջարկությունը ներկայացվել է

ապահովագրական գործակալի և (կամ) նրա աշխատողի (լիազորված անձի) կողմից, և առկա է այդ ապահովագրական գործակալի կողմից ստորագրված՝ սույն կանոնների 125.4-րդ կետով նախատեսված գրավոր պարտավորությունը:

~~126.4.~~125.4. Ապահովագրողները պարտավոր են իրենց անունից ԱՊՊԱ պայմանագրի կնքման (ներառյալ՝ կնքման գործընթացի կազմակերպման կամ օժանդակման) իրավասություն տրամադրել միայն այն ապահովագրական գործակալներին, որոնք անվերապահ գրավոր պարտավորություն են ստանձնել սույն գլխով սահմանված դեպքերում և կարգով երրորդ անձանց վճարել վնասի և (կամ) տուգանքի գումարները, եթե սույն կանոնների 125.2-րդ կետով նախատեսված փաստաթղթերից որևէ մեկով հաստատվել է, որ ապօրինի տեղեկացումն իրականացվել է իրենց կողմից: Ապահովագրողը Բյուրոյի պահանջով պարտավոր է սույն կետով նախատեսված գրավոր պարտավորությունները տրամադրել Բյուրոյին՝ համապատասխան պահանջն ստանալուց հետո՝ մեկ օրվա ընթացքում:

~~126.5.~~125.5. Ապօրինի տեղեկացում իրականացրած անձը պարտավոր է սույն կանոնների 125.1-րդ կետով նախատեսված վնասի գումարը և (կամ) (տուգանքը) համապատասխան պահանջ ներկայացրած անձին վճարել վերջինի կողմից գրավոր դիմումը (պահանջը) և սույն կանոնների 125.2-րդ կետով նախատեսված փաստաթղթերից որևէ մեկն ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում: *(125.1-րդ, 125.2-րդ, 125.3-րդ, 125.4-րդ և 125.5-րդ կետերը լրաց. են 31/03/2020թ թիվ 9-Լ)*

## ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԽԱՐԴԱԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

~~127.~~126. ԱՊՊԱ պայմանագրից բխող վեճերը կարգավորվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

~~128.~~127. Տարաձայնությունների դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն: Ընդ որում, ապահովագրական հատուցում վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշումների՝ դատական կարգով վիճարկման դեպքում Բյուրոն և Ապահովագրողները ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ համապատասխան դատավարական գործողությունները, որպեսզի՝

1) նշված բոլոր գործերով որպես պատասխանող հանդես գա ԴՍԱ-ն,

2) նշված այն գործերով, որոնք վերաբերում են կամ նաև վերաբերում են պատահարի առաջացման պատճառներին (կողմերի մեղավորությանը), ՀՊԱ-ն հանդես գա որպես երրորդ անձ,

3) նշված այն գործերով, որոնք չեն վերաբերում պատահարի առաջացման պատճառներին (կողմերի մեղավորությանը), ՀՊԱ-ն որևէ կարգավիճակով մասնակից չլինի:

~~128.1.~~127.1. Եթե պատճառների փորձագետի կողմից տրամադրված փորձագիտական եզրակացության «հետևություններ» դաշտում նշում է կատարված պատահարի ձևացման և (կամ) տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի՝ վթարի հետ անհամատեղելիության մասին, ապա այդ հիմքով փորձաքննություն պահանջող կողմը հանցագործության վերաբերյալ հաղորդում է ներկայացնում համապատասխան իրավապահ մարմիններին: Սույն կետով սահմանված պահանջը չի

տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն կանոններով սահմանված կարգով ներկայացվել է դիմումին ընթացք չտալու մասին դիմում:

~~128.2.~~127.2. ԴՍԱ-ն և ՀՊԱ-ն պարտավոր են համագործակցել ապահովագրական խարդախությունների դեմ պայքարում, մասնավորապես միմյանց տրամադրել տեղեկատվություն՝ համապատասխան հատուցման գործընթացի շրջանակներում ապահովագրական խարդախությունների հետ կապված հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու մասին (առնվազն հաղորդման լուսապատճենը), այդպիսի հաղորդում ներկայացնելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում, եթե դա չի հանգեցնի օրենքով սահմանված որևէ արգելքի խախտման:

~~129.~~128. ԱՊՊԱ պայմանագրի կնքմամբ Ապահովադիրը հաստատում է իր տեղեկացվածությունն այն մասին, որ ապահովագրական խարդախությունների կատարումն առաջացնում է Օրենքով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառում:

*Հավելված 1*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների*
*Ձև 1.1*

## *ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳՐԻ ԵՎ ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՁԵՎԸ*

| *Ապահովագրական ընկերության լոգոփիպը* | ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ | ՎԿԱՅԱԳԻՐ N<br>S |
|---|---|---|

*Ապահովագրության դասը՝ Ցամաքային Ավտոտրանսպորտային միջոցների (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն*

| | | | |
|---|---|---|---|
| 1 | **Ապահովագրող** | | |
| 2 | **Ապահովադիր** | | |
| 3 | **Ավտոտրանսպորտային միջոցի (Ա/մ) հաշվառման համարանիշ, Ա/մ տեսակ, Ա/մ շարժիչի հզորություն, Ա/մ օգտագործման նպատակ** | | |
| | | | |
| | **Ա/մ քանակ** | | |
| 4 | **Ապահովագրության ժամկետ** | | |
| 5 | **Ապահովագրավճար առանց ԲՄ դասի**<br>**Բոնուս/Մալուս**<br>**Վճարման ենթակա ապահովագրավճար** | | |
| 6 | **Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ** | | |

**7 Ապահովագրության պայմաններ**

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության ընդհանուր պայմանները (սույն պայմանագրում, նաև՝ ԱՊՊԱ պայմաններ)՝ ներառյալ ապահովագրական գումարի չափը, պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ստացման ու օգտագործման պայմանները, ապահովագրական պատահարները (ռիսկերը) և սույն պայմանագրի շրջանակներում կամ դրանից դուրս ԱՊՊԱ ոլորտում իրականացվող ծանուցումների կատարման կարգն ու պայմանները, սահմանված են Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի (այսուհետ՝ Բյուրո) իրավասու մարմնի կողմից հաստատված և Բյուրոյի՝ www.appa.am պաշտոնական ինտերնետային կայքի «Իրավական ակտեր» բաժնում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններով, որոնք կիրառվում են անմիջականորեն: ԱՊՊԱ ընդհանուր պայմանների առանձին դրույթներ կարող են փոփոխվել, վերացվել կամ լրացվել բացառապես այն ընդունած մարմնի կամ Կենտրոնական բանկի կողմից՝ օրենքով սահմանված կարգով, որի մասին Ապահովադիրը տեղեկանում է Բյուրոյի վերոհիշյալ ինտերնետային կայքից, որտեղ փոփոխությունները և (կամ) լրացումները հրապարակվում են գործողության մեջ մտնելու պահից առնվազն տասն օրացուցային օր առաջ:

**7"1 Թույլտվություն**

Սույն պայմանագրի կնքմամբ Ապահովադիրը թույլատրում է Բյուրոյին և դրա անդամ ապահովագրական ընկերություններին ինչպես սույն պայմանագրի կնքման և գործողության ընթացքում, այնպես էլ պայմանագրի գործողության ավարտից հետո միմյանց միջև կամ երրորդ անձանց հետ ցանկացած եղանակով և կրիչի վրա շրջանառել (ստանալ և տրամադրել) իր վերաբերյալ ցանկացած փաստաթուղթ, տեղեկություն, տեսանյութ, լուսանկար կամ այլ նյութ՝ ԱՊՊԱ պայմանագրում անհրաժեշտ տվյալների արտացոլման կամ արտացոլված տեղեկությունների ստուգման, ԱՊՊԱ պատահարի և դրա գծով իրականացվող հատուցման գործընթացի կարգավորման՝ ներառյալ փորձաքննությունների իրականացման, ինչպես նաև հատուցման վճարմամբ պայմանավորված հետադարձ պահանջի իրավունքի արդյունավետ իրականացման և ԱՊՊԱ ոլորտում անհրաժեշտ այլ գործողություններ իրականացնելու համար: <u>Ընդ որում, Ապահովադիրն իրավունք ունի ցանկացած պահի գրավոր եղանակով մասամբ կամ ամբողջությամբ հետ կանչել սույն կետում նշված թույլտվությունը, որը հիմք է Ապահովագրողի կողմից սույն պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ հետ է կանչվել միայն ԱՊՊԱ կամ ապահովագրության այլ տեսակների գծով առաջարկություն ներկայացնելու նպատակով տվյալներն օգտագործելու թույլտվությունը: Թույլտվության հետ կանչելը չի ազդում մինչ այդ իրականացված տվյալների մշակման գործողությունների օրինականության վրա:</u>

☐ <u>Թույլատրում եմ, որպեսզի սույն կետով նախատեսված տեղեկատվությունը սույն պայմանագրով ապահովագրողի (նրա անունից հանդես եկող անձի) կողմից օգտագործվի ԱՊՊԱ կամ ապահովագրության այլ տեսակների գծով առաջարկություն ներկայացնելու նպատակով:</u>

**8. Պատահարի մասին Ապահովագրողին ծանուցման ժամկետ և կարգ**

Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) պարտավոր է ապահովագրական պատահարը տեղի ունենալուց հետո 40 րոպեի ընթացքում, իսկ ապահովագրական պատահարի հետևանքով անձնական վնասների առկայության դեպքում ԱՊՊԱ պայմաններով սահմանված ժամկետներում, այդ մասին հայտնել Ապահովագրողին՝ զանգահարելով _______________հեռախոսահամարով (որևէ մեկով):

| 9 | **9.1 ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ** | **9.2 ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ** |
|---|---|---|
| | ______________________ | ______________________ |
| | ______________________ | Ծանոթացել և համաձայն եմ Բյուրոյի www.appa.am ինտերնետային կայքում հրապարակված ԱՊՊԱ ընդհանուր պայմաններին՝ ներառյալ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ընթացքում և դրանից հետո ծանուցումների կիրառման կարգին, ուստի խնդրում եմ դրանք համարել իմ կողմից ստացված:<br>______________________<br>**ստորագրություն** |

| | | |
|---|---|---|
| | **ստորագրություն** | |
| **10** | **Պայմանագրի  կնքման և Ապահովադրին տրման ամսաթիվ՝** | |
| **11** | Սույն պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Ապահովագրողը Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր _________________ : | |
| **12** | **Նշումներ** | |

| N | S | ՎԿԱՅԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾ |
|---|---|---|
| 1 | Ա/մ հաշվառման համարանիշ | |
| | Ա/մ տեսակ | |
| | Ա/մ շարժիչի հզորություն | |
| | Ա/մ օգտագործման նպատակ | |
| | Ա/մ ապահովագրավճար | |
| 2 | Ա/մ հաշվառման համարանիշ | |
| | Ա/մ տեսակ | |
| | Ա/մ շարժիչի հզորություն | |
| | Ա/մ օգտագործման նպատակ | |
| | Ա/մ ապահովագրավճար | |

| ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ԱՆՈՒՆԻՑ | ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԱՆՈՒՆԻՑ |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________<br>ստորագրություն | ____________________<br>ստորագրություն |

| Նշումներ | |
|---|---|

Ձև 7.3

**ՈՐՈՇՈՒՄ-ԾԱՆՈՒՑՈՒՄ**
***ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ***

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ամսաթիվը և հերթական համարը | համարը | օր | ամիս | տարի |
| Ծանուցում իրականացնողը | (նշվում է ծանուցումն իրականացնողի անվանումը) | | | |
| Ծանուցվող անձինք | (նշվում է դիմում ներկայացրած անձի անվանումը/անուն, ազգանունը) | | | |
| Անձը, ում հատուցման դիմումը մերժվում է | (նշվում է անուն, ազգանուն/անվանում) | | | |
| Հատուցում ստանալու վերաբերյալ դիմումի ներկայացման ամսաթիվը, որին վերաբերում է սույն որոշում-ծանուցումը | օր | ամիս | | տարի |
| Պատահարի միասնական նույնականացուցիչը, որին վերաբերում է սույն որոշում-ծանուցումը | | | | |

| | |
|---|---|
| **1. Հատուցում ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումը մերժվում է հետևյալ հիմնավորմամբ՝** | |
| ☐ | Խախտվել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների 94-րդ կետը, այն է՝ տուժողը (տուժողի լիազորված անձը, իրավահաջորդը) չի պահպանել հատուցում ստանալու համար դիմելու եռամսյա ժամկետը և չի ապացուցել ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու համար նշված կանոնների 18-րդ կետով սահմանված պայմանների առկայության փաստը: |
| ☐ | Խախտվել է Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրոյի «ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» RL 1-001 կանոնների 98-րդ կետը, այն է՝ տուժողը (տուժողի լիազորված անձը, իրավահաջորդը) չի պահպանել դիմումին կից ներկայացման ենթակա փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված եռամսյա (ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի դեպքում՝ մեկ տարվա) ժամկետը և չի ապացուցել ժամկետի բացթողումը հարգելի ճանաչելու համար նշված կանոնների 18-րդ կետով սահմանված պայմանների առկայության փաստը: |
| ☐ | Վնասը պատճառվել է ոչ ավտոտրանսպորտային միջոցի կամ անհայտ ավտոտրանսպորտային միջոցի կամ առավելագույն արագությունը 50 կմ/ժ-ը կամ շարժիչի ծավալը 50 սմ3-ը չգերազանցող ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ |
| ☐ | Վնասը պատճառվել է այնպիսի ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: |
| ☐ | Դիմում ներկայացրած անձը, անկախ պատահարում մեղավորության բաշխման հանգամանքից, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում է ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չօգտվող անձ |
| ☐ | Ներկայացվել է «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կամ 5-7-րդ կետերով նախատեսված վնասների հատուցման դիմում |
| **Սույն որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետը** | Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն ծանուցելուց հետո՝ հինգերորդ աշխատանքային օրը, եթե այդ ընթացքում չստացվեն մերժման հիմքերի բացակայությունն ապացուցող փաստաթղթեր: |

| | | |
|---|---|---|
| **Որոշումը հաստատող Ապահովագրողի իրավասու անձի (անձանց) տվյալները և ստորագրությունը** | (անունը, ազգանունը և պաշտոնը) | (ստորագրություն) |

**Ձև 9.2**
**(Ձև 9.2 փոփ. է 27/10/2020թ թիվ 38-Լ)**

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծանուցման հերթական համարը և ամսաթիվը | | | | |
| | համարը | օր | ամիս | տարի |
| Կրկնակի փորձաքննություն նշանակման վերաբերյալ ծանուցման համարը և ամսաթիվը | | | | |
| | համարը | օր | ամիս | տարի |
| Ծանուցումն իրականացնողը | Հայաստանի Ավտոապահովագրողների Բյուրո (Բյուրո) | | | |
| Ծանուցում ստացողը | | | | |

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԿՆԱԿԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Սույն ծանուցմամբ տեղեկացնում ենք, որ՝**

| | | |
|---|---|---|
| ☐ | Կրկնակի փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմում ներկայացրած անձի կողմից ներկայացված դիմումի համաձայն՝ կրկնակի փորձաքննության իրականացման գործընթացը դադարեցվել է: | |
| ☐ | Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունը չի իրականացնել և համապատասխանաբար սույն ծանուցմանը կցված է փորձաքննության անհնարինության վերաբերյալ գրության՝ հետևյալ տվյալներով էլեկտրոնային տարբերակը | |
| | Անհնարինության վերաբերյալ գրության համարը | |
| ☐ | Բյուրոյի կողմից նշանակված կրկնակի փորձաքննությունն իրականացվել է: ~~և h~~Համապատասխան փորձաքննության եզրակացությունը և դրա հիման վրա կայացված ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը կծանուցվեն Ձեզ 1 աշխատանքային օրվա ընթացքում ~~աբար սույն ծանուցմանը կցված են փորձաքննության եզրակացության հետևյալ տվյալներով էլեկտրոնային տարբերակը՝~~ | |
| | ~~Եզրակացության հերթական համարը~~ | |

Համաձայն «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-4-րդ մասերի դրույթների՝ կրկնակի փորձաքննության նշանակումից հետո լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննություն նշանակվել չի կարող: Կրկնակի փորձաքննության արդյունքները կարող են բողոքարկվել միայն դատական կարգով:

| | | |
|---|---|---|
| Բյուրոյի իրավասու անձը | | |
| | (անունը և ազգանունը, պաշտոնը) | (ստորագրություն) |

*Հավելված 2*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների*

*ՀԱՎԵԼՎԱԾ 2.1. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ*

| 1. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ | |
|---|---|
| 1. | Վկայագիրը, ինչպես նաև սույն հրահանգով նախատեսված դեպքում Վկայագրի հավելվածը կազմվում (ստորագրվում) են երկու օրինակից, որոնցից մեկ օրինակը, տրվում է Ապահովադրին (Ապահովադրի ներկայացուցչին), իսկ մյուս օրինակը պահվում է Ապահովագրողի (Ապահովագրողի լիազորված անձի կամ ապահովագրական գործակալի) մոտ: Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Ապահովադրին նույնականացնող տվյալները համապատասխան էլեկտրոնային համակարգում մուտքագրվելու և դրան ի պատասխան՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին Վկայագրի (հավելվածի)՝ սույն կանոններով նախատեսված տեխնիկական պահանջներին բավարարող էլեկտրոնային տարբերակի ստացման ուժով համարվում է, որ տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը կնքվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով, որը հնարավորություն է տալիս հաստատելու դրա իսկությունը և ճշգրիտ որոշելու, որ այն ելնում է պայմանագրի կողմից, և որի դեպքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ չպաշտպանված Վկայագիրն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը: |
| 2. | Վկայագիրը լրացվում է հայերենով, բացառությամբ փաստաթղթերի ոչ հայատառ սերիաների և Ավտոտրանսպորտային միջոցի համարանիշերի: |
| 3. | Վկայագրի տվյալները լրացվում են մեկ էջի վրա: |
| 4. | Մեկ պայմանագրով մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրելու դեպքերում Վկայագրին կցվում է Վկայագրի հավելվածը: |
| 5. | Վկայագիրը և դրա հավելվածները լրացվում են համակարգչի կամ այլ էլեկտրոնային համակարգի կիրառման միջոցով և տպվում են սպիտակ թղթի վրա՝ սև գույնով (բացառությամբ ընկերության լոգոտիպի և մինչև «1. Ապահովադիր» դաշտը (չներառելով այդ հորիզոնականը) լրացվող տեղեկատվության գույնի, որի ընտրությունը կատարվում է տվյալ ընկերության կողմից) և առնվազն համակարգչի 7 տառաչափով (բացառությամբ Վկայագրի տողատակի նշումների, որոնք կարող են տպվել ավելի փոքր տառաչափով), «Գրապալատ» տառատեսակով (համակարգչային անվանումը՝ «ՂԷԱ Գրապալատ» (GHEA Grapalat))՝ «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգով: Վկայագրի ձևի խախտում չեն համարվում Վկայագիրը պարունակող թղթի վրա կատարված դիզայներական ձևավորումները, որոնք չպետք է խոչընդոտեն Վկայագրի տեքստի լիարժեք ընթեռնելիությանը: |

| | |
|---|---|
| 6. | Վկայագրերը կազմվում են այնպես, որպեսզի պահպանվեն արտացոլման ենթակա բոլոր տվյալները՝ ըստ սույն կանոններով հաստատված Վկայագրի ձևի բաժինների և յուրաքանչյուր բաժնի ներսում լրացման ենթակա տվյալների հաջորդականության: Վկայագրի բոլոր համարակալված բաժինները և դրանց ներքո գտնվող դաշտերը (աղյուսակները) պետք է միմյանցից սահմանազատվեն հստակ տեսանելի սահմանագծերով: Վկայագրի 3-րդ կետի չլրացվող դաշտը, ինչպես նաև Վկայագրի 12-րդ կետի անհրաժեշտության բացակայության դեպքում՝ Վկայագրի այդ դաշտը չեն տպագրվում: |

## 2. ԱՊՊԱ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԸ

| **Վկայագրի դաշտի անվանումը կամ համարը** | **Լրացման ենթակա դաշտերում լրացվող տեղեկատվության բովանդակությունը (բոլոր տեղեկությունները Վկայագրում ենթակա են պարտադիր լրացման)** |
|---|---|
| ***«Ապահովագրական ընկերության լոգոտիպը»*** | Ապահովագրողի լոգոտիպը: |
| ***«Վկայագիր N»*** | Վկայագրի սերիան և հերթական համարը՝ յուրաքանչյուր վանդակում մեկ նիշ՝ սույն հավելվածի ենթահավելվածով սահմանված պահանջներին համապատասխան: |
| **1.** | Ապահովագրողի՝<br>1) անվանումը,<br>2) գտնվելու վայրի հասցեն,<br>3) հեռախոսահամարները,<br>4) էլեկտրոնային փոստի հասցեն,<br>5) ինտերնետային կայքը,<br>6) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում գրանցման համարը,<br>7) լիցենզիայի համարը, ՀՎՀՀ-ն, բանկային հաշվեհամարը: |

Նախքան ԱՊՊԱ վկայագրում Ապահովադրի վերաբերյալ տվյալներ լրացնելն ԱՄՄՊ համակարգում ընտրվում է ԱՊՊԱ պայմանագրի կնքման հետևյալ տարբերակներից մեկը՝

Ապահովագրման ենթակա Ավտոտրանսպորտային միջոցը՝

1) գրանցված է Հայաստանի Հանրապետությունում, եթե Ավտոտրանսպորտային միջոցը սահմանված կարգով գրանցված է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Ընդ որում, «գրանցված է Հայաստանի Հանրապետությունում» տարբերակն ընտրելիս անհրաժեշտ է ընտրել՝

ա. «Հաշվառված է ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից », եթե տրանսպորտային միջոցը սահմանված կարգով հաշվառված է Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից,

բ. «Հաշվառված չէ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից » եթե տրանսպորտային միջոցը

<table>
<tr><td colspan="3">սահմանված կարգով հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության կամ Արցախի Հանրապետության ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու մարմնի կողմից:<br>2) գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում, եթե Ավտոտրանսպորտային միջոցը սահմանված կարգով գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Ընդ որում, «գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում» տարբերակն ընտրելիս ընտրվում է նաև ստորև նշված տարբերակներից համապատասխան տարբերակը՝<br>ա. «Օտարերկրյա հաշվառման համարանիշներով տրանսպորտային միջոց»,<br>բ. «Օտարերկրյա տարանցիկ հաշվառման համարանիշներով տրանսպորտային միջոց»,<br>գ. «Ժամանակավոր հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց»,<br>դ. «Տրանսպորտային միջոց առանց հաշվառման համարանիշի»:</td></tr>
<tr><td rowspan="2">2.</td><td colspan="2">Ապահովադրի՝</td></tr>
<tr><td>Ֆիզիկական անձի դեպքում՝</td><td>1) Անունը և ազգանունը,<br>2) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ անձը հաստատող փաստաթղթերից որևէ մեկի սերիան և համարը,<br>3) հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը (չի լրացվում այն անձանց համար, ում, օրենքի համաձայն, հանրային ծառայությունների համարանիշ չի հատկացվում),<br>4) հաշվառման հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,<br>5) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: Եթե ԱՊՊԱ պայմանագիրը կնքվում է ՊԿԱ-ի գլխամասային գրասենյակում կամ մասնաճյուղում և ներկայացվել է ԱՊՊԱ պայմանագրի շրջանակներում Ապահովադրին վճարման ենթակա գումարներն ստանալու լիազորություններ պարունակող՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիր, ապա կարող է լրացվել նաև լիազորված անձին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրի լիազորած անձին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի, լիազորված անձի անվան և ազգանվան և բանկի անվանման պարտադիր նշումով: Սույն ենթակետով նախատեսված տեղեկատվությունը ենթակա է պարտադիր լրացման միայն Հայաստանի</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն համապատասխան տեղեկատվությունը ներկայացվելու դեպքում,<br>6) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը: |
| | ***իրավաբանական անձի դեպքում*** | 1) լրիվ անվանումը,<br>2) ՀՎՀՀ-ն,<br>3) գտնվելու վայրի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,<br>4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը,<br>5) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով: |
| | ***Հայաստանի Հանրապետության դեպքում*** | 1) պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը,<br>2) պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,<br>3) Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով:<br>4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը |

| | | |
|---|---|---|
| | ***Օտարերկրյա պետության դեպքում՝*** | 1) երկիրը,<br>2) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը (դեսպանատուն, հյուպատոսարան, այլ),<br>3) օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,<br>4) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով:<br>5) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը |
| | ***Համայնքի դեպքում՝*** | 1) համայնքի անվանումը<br>2) համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը,<br>3) համայնքի անունից հանդես եկող մարմնի հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,<br>4) Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամարը՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով:<br>5) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը |
| | ***Միջազգային կազմակերպության դեպքում՝*** | 1) միջազգային կազմակերպության անվանումը,<br>2) հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլեկտրոնային փոստի հասցեն,<br>3) Ապահովադրին պատկանող և Հայաստանի Հանրապետությունում գործող բանկում բացված բանկային հաշվեհամարը (ենթակա է լրացման միայն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հաշվառված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով |

<table>
<tr><td></td><td></td><td>Հայաստանի Հանրապետության տարածք վարելու միջոցով մուտք գործող Ավտոտրանսպորտային միջոցների գծով երեք ամսից ոչ ավելի ժամկետով կնքվող պայմանագրերի) Ավտոտրանսպորտային միջոցի գծով կնքվող պայմանագրերում, իսկ այլ դեպքերում՝ միայն Ապահովադրի կողմից ներկայացվելու դեպքում)՝ «Ապահովադրին պատկանող բանկային հաշվեհամար» բառերի և բանկի անվանման պարտադիր նշումով:<br>4) Բոնուս-Մալուս դասը և դասի վերջին փոփոխման ամսաթիվը</td></tr>
<tr><td>3.</td><td colspan="2">Վկայագրով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրվելու դեպքում լրացվում են Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցների դեպքում, իսկ մնացած Ավտոտրանսպորտային միջոցների դեպքում՝ օտարերկրյա հաշվառման համարանիշը, դրա բացակայության դեպքում Ավտոտրանսպորտային միջոցի ժամանակավոր հաշվառման համարանիշը, դրա բացակայության դեպքում նույնացման համարը (VIN), իսկ վերջինի բացակայության դեպքում՝ թափքի համարը), Հայաստանի Հանրապետությունից և Արցախի Հանրապետությունից բացի ցանկացած այլ երկրում հաշվառված Ավտոտրանսպորտային միջոցի դեպքում՝ նաև 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայի 45-րդ հոդվածով սահմանված կարգով տվյալ երկրի կողմից ընտրված տարբերանշանը՝ ենթագրով (subscript, օրինակ՝ «$_{RUS}$ H847XC177»), Ավտոտրանսպորտային միջոցի տեսակը, շարժիչի հզորությունը և դրա օգտագործման նպատակը: Համապատասխան ծրագրային լուծմամբ կարող է նախատեսվել, որ այն Ավտոտրանսպորտային միջոցների տեսակների գծով, որոնց օգտագործման բոլոր նպատակների համար ԱՊՊԱ ապահովագրավճարի հաշվարկում կիրառվում է միևնույն գործակիցը, Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակը չի լրացվում (ավտոմատ կերպով դրվում է գծիկ նշան):<br>Վկայագրով մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործումից բխող պատասխանատվություն ապահովագրվելու դեպքում Վկայագրում լրացվում է Ավտոտրանսպորտային միջոցների քանակը, իսկ Վկայագրի հավելվածում յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար լրացվում է սույն կետով մեկ Ավտոտրանսպորտային միջոցի համար սահմանված տվյալները, ընդ որում՝ Վկայագրի հավելվածի տողերն ավելացվում են Ավտոտրանսպորտային միջոցների քանակին համապատասխան:<br>Որպես Ավտոտրանսպորտային միջոցի տեսակ ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս) կամ տրոլեյբուս նշվելու դեպքում լրացվում է նաև դրա՝ առանց վարորդի նստատեղի հաշվարկված նստատեղերի քանակի մասին տեղեկատվությունը՝ համապատասխանաբար հետևյալ եղանակներից</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | մեկով՝ 1) առանց վարորդի նստատեղի՝ մինչև 17 (ներառյալ) նստատեղ ունեցող կամ 2) առանց վարորդի նստատեղի՝ 17-ից ավելի նստատեղ ունեցող: Ընդ որում, տրոլեյբուսի դեպքում նստատեղերի քանակի մասին տեղեկատվությունը մշտապես լրացվում է 2-րդ եղանակով:<br>Որպես Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ հիմք է ընդունվում հետևյալ նպատակներից որևէ մեկը (մի քանի նպատակով օգտագործվելու դեպքում նշվում է այն նպատակը, որի համար ԱՊՊԱ պայմանագրի հաշվարկում կիրառվում է ավելի բարձր գործակից)՝ | |
| | ***Պայմանագրի գործողության ընթացքում Ավտոտրանսպոր-տային միջոցի օգտագործման նպատակ*** | ***Նպատակի նկարագրություն*** |
| | **1.** Անձնական | Ֆիզիկական անձանց պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված նպատակներով |
| | **2.** Ծառայողական | Ֆիզիկական անձանցից բացի ցանկացած այլ անձին պատկանող Ավտոտրանսպորտային միջոցներ, որոնք չեն օգտագործվելու սույն մասի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված նպատակներով |
| | **3.** Առևտրային | Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև ապրանքների փոխադրման և (կամ) ծառայությունների մատուցման նպատակով |
| | **4.** Հանրային տրանսպորտ | Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև կանոնավոր ուղևորափո-խադրումներ կատարելու նպատակով |
| | **5.** Պատվերով ուղևորափոխադրումներ | Ավտոտրանսպորտային միջոցն օգտագործվելու է նաև պատվերով ուղևորափոխադրումներ իրականացնելու համար, ընդ որում, Ավտոտրանսպորտային միջոցը, անկախ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի առկայության, համարվում է սույն ենթակետով նախատեսված նպատակով օգտագործվող նաև այն դեպքերում, եթե տվյալ Ավտոտրանսպորտային միջոցը ներառված է ուղևորների փոխադրման պատվերների ստացման համար նախատեսված հատուկ էլեկտրոնային հարթակներում (ներառյալ բջջային հավելվածներում) կամ Ավտոտրանսպորտային |

| | | |
|---|---|---|
| | | միջոցի վրա առկա է կահավորման որևէ տարր, որը հանրության մոտ առաջացնում է ուղևորափոխադրման ծառայությունների մատուցման վերաբերյալ ընկալում (օրինակ՝ հետևյալ տարրերից որևէ մեկը՝ ուղևորների փոխադրման պատվերների ստացման համար նախատեսված հատուկ էլեկտրոնային հարթակների տարբերանշան, կիլոմետրի արժեք, տաքսամետր (սակաչափիչ), տանիքին, դիմապակու վրա կամ որևէ այլ մասում՝ «ՏԱՔՍԻ» (հայերեն կամ օտար լեզվով) գրառում կամ շախմատաձև դեղին և սև տարբերանշան և այլն): *(փոփ. է 31/08/2021թ թիվ 30-Լ)* |
| | **6.** Վարձակալություն | Ավտոտրանսպորտային միջոցը կարող է տրվել նաև վարձակալությամբ: |
| **4.** | պայմանագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը՝ համապատասխանաբար օր/ամիս/տարի/ժամ և օր/ամիս/տարի ֆորմատներով և հաջորդականությամբ: | |
| **5.** | «Ապահովագրավճար առանց ԲՄ դասի՝» բառերը, որը սույն կանոնների համաձայն հաշվարկված տվյալ պայմանագրի ապահովագրավճարի մեծությունն է՝ առանց ԲՄ դասը հաշվի առնելու և առանց կլորացման,<br>Առանց ԲՄ դասի ապահովագրավճարի չափը՝ «գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ»՝ առանց բացատների ֆորմատով,<br>«Բոնուս՝» կամ «Մալուս՝» բառը՝ կախված այն հանգամանքից, թե ապահովադրին տրվում է բոնուս, թե՞ մալուս,<br>Ապահովադրի Բոնուս-Մալուս դասի գործակցի կիրառման արդյունքում ապահովագրավճարի չափին ավելացման կամ նվազեցման ենթակա գումարի մեծությունը՝ «գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ»՝ առանց բացատների ֆորմատով,<br>«Վճարման ենթակա ապահովագրավճար՝» բառերը և Ապահովադրի կողմից տվյալ պայմանագրով վճարման ենթակա ապահովագրավճարի մեծությունը՝ գծիկ, թվերով արտահայտված գումար, գծիկ, ՀՀ դրամ՝ առանց բացատների ֆորմատով (օրինակ՝ Ապահովագրավճար առանց ԲՄ դասի՝ -45708-ՀՀ դրամ, Բոնուս՝ -2742-ՀՀ դրամ, վճարման ենթակա ապահովագրավճար՝ -43000-ՀՀ դրամ):<br>Այն դեպքում, երբ պայմանագրով ապահովագրվում է մեկից ավելի Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը, այս մասում նշվում են բոլոր Ավտոտրանսպորտային միջոցների համար հաշվարկված առանց ԲՄ դասի ապահովագրավճարների հանրագումարը, տրամադրվող բոնուսի կամ մալուսի չափը և վճարման ենթակա ապահովագրավճարների հանրագումարը, իսկ յուրաքանչյուր Ավտոտրանսպորտային միջոցի համար համապատասխան տեղեկատվությունը նշվում է Վկայագրին կցվող հավելվածի համապատասխան դաշտում: | |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | ապահովագրավճարի վճարման կարգը, մասնավորապես նշվում է հետևյալ տարբերակներից որևէ մեկը՝<br>1) միանվագ կամ տարաժամկետ վճարում, ընդ որում՝ սույն կանոններով նախատեսված դեպքերում ապահովագրավճարը ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին չվճարվելու և տարաժամկետ վճարման տարբերակ ընտրելու դեպքերում Վկայագրում նշվում է նաև ապահովագրավճարի կամ դրա տարաժամկետվող մասի վճարման կարգն ու ժամկետները,<br>2) կանխիկ կամ անկանխիկ, ընդ որում ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին ապահովագրավճարը (դրա մի մասը) սույն կանոններով նախատեսված կարգով «Կանխիկ» վճարման տարբերակով կնքելու դեպքում Վկայագրում նշվում է նաև տվյալ պահին փաստացի սույն կանոններով սահմանված եղանակներով կանխիկ վճարված ապահովագրավճարի չափը: | | |
| 7.1 | համապատասխան նշման վանդակում Ապահովադրի կողմից սեփական հայեցողությամբ նշման կատարում (նշման չկատարումը չի ազդում պայմանագրի կնքման վրա) համապատասխան կետում նշված տեղեկատվությունը ԱՊՊԱ կամ ապահովագրության այլ տեսակների գծով առաջարկություն ներկայացնելու նպատակով օգտագործելու համար իր թույլտվության տրամադրման վերաբերյալ: | | |
| 8. | ապահովագրողի՝ շուրջօրյա հասանելի, առնվազն երեք միաժամանակյա զանգի սպասարկման հնարավորություն ապահովող առնվազն մեկ հեռախոսահամար, որով Ապահովադիրը (Ավտոտրանսպորտային միջոցն օրինական հիմքով տիրապետող այլ անձը) կարող է զանգահարել Ապահովագրողին՝ ապահովագրական պատահարի մասին հայտնելու համար: | | |
| 9. | 9.1 | ***Ապահովագրողի անունից հանդես եկող անձի փեսակը*** | ***Ապահովագրողի անունից հանդես եկող անձի վերաբերյալ փվյալները*** |
| | | 1) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար | Գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը և Ապահովագրողի կնիքն՝ առկայության դեպքում: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում՝ միայն գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը: Ընդ որում, Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում «ստորագրություն» դաշտը չի արտացոլվում *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | | 2) Ապահովագրողի գործադիր մարմնի ղեկավար | Տվյալ լիազորված ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ստորագրությունը, անձնագրային տվյալները, լիազորագրի |

| | | | |
|---|---|---|---|
| | | չհանդիսացող այլ լիազորված ֆիզիկական անձ (կիրառելի չէ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում) | համարը և տրման ամսաթիվը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | | 3) Ֆիզիկական անձ (բացառությամբ անհատ ձեռնարկատեր) ապահովագրական գործակալ (կիրառելի չէ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում) | Անունը, ազգանունը, որպես գործակալ հաշվառման վկայականի համարը (տրվելու դեպքում), ստորագրությունը, և Ապահովագրողի հայեցողությամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | | 4) Իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկետեր ապահովագրական գործակալ (կիրառելի չէ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում) | Անվանումը, իրավասություն ունեցող անձի անունը, ազգանունը և ստորագրությունը (կնիքն՝ առկայության դեպքում), և Ապահովագրողի հայեցողու-թյամբ կարող է դրվել Ապահովագրողի կնիքը: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում կնիք և ստորագրություն չեն դրվում *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | **9.2** | ***Ապահովադրի անունից հանդես եկող անձի տեսակը*** | ***Ապահովադրի անունից հանդես եկող անձի վերաբերյալ տվյալները*** |
| | | 1) Ֆիզիկական անձ ապահովադիր | անունը, ազգանունը և ստորագրությունը: Վկայագրի՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում: Ընդ որում, Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում համաձայնության վերաբերյալ դրույթը և ստորագրությունը պարունակող դաշտերը չեն արտացոլվում *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | | 2) Իրավաբանական անձ ապահովադիր | անունը և ազգանունը, ստորագրությունը և կազմակերպության կնիքն՝ առկայության դեպքում: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն և կնիք չեն դրվում: Ընդ որում, Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքերում համաձայնության վերաբերյալ դրույթը և ստորագրությունը պարունակող դաշտերը չեն արտացոլվում *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | | 3) Ապահովադրի ներկայացուցիչ | անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, լիազորագրի համարը և (կամ) տրման ամսաթիվը և ներկայացուցչի ստորագրությունը: Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում ստորագրություն չի դրվում: *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| **10.** | Ապահովադրին Վկայագիրը տալու ամսաթիվը՝ օր/ամիս/տարի ֆորմատով և հաջորդականությամբ: | | |
| **11.** | «է կնքել» կամ «չի կնքել» բառերը՝ կախված այն հանգամանքից, թե այդ տարբերակներից որն է կիրառելի Ապահովագրողի նկատմամբ: | | |
| **12.** | 1) «Կրկնօրինակ» բառը, երբ սույն կանոնների համաձայն Ապահովադրին տրվում է Վկայագրի կրկնօրինակը,<br>2) «Սույն պայմանագիրը կնքվել է կողմերի միջև էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովող կապի միջոցով և դրա՝ սույն կանոններով նախատեսված տեխնիկական պահանջներին բավարարող էլեկտրոնային տարբերակն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ կողմերի կողմից ձեռագիր ստորագրված փաստաթուղթը» բառերը՝ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում, | | |

| | |
|---|---|
| | 3) «Սույն վկայագիրը թղթային եղանակով ստորագրված վկայագրի էլեկտրոնային տարբերակն է» բառերը՝ Ապահովադիրների կողմից առցանց էլեկտրոնային եղանակից տարբերվող ցանկացած եղանակով ԱՊՊԱ պայմանագիր կնքվելու դեպքում Վկայագրի՝ Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվող էլեկտրոնային տարբերակում: |
| Վկայագրի հավելվածը, ինչպես նաև ԱՊՊԱ պայմանագրում փոփոխություններ կատարելու վերաբերյալ համաձայնագիրը լրացվում են սույն հրահանգով Վկայագրի համապատասխան կետերով նախատեսված դաշտերի լրացման համար սահմանված կանոններին համապատասխան: | |

*Ենթահավելված*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների Հավելված 2.1-ի*

1. Սույն ենթահավելվածով սահմանվում է ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառման կարգը:

2. Վկայագիրն ունի ծածկագիր, որը բաղկացած է սերիայից և համարից, ընդ որում՝ սկզբից նշվում է սերիան, այնուհետև՝ համարը: Սերիան պարունակում է 2 նիշ, իսկ համարը՝ 6 նիշ՝ սկսած 000001-ից: Վկայագրի ծածկագրերը չեն կրկնվում, անգամ եթե տվյալ ԱՊՊԱ պայմանագիրն այլևս ուժի մեջ չէ:

3. Սերիայի նիշերը մեծատառ են և լատինատառ: Սերիայի առաջին նիշը սահմանվում է «Տ», որի բոլոր հնարավոր համակցությունների օգտագործումից հետո առաջին նիշը սահմանվում է՝ ըստ լատինական այբուբենի այբբենական հերթականության՝ սկսվելով «A»-ից և չներառելով «Տ» տառը: Երկրորդ նիշը համապատասխանաբար փոփոխվում է ըստ լատինական այբուբենի այբբենական հերթականության (SA, SB, SC … SZ, AA, AB, AC, …, AZ, BA, BB, BC, …, BZ և այլն):

4. Վկայագրի սերիաները տրամադրվում են ԱՄՄՊ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով: Ընդ որում, յուրաքանչյուր Ապահովագրողի տրամադրվում է առանձին սերիա՝ հերթական համարի բոլոր հնարավոր համակցություններով:

5. Ապահովագրողին տրամադրված սերիայի համարների բոլոր հնարավոր համակցություններն օգտագործվելու դեպքում ԱՄՄՊ համակարգի կողմից ինքնաշխատ տրամադրվում է բոլոր Ապահովագրողներին տրամադրված սերիաներին հաջորդող հերթական չօգտագործված սերիան՝ համապատասխան Ապահովագրողին ծանուցելով հերթական սերիայի տրամադրման վերաբերյալ:

6. Ապահովագրողները վարում են իրենց կողմից կնքված Վկայագրերի, ինչպես նաև վնասված, խոտանված, կորած, հափշտակված և ոչնչացված Վկայագրերի ներքին հաշվառում:

*Հավելված 2*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների*

*ՀԱՎԵԼՎԱԾ 2.2. ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՊԱՀՈՎԱԴՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ*

| | | N | Ապահովադրի կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը | Ապահովադրի կողմից ներկայացվող (հայտարարվող) տեղեկությունների ցանկը |
|---|---|---|---|---|
| Ապահովադրի վերաբերյալ | Ֆիզիկական անձանց համար | 1 | Անձը հաստատող փաստաթուղթ | 1. Ապահովադրի էլեկտրոնային փոստի հասցե,<br>2. Ապահովադրի հաշվառման (գտնվելու) հասցե,<br>3. Ապահովադրի հեռախոսահամար,<br>4. Ապահովադրին կամ, սույն կանոններով նախատեսված դեպքերում, վերջինի կողմից նոտարական կարգով վավերացված լիազորագրով տրամադրված համապատասխան լիազորություններ ունեցող անձին պատկանող բանկային հաշվեհամար (ենթակա է ներկայացման միայն Վկայագրում պարտադիր լրացման ենթակա լինելու դեպքում)<br>5. Ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակ,<br>6. ապահովագրության ժամկետ |
| | | 2 | ՀՀ քաղաքացիների դեպքում, եթե ներկայացված անձը հաստատող փաստաթուղթը չի պարունակում հանրային ծառայությունների համարանիշ, ապա այդ համարանիշը պարունակող փաստաթուղթ (սոցիալական ապահովության քարտ կամ համապատասխան տեղեկանք) կամ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանք | |
| | Իրավաբա-նական անձանց համար | 1 | Հարկ վճարողի հաշվառման համարը պարունակող փաստաթուղթ | |
| | Այլ սուբյեկտների համար | | | |
| Ավտոտրանսպոր-տային միջոցի (միջոցների) վերաբերյալ | | 1 | Հաշվառման (գրանցման) վկայագիր կամ այլ համարժեք փաստաթուղթ կամ մաքսային հայտարարագիր և Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն), եթե հաշվառման (գրանցման) վկայագրով | |

| | | | |
|---|---|---|---|
| | | կամ այլ համարժեք փաստաթղթով կամ մաքսային հայտարարագրով ԱՊՊԱ պայմանագիր կնքելու իրավասությունը չի հաստատվում: Այլ անձին սեփականության իրավունքի փոխանցման գործընթացում գտնվող Ավտոտրանսպորտային միջոցների գծով ԱՊՊԱ պայմանագրի կնքման համար հաշվառման (գրանցման) վկայագրի փոխարեն ներկայացվում է իրավասու պետական մարմնի կողմից տվյալ Ավտոտրանսպորտային միջոցին հատկացված հաշվառման համարանիշը | |
| | 2 | Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով սահմանված անձ համարվելու փաստը հավաստող փաստաթղթեր (սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական, լիզինգի պայմանագիր և այլն) | |
| Ներկայացուցչի վերաբերյալ | 1 | Անձը հաստատող փաստաթուղթ | |
| | 2 | Ապահովադրի կողմից տրված ԱՊՊԱ պայմանագրի կնքման լիազորությունները հավաստող հասարակ, գրավոր ձևով կազմված լիազորագիր | |
| Հաշվեհամարի վերաբերյալ | 1 | Ապահովադրին վճարման ենթակա գումարներն ստանալու լիազորություններ պարունակող՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիր (ենթակա է ներկայացման, եթե ԱՊՊԱ պայմանագրում լրացվելու է լիազորված անձին պատկանող բանկային հաշվեհամար) | |

*Հավելված 4*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների*
*(Հավելված 4-ը լրաց. է 29.03.2022թ թիվ 6-Լ)*

*ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԻՄՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԱՀԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ*

| N | ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը | ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման պահը | ՊԿԱ-ին ներկայացվող փաստաթղթերի, տեղեկությունների ցանկը | ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման (տարաժամկետ վճարման դեպքում վճարվելիք ապահովագրավճարի վճարման) և դրա հաշվարկման կարգն ու պայմանները |
|---|---|---|---|---|
| **1.** | Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալն է: Եթե Ապահովադիրը Ավտոտրանսպորտային միջոցի ֆինանսական վարձակալության | Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | (լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա ԱՊՊԱ պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը, և Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի | | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի: Ընդ որում, եթե նախքան նման դիմումի ստացումը ՊԿԱ-ն սույն աղյուսակի «ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը» սյան 1-ին կամ 2-րդ տողում նշված հիմքի առկայության վերաբերյալ տեղեկատվությունն ստացել է Միասնական տեղեկատվական համակարգի միջոցով, ապա սույն կետով նախատեսված դիմումը համարվում է ՊԿԱ-ին ներկայացված՝ համապատասխան տեղեկատվությանը փաստացի տիրապետելու և պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին սահմանված կարգով Ապահովադրին ծանուցելու օրվան հաջորդող օրը, և փաստացի նման դիմում լրացուցիչ չի ներկայացվում, | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան գրավոր դիմում ՊԿԱ-ին ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին |
| **2.** | Ավտոտրանսպորտային միջոցը հանվել է (ներառյալ՝ ժամանակավոր) հաշվառումից | Ավտոտրանսպոր-տային միջոցը հաշվառումից հանելու օրվան հաջորդող օրը՝ բացառությամբ խոտանման հիմքով հաշվառումից հանվելու, հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև հաշվառումից հանվելու այնպիսի դեպքերի, երբ նույն պահին ավտոտրանսպորտային միջոցը | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | հաշվառվում է այլ անձի անվամբ (անվանմամբ), որոնց դեպքում պայմանագիրը վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանվելու պահին | 2. Դադարեցման համապատասխան հիմքը հավաստող փաստաթուղթը, եթե դրան ՊԿԱ-ն չի տիրապետում<br>3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| **3.** | ՊԿԱ-ն լուծարվել է, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այն ապահովագրական ընկերության հետ, որին ՊԿԱ-ն փոխանցում է ապահովագրական պորտֆելը | Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի,<br>2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| **4.** | Օրենքով նախատեսված դեպքերում ՊԿԱ-ն իր ապահովագրական պորտֆելը փոխանցում է այլ ապահովագրական ընկերության, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այդ ապահովագրական ընկերության հետ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **5.** | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ԱՊՊԱ պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով | | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի<br>2. ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորության կամ ապահովագրական ռիսկի գոյության վերացումը հիմնավորող փաստաթղթեր, եթե դրանց ՊԿԱ-ն չի տիրապետում,<br>3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| **6.** | Ապահովադրի պահանջով | Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի դիմումի մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմումի ներկայացման | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի, | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրա-վճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը՝ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | ամսաթվին հաջորդող օրը | 2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողության օրեր) * պայմանագրի չլրացած օրեր – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: ՊԿԱ-ն իրավունք ունի իր հայեցողությամբ սույն հաշվարկում 80%-ի փոխարեն հիմք ընդունել ապահովագրավճարի 80-ից ավելի բարձր՝ մինչև 100%-ը ներառյալ: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին: ԱՊՊԱ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր չունեցած Ավտոտրանսպորտային միջոցի գծով պատահարից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կնքված ԱՊՊԱ պայմանագրի դեպքում սույն տողում նշված հաշվարկում 80%-ի փոխարեն պարտադիր հիմք է ընդունվում ապահովագրավճարի 20%-ը *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **6.1** | ՊԿԱ-ի պահանջով, եթե Ապահովադիրը գրավոր եղանակով հետ է կանչել սույն կանոնների 17-րդ կետում նշված թույլտվությունը Ապահովադրի պահանջով, եթե միևնույն Ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ առկա է գործող ԱՊՊԱ պայմանագիր, որը կնքվել է սույն կանոնների Հավելված 3-ի 5.1-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխան | Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահինԱպահովադրի կամ նրա ներկայացուցչի դիմումի մեջ նշված օրը | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի,<br>2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր * 80 % / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | ~~ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան գրավոր դիմում ՊԿԱ-ին ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին~~ |
| **7.** | ՊԿԱ-ի պահանջով, եթե Ապահովադիրը թույլ է տվել սույն կանոնների էական խախտում: Ընդ որում, ՊԿԱ-ն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Ապահովադիրը խախտել է սույն կանոնների 52-րդ կետով սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա որակապես ազդող փոփոխությունները, ինչպես նաև եթե Ապահովադրի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով | ՊԿԱ-ի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո | - | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարի և այդ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար - տվյալ պայմանագրով կատարված հատուցումների գումար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին |
| **8.** | Ապահովադրի պահանջով, եթե ՊԿԱ-ն թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում | Ապահովադրի կողմից նման խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ հիմնավորելով ՊԿԱ-ի կողմից կատարված խախտումները՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի,<br>2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | Վերադարձվում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝<br>1. վճարված ապահովագրավճարներ և այդ պայմանագրով ՊԿԱ-ի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, կամ<br>2. պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – Ապահովադրի կողմից չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է (այն է՝ սույն կանոնների խախտմամբ՝ սահմանված ժամկետում վճարման ենթակա գումարի չվճարումը կամ ոչ ամբողջական վճարումը), ապա Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ: |
| **9.** | ՊԿԱ-ի պահանջով, եթե պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը պայմանագիրը կնքելիս ՊԿԱ-ին (լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ | ՊԿԱ-ի պահանջով՝ անմիջապես | - | Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն, իսկ տարաժամկետ վճարման դեպքում ապահովագրավճարի չվճարված մասը ենթակա է ամբողջությամբ վճարման ՊԿԱ-ին: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Ընդ որում, ՊԿԱ-ն չի կարող օգտվել նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովադրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ, կամ պայմանագիրը կնքվել է Վկայագրի համապատասխան մասերում տեղեկատվության բացակայության պայմաններում, ինչպես նաև Օրենքով նախատեսված այլ դեպքերում | | | |
| **10.** | Ապահովադրի պահանջով, եթե ՊԿԱ-ն սահմանված կարգով ծանուցել է սույն կանոնների դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին | Ապահովադրի պահանջով՝ անմիջապես | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ համաձայն սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 1.5-ի,<br>2. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին |
| **11.** | Վկայագրով նախատեսված ապահովագրավճարի (ապահովագրավճարի առաջին կամ հերթական մասի) վճարումն Ապահովադրի կողմից կետանցվել է, և ՊԿԱ-ն պայմանագրի ենթադրվող դադարեցման օրվանից առնվազն երեք օր առաջ Ապահովադրին ուղարկել է հիշեցում-ծանուցում (համաձայն սույն կանոնների ձև 1.2-ի)՝ ապահովագրավճարի հերթական մասը վճարելու անհրաժեշտության և չվճարելու դեպքում, որպես հետևանք ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին: Սույն կետով նախատեսված դեպքերում Ապահովագրողի կողմից ապահովագրավճարի վճարման համար լրացուցիչ ժամկետ չի տրամադրվում: | Սույն տողով նախատեսված պահանջներին բավարարող հիշեցում-ծանուցման մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան Ապահովագրա-վճարի (ապահովագրավճարի հերթական մասի) չվճարման (կետանցման) օրվան հաջորդող օրը | - | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի 80%-ը (պայմանագրով նախատեսված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր) – պայմանագրի գծով չվճարված ապահովագրավճար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Ընդ որում, բացասական մեծության դեպքում համապատասխան տարբերության գումարը ենթակա է վճարման ՊԿԱ-ին: ԱՊՊԱ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր չունեցած Ավտոտրանսպորտային միջոցի |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | գծով պատահարից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կնքված ԱՊՊԱ պայմանագրի դեպքում սույն տողում նշված հաշվարկում 80%-ի փոխարեն պարտադիր հիմք է ընդունվում ապահովագրավճարի 20%-ը *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)* |
| **12.** | Օրենքով նախատեսված այլ դեպքերում և կարգով | | | |

**Ապահովագրավճարի վերադարձման կարգն ու ժամկետները**

ՊԿԱ-ն սույն հավելվածով նախատեսված դեպքերում պարտավոր է ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դիմումի (առկայության դեպքում) ստացման և ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ամսաթվերից ավելի ուշ ամսաթվից սկսած 2 օրվա ընթացքում վերադարձնել ապահովագրավճարի համապատասխան մասը (դրա առկայության դեպքում) և Ապահովադրին ծանուցել (տրամադրել) վաղաժամկետ դադարեցման արդյունքում վերադարձվող/վճարման ենթակա ապահովագրավճարի հաշվարկը-ծանուցումը, որը պետք է առնվազն պարունակի սույն կանոնների Ձև 1.3-ով նախատեսված տեղեկատվությունը: Ընդ որում, ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովագրավճարի լրավճարում իրականացնելու անհրաժեշտության դեպքում ծանուցման մեջ նշում է կատարվում ապահովագրավճարի լրավճարում իրականացնելու կարգի և ժամկետների վերաբերյալ: *(փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

## Հավելված 6.1. Պարզեցված հատուցման գործընթացի գործողությունների հաջորդականություն



<table>
<tr><td colspan="3" align="center">Հավելված 6.1-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ</td></tr>
<tr><td colspan="3">Հասկացություններ</td></tr>
<tr><td colspan="3">Կողմեր՝ Տուժող, Ապահովադիր և Ապահովագրված անձ:</td></tr>
<tr><td colspan="3">Հոսքագրից հղումներ (աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)</td></tr>
<tr><td>1</td><td colspan="2">1. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը ծանուցվում է նաև պատահարում ներգրավված և ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին (նման տվյալի առկայության դեպքում):<br>2. Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննության պահանջ չի ներկայացվում:</td></tr>
<tr><td>2</td><td>Պայման 1</td><td>ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5~~2~~ օրվա ընթացքում</td></tr>
<tr><td>3</td><td>Պայման 2</td><td>ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5~~2~~ օրվա ընթացքում:</td></tr>
<tr><td>4</td><td colspan="2">Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության: Ընդ որում, եթե տուժողը սահմանված կարգով ընտրություն չի կատարում, ապա համարվում է, որ նա ընտրել է համապատասխան գումար վճարելու տարբերակը: Այն դեպքերում, երբ սույն կանոններով նախատեսված որևէ հիմքով համապատասխան գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով:</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | ԴՍԱ-ն պարտավոր է ՀՊԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հետո 2 օրվա ընթացքում վերջինին փոխանցել տվյալ գործով ապահովագրական հատուցման վճարման փաստը հավաստող փաստաթղթի սքանավորված տարբերակը: |
| ***Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ*** | |
| Ա | ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով և սույն հավելվածով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն, բացառությամբ ՊԿԱ հանդիսացող Բյուրոյի, որը կարող է պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել նաև ինքնուրույն՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարորդի հաշվին: |
| Բ | Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված: |
| Գ | Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը, իսկ ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը: |
| Դ | Կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո չի կարող նշանակվել լրացուցիչ փորձաքննություն: |
| Ե | Կրկնակի փորձաքննություն և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ՝ համապատասխան փորձաքննության արդյունքների առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումը ստանալուց հետո: Ընդ որում՝ սույն հավելվածով նախատեսված համապատասխան գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է համապատասխան փորձաքննության արդյունքներն առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումն ստանալու պահից: |
| ***Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ*** | |

| | |
|---|---|
| | Գործողություն |
| | Ժամկետ<br>(գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր) |
| | Պատասխանատու |
| | Պայման |
| | Պարտադիր գործողություն |
| | Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը |
| Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո: Ընդ որում, ներկայացված դիմումի հիման վրա սահմանված ժամկետում հոսքագրով նախատեսված համապատասխան գործողությունը Բյուրոյի կամ ԴՍԱ-ի կողմից չիրականացվելու դեպքում նախքան այդ գործողության իրականացումը չի սկսվում հաջորդ փուլի գործընթացը (եթե կոնկրետ փուլի համար այլ բան նախատեսված չէ սույն հավելվածով), և սահմանված ժամկետների կետանցման համար համապատասխան ուշացված օրերի համար տույժերի վճարման պատասխանատվությունը կրում է սահմանված ժամկետում համապատասխան գործողությունը չիրականացրած Բյուրոն (ԴՍԱ-ն): Սահմանված ժամկետների կետանցմամբ դիմումի մերժումը հիմք չէ դիմումատուի կամ այլ անձանց համար հոսքագրով նախատեսված գործողությունների համար սահմանված ժամկետների երկարաձգման կամ վերսկսման համար: *(լրաց. է 31/03/2020թ թիվ 9-Ն)* | |
| Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ: | |

## Հավելված 6.2. Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի գործողությունների հաջորդականություն



| | | |
|---|---|---|
| ***Հավելված 6.2-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ*** | | |
| **Հասկացություններ** | | |
| Կողմեր՝ տվյալ պատահարում ներգրավված Տուժողներ, Ապահովադիրներ և Ապահովագրված անձինք: | | |
| ***Հուշագրից հղումներ*** *(աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)* | | |
| 1 | **Պայման 1** | 1. Ելակետ 1-ում վարորդներից առնվազն մեկի կողմից «մեղավոր եմ» նշման կատարում և Ելակետ 1-ում կատարված նշումներին ԴՍԱ-ի համաձայնություն կամ<br>2. Ելակետ 1-ում պատահարում ներգրավված միայն մեկ ՏՄ-ի առկայություն կամ<br>~~2.~~3. Ելակետ 1-ում բոլոր վարորդների կողմից «մեղավոր չեմ» նշման կատարում, պատահարում ներգրավված բոլոր ՏՄ-ների ՊԿԱ-ների չհամընկնում և համապատասխան ելակետային տվյալների հիման վրա ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներին ԴՍԱ-ի համաձայնություն: |
| | **Գործողություն 1** | 1) Պայման 1-ի 1-ին կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում Ելակետ 1-ում կատարված նշումներին համաձայնության մասին հարցում (Ձև 3) Ելակետ 1-ում նշված մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին):<br>2) Պայման 1-ի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում պատահարում ներգրավված ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին տվյալ ՏՄ-ի վարորդի մեղավորությանը համաձայնության մասին հարցում:<br>~~1)~~3) Պայման 1-ի 3-րդ կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներին համաձայնության մասին հարցում այդ արդյունքների համաձայն՝ մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին): |
| 2 | **Պայման 2** | Պայման 1-ի պայմանների բացակայություն: |

<table>
<tr><td></td><td>Գործողություն 2</td><td>Պատճառի փորձաքննության նշանակում (պատվերի (Ձև 4.1) ներկայացում) փորձագետին և այդ մասին ծանուցում (Ձև 9.1) պատահարին մասնակից ՏՄ-ների վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր կնքած ՊԿԱ-ին (ՊԿԱ-ներին):</td></tr>
<tr><td>2.1</td><td>* Գործողություն 2.1</td><td>ԱՄՄՊ-ի կողմից պատճառի փորձաքննության ինքնաշխատ նշանակում՝ սույն կանոններով նախատեսված մեղավորության որոշման հիմնական հարցադրման ներկայացմամբ:<br>Սույն գործողությունը սույն հավելվածով նախատեսված գործընթացում կիրառելի է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության պայմաններում՝<br>ա) տվյալ ապահովագրական պատահարն Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի հատկանիշներին բավարարող պատահար է և պատահարում ներառված (պատահարի հետ առնչվող) առնվազն մեկ Ապահովադիր սույն կանոններով նախատեսված կարգով ծանուցվել է ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումն Ապահովադրի կողմից ինքնաշխատ ներկայացված լինելու մասին,<br>բ) տվյալ ապահովագրական պատահարով ԴՍԱ-ն (ԴՍԱ-ներից որևէ մեկը) սույն հավելվածով նախատեսված Գործողություն 2-ը չի իրականացրել սույն հավելվածով նախատեսված կարգով և ժամկետներում:<br>Սույն հավելվածի գործողությունների հոսքագրում Գործողություն 2.1-ի կատարման համար նշված՝ Անմիջապես բառը նշանակում է, որ Գործողություն 2.1-ն իրականացվում է Գործողություն 2-ով նախատեսված ժամկետի ավարտից անմիջապես հետո:</td></tr>
<tr><td>3</td><td colspan="2">1) Պայման 1-ի 1-ին կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում Ելակետ 1-ում նախնական մեղավորության վերաբերյալ նշումներին նշումների համաձայն մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) կողմից համաձայնության տրամադրման պահից պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձաքննությունը համարվում է նշանակված և ստացված, և որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված են համարվում մեղավորության մասին նախնական նշումները: <s>Սույն կետով նախատեսված համաձայնության տրամադրումն իրականացվում է սույն կանոններով սահմանված ժամկետում պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն չնշանակելու միջոցով: Սույն կետով նախատեսված դեպքերում ԴՍԱ-ն և ՊԿԱ-ն</s></td></tr>
</table>

| | |
|---|---|
| | (ՊԿԱ-ները), համաձայնության տրամադրմամբ հրաժարվում են հետագայում տվյալ պատահարի գծով պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննության իրականացման պահանջ ներկայացնելու իրենց իրավունքից:<br>2) Պայման 1-ի 2-րդ կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում պատահարում ներգրավված ՏՄ-ի վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ի կողմից համաձայնության տրամադրման պահիցմեկ օրվա ընթացքում պատահարի առաջացման պատճառների փորձաքննության չնշանակման հաջորդ օրվանից պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձաքննությունը համարվում է նշանակված և ստացված, և որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված է համարվում, որ պատահարի առաջացման մեջ միակ մեղավորը պատահարում ներգրավված միակ ՏՄ-ի վարորդն է:<br>3) Պայման 1-ի 3-րդ կետով նախատեսված պայմանի առկայության դեպքում ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքների համաձայն՝ մեղավոր վարորդի (վարորդների) վարած ՏՄ վերաբերյալ պատահարի պահին գործող ԱՊՊԱ պայմանագիր ունեցող ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) կողմից համաձայնության տրամադրման պահից պատահարի առաջացման պատճառների առաջնային փորձաքննությունը համարվում է նշանակված և ստացված, և որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված փորձագիտական եզրակացությունը:<br>Սույն տողով նախատեսված համաձայնության տրամադրումն իրականացվում է սույն կանոններով սահմանված ժամկետում պատահարի առաջացման պատճառների փորձաքննություն չնշանակելու միջոցով: Սույն տողով նախատեսված դեպքերում ԴՍԱ-ն և ՊԿԱ-ն (ՊԿԱ-ները), համաձայնության տրամադրմամբ հրաժարվում են հետագայում տվյալ պատահարի գծով պատահարի առաջացման պատճառների լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննության իրականացման պահանջ ներկայացնելու իրենց իրավունքից: |
| **4** | Ելակետ 1-ում կատարված նշումներին համաձայնության մասին հարցում ստացած և սույն կանոնների համաձայն պատահարի պատճառների փորձաքննություն նշանակած ՊԿԱ-ի կողմից հարցումն ստանալուց հետո՝ տվյալ տեսակի փորձաքննության իրականացման համար սահմանված ժամկետում, համապատասխան փորձաքննության արդյունքների ստացումը և միասնական էլեկտրոնային հարթակում տեղադրումը չապահովելու դեպքում որպես փորձագետի եզրակացություն ընդունվում է Ելակետ 1-ը, որով հաստատված են համարվում մեղավորության մասին նախնական նշումները: Սույն կետով նախատեսված դեպքում միասնական էլեկտրոնային հարթակում փորձաքննության արդյունքների տեղադրման համար սահմանված ժամկետին հաջորդող օրվանից առկա են |

| | | |
|---|---|---|
| | համարվում սույն աղյուսակի 3-րդ կետով նախատեսված պայմանները՝ այդ կետով սահմանված հետևանքներով, և դրանից հետո ստացված փորձաքննության արդյունքները համարվում են չեղյալ ու ենթակա չեն տեղադրման միասնական էլեկտրոնային հարթակում: | |
| **5** | 1. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը ծանուցվում է նաև պատահարում ներգրավված և ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին (նման տվյալի առկայության դեպքում):<br>2. Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմում չի ներկայացվում: | |
| **6** | ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով և սույն հավելվածով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն, բացառությամբ ՊԿԱ հանդիսացող Բյուրոյի, որը կարող է պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել նաև ինքնուրույն՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարորդի հաշվին: Ընդ որում, այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, ԴՍԱ-ն պարտավոր է նշանակել վնասների լրացուցիչ փորձաքննություն: | |
| **7** | Պայման 3 | ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5~~2~~ օրվա ընթացքում, բացառությամբ եթե այն վերաբերում է սույն հավելվածի համաձայն՝ ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված փորձագիտական եզրակացությանը~~կամ եթե լրացուցիչ փորձաքննության պահանջը ներկայացվել է փորձաքննության համար հիմք հանդիսացած ելակետային տվյալներում Բյուրոյի կանոններով սահմանված կարգով և ժամկետներում շտկում իրականացնելու արդյունքում~~: |

| | | |
|---|---|---|
| **8** | Պայման 4 | ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5~~2~~ օրվա ընթացքում կամ վերաբերում է սույն հավելվածի համաձայն՝ ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված փորձագիտական եզրակացությանը: |
| **9** | Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության: Ընդ որում, եթե տուժողը սահմանված կարգով ընտրություն չի կատարում, ապա համարվում է, որ նա ընտրել է համապատասխան գումար վճարելու տարբերակը: Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը գերազանցելու կամ սույն կանոններով նախատեսված այլ հիմքով այդ գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով: | |
| | ԴՍԱ-ն պարտավոր է ՀՊԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հետո 2 օրվա ընթացքում վերջինին փոխանցել տվյալ գործով ապահովագրական հատուցման վճարման փաստը հավաստող փաստաթղթի սքանավորված տարբերակը: | |
| ***Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ*** | | |
| **Ա** | Միևնույն պատահարի գծով ԱՊՊԱ համակարգում պատճառների առաջնային փորձաքննություն կարող է իրականացվել մեկ անգամ, որի արդյունքները հիմք են ընդունվում որպես առաջնային փորձաքննության արդյունքներ տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում: Համապատասխանաբար՝<br>1. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության պատվեր ներկայացված լինելու վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգով ծանուցում ստացած Ապահովագրողները տվյալ պատահարի գծով պատճառների առաջնային փորձաքննության առանձին պատվեր չեն ներկայացնում և արդեն իսկ նշանակված փորձաքննությունն Օրենքի իմաստով համարվում է նշանակված նաև իրենց կողմից,<br>2. տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների առաջնային փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները, | |

| | |
|---|---|
| | 3. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության եզրակացությանն առաջին անգամ ծանուցվելուց հետո՝ Օրենքով սահմանված ժամկետում, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում տվյալ պատահարով հատուցման մյուս բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները: |
| **Բ** | Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված: |
| **Գ** | Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջին անգամ տվյալ առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը (անկախ այն հանգամանքից՝ տվյա՞լ, թե՞ այլ հատուցման գործընթացի շրջանակներում են համապատասխան արդյունքները ծանուցվել), իսկ փորձաքննություն նշանակած ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջին անգամ տվյալ առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը: |
| **Դ** | Պատահարի պատճառների կամ գույքին պատճառված վնասների կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո համապատասխանաբար միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների կամ տվյալ գույքին պատճառված վնասների լրացուցիչ փորձաքննություն չի կարող նշանակվել: |
| **Ե** | Միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների, ինչպես նաև տվյալ գույքին պատճառված վնասների կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ՝ համապատասխան փորձաքննության արդյունքների առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումը ստանալուց հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, որի դեպքում վնասների լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել երկրորդ անգամ: Ընդ որում՝ սույն հավելվածով նախատեսված համապատասխան գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է համապատասխան |

| | |
|---|---|
| | փորձաքննության արդյունքներն առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումն ստանալու պահից: |
| Զ | Կրկնակի փորձաքննության արդյունքները հիմք են ընդունվում տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում որպես կրկնակի փորձաքննության արդյունքներ: Համապատասխանաբար, պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքների առկայության դեպքում տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները: |
| Է | *(Ուժը կորցրել է Բյուրոյի խորհրդի 25.04.2023թ.-ի թիվ 15-Լ որոշմամբ:)* |
| Ը | Եթե պատահարի առաջացման պատճառների առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության ընթացքում կամ դրանց արդյունքների ծանուցումից հետո, բայց ոչ ուշ քան համապատասխան փորձաքննության հիման վրա ընդունված ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրը, իսկ ԴՍԱ-ի և ՀՊԱ-ի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նաև մեկ ամիսը, որևէ եղանակով ԴՍԱ-ին (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքների ծանուցումից հետո՝ Բյուրոյին) ներկայացվել է այդ փորձաքննությունների հիմքում դրված Ելակետ 1-ի և (կամ) Ելակետ 2-ի՝ սահմանված կարգով շտկված տարբերակը կամ տվյալ պատահարի հանգամանքներն ընդգրկող տեսագրությունը, որը տարբերվում է համապատասխանաբար առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության հիմքում նախկինում դրված տեսագրությունից կամ փորձաքննության հիմքում նախկինում տեսագրություն առկա չի եղել (այսուհետ սույն պարբերությունում՝ շտկված կամ նոր ելակետային տվյալներ), ապա ԴՍԱ-ն (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքները ծանուցված լինելու դեպքում՝ Բյուրոն) վերջին փորձաքննություն իրականացնող կամ իրականացրած միևնույն փորձագետին տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ համապատասխան փորձագետը իր փորձագիտական եզրակացության հիմքում դնում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ փորձագիտական եզրակացությունն արդեն իսկ տրամադրած լինելու դեպքում՝ սույն կանոններով տվյալ փորձաքննության համար սահմանված միևնույն ժամկետներում տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացությունը կամ պատասխանում է, որ շտկված կամ նոր ելակետային տվյալները որևէ ազդեցություն չունեն նախկինում տվյալ գործով իր կողմից տրամադրված եզրակացության վրա: Համապատասխանաբար, այն դեպքում, երբ փորձագետի կողմից տրամադրվում է ճշգրտված փորձագիտական եզրակացություն, դրա հիման վրա ճշգրտվում են նաև սույն կանոնների համաձայն արդեն իսկ իրականացված գործընթացներն ու որոշումները: Ընդ որում, շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացություն տրամադրելու համար փորձագետի կողմից լրացուցիչ վճար պահանջվելու դեպքում ԴՍԱ-ի (Բյուրոյի) կողմից փորձաքննության արդյունքների ճշգրտման գործընթացի |

| | |
|---|---|
| | նախաձեռնումը կարող է պայմանավորվել հատուցման գործընթացում ներգրավված որևէ անձի կողմից այդ վճարի կատարման պարտավորությունն ստանձնելու հանգամանքով: *(լրաց. է 29/03/2022թ թիվ 6-Լ)* |
| ***Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ*** | |
|  | Գործողություն |
|  | Ժամկետ<br>(գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր) |
|  | Պատասխանատու |
|  | Պայման |
|  | Պարտադիր գործողություն |
|  | Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը |
| Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո: Ընդ որում, ներկայացված դիմումի հիման վրա սահմանված ժամկետում հոսքագրով նախատեսված համապատասխան գործողությունը Բյուրոյի կամ ԴՍԱ-ի կողմից չիրականացվելու դեպքում նախքան այդ գործողության իրականացումը չի սկսվում հաջորդ փուլի գործընթացը (եթե կոնկրետ փուլի համար այլ բան նախատեսված չէ սույն հավելվածով), և սահմանված ժամկետների կետանցման համար համապատասխան ուշացված օրերի համար տույժերի վճարման պատասխանատվությունը կրում է սահմանված ժամկետում համապատասխան գործողությունը չիրականացրած Բյուրոն (ԴՍԱ-ն): Սահմանված ժամկետների կետանցմամբ դիմումի մերժումը հիմք չէ դիմումատուի կամ այլ անձանց համար հոսքագրով նախատեսված գործողությունների համար սահմանված ժամկետների երկարաձգման կամ վերսկսման համար: *(լրաց. է 31/03/2020թ թիվ 9-Լ)* | |
| Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ: | |
| Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը: | |

| | | |
|---|---|---|
| ***Հավելված 6.3-ին վերաբերող նշումներ և այլ պահանջներ*** | | |
| **Հասկացություններ** | | |
| Կողմեր՝ տվյալ պատահարում ներգրավված Տուժողներ, Ապահովադիրներ և Ապահովագրված անձինք: | | |
| ***Հոսքագրից հղումներ*** *(աղյուսակի առաջին սյունակում նշված են հղումների համարները)* | | |
| **1** | 1. Ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթը ծանուցվում է նաև պատահարում ներգրավված և ԱՊՊԱ պատահարի պահին ԱՊՊԱ պայմանագիր չունեցած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ պատշաճ էլեկտրոնային փոստի հասցեին (նման տվյալի առկայության դեպքում):<br>2. Ապահովագրական հատուցումը մերժելու փաթեթ ծանուցելու դեպքում տվյալ դեպքով հատուցման գործընթացն ավարտվում է, եթե իրավասու անձանց կողմից սույն կանոններով սահմանված կարգով կրկնակի փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ դիմում չի ներկայացվում: | |
| **2** | ՊԿԱ-ի (ՊԿԱ-ների) անունից պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնելու և լրացուցիչ փորձաքննության իրականացմանը համաձայնություն տրամադրելու նպատակահարմարությունը որոշում և Օրենքով նախատեսված իրավունքն իրականացնում է ԴՍԱ-ն, բացառությամբ ՊԿԱ հանդիսացող Բյուրոյի, որը կարող է պատահարի հետևանքով պատճառված վնասի կրկնակի կամ լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջ ներկայացնել նաև ինքնուրույն՝ վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ վարորդի հաշվին: Ընդ որում, այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, ԴՍԱ-ն պարտավոր է նշանակել վնասների լրացուցիչ փորձաքննություն: | |
| **3** | Պայման 3 | ԴՍԱ-ի և Օրենքով նախատեսված այլ անձանց համաձայնությունը լրացուցիչ փորձաքննության անցկացմանը համարվում է ինքնաշխատ տրված, եթե լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը ներկայացվել է ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5~~2~~ օրվա ընթացքում |

| | | |
|---|---|---|
| **4** | Պայման 4 | ԴՍԱ-ն մերժում է լրացուցիչ փորձաքննության նշանակման դիմումը, եթե վերջինս չի ներկայացվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցմանը հաջորդող 5~~2~~ օրվա ընթացքում: |
| **5** | Գույքին պատճառված վնասների գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով կամ վնասը վերականգնելով՝ ըստ տուժողի կողմից հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցումից հետո կատարած ընտրության: Ընդ որում, եթե տուժողը սահմանված կարգով ընտրություն չի կատարում, ապա համարվում է, որ նա ընտրել է համապատասխան գումար վճարելու տարբերակը: Այն դեպքերում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը գերազանցելու կամ սույն կանոններով նախատեսված այլ հիմքով այդ գույքին պատճառված վնասների վերականգնումը գնահատվել է որպես ոչ ողջամիտ, ապահովագրական հատուցումն իրականացվում է համապատասխան գումար վճարելով: | |
| | ԴՍԱ-ն պարտավոր է ՀՊԱ-ի կողմից համապատասխան պահանջն ստանալու պահից հետո 2 օրվա ընթացքում վերջինին փոխանցել տվյալ գործով ապահովագրական հատուցման վճարման փաստը հավաստող փաստաթղթի սքանավորված տարբերակը: | |
| **6** | Գույքին պատճառված վնասների առանձնացված գնահատման իրականացման կարգն ու պայմանները, ինչպես նաև դրա իրականացման դեպքում սույն հավելվածով նախատեսված գործընթացների առանձնահատկությունները սահմանվում են սույն կանոնների 103-րդ կետով: | |
| ***Գործընթացի վերաբերյալ ընդհանուր պահանջներ*** | | |
| **Ա** | Միևնույն պատահարի գծով ԱՊՊԱ համակարգում պատճառների առաջնային փորձաքննություն կարող է իրականացվել մեկ անգամ, որի արդյունքները հիմք են ընդունվում որպես առաջնային փորձաքննության արդյունքներ տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում: Համապատասխանաբար՝<br>1. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության պատվեր ներկայացված լինելու վերաբերյալ սույն կանոններով սահմանված կարգով ծանուցում ստացած Ապահովագրողները տվյալ պատահարի գծով պատճառների առաջնային փորձաքննության առանձին պատվեր ներկայացնում, և արդեն իսկ նշանակված փորձաքննությունն Օրենքի իմաստով համարվում է նշանակված նաև իրենց կողմից, | |

| | |
|---|---|
| | 2. տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների առաջնային փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները,<br>3. պատահարի պատճառների առաջնային փորձաքննության եզրակացությանն առաջին անգամ ծանուցվելուց հետո՝ Օրենքով սահմանված ժամկետում, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ չներկայացվելու դեպքում տվյալ պատահարով հատուցման մյուս բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների լրացուցիչ և կրկնակի փորձաքննության հետ կապված՝ սույն հավելվածով սահմանված գործողությունները: |
| Բ | Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննությունների դիմումի մերժման դեպքում հետագա գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը չի վերսկսվում և շարունակվում է հաշվարկվել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) փաթեթի ծանուցման հաջորդող օրվանից սկսված: |
| Գ | Լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության անցկացման պահանջ ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբ է համարվում առաջին անգամ տվյալ առաջնային (առկայության դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին ծանուցում ստանալու օրը (անկախ այն հանգամանքից՝ տվյա՞լ, թե՞ այլ հատուցման գործընթացի շրջանակներում են համապատասխան արդյունքները ծանուցվել), իսկ փորձաքննություն նշանակած ԴՍԱ-ի համար՝ շահագրգիռ անձանց (շահագրգիռ անձանցից վերջինին) առաջին անգամ տվյալ առաջնային (կամ լրացուցիչ (եթե արդեն իրականացվել է)) փորձաքննության (փորձաքննությունների) արդյունքների մասին սույն կանոններով սահմանված կարգով ծանուցելու օրը, բայց ոչ ուշ քան փորձաքննության արդյունքների մասին շահագրգիռ անձանց ծանուցման համար սույն կանոններով սահմանված ժամկետի վերջին օրը: |
| Դ | Պատահարի պատճառների կամ գույքին պատճառված վնասների կրկնակի փորձաքննություն իրականացվելուց հետո համապատասխանաբար միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների կամ տվյալ գույքին պատճառված վնասների լրացուցիչ փորձաքննություն չի կարող նշանակվել: |
| Ե | Միևնույն պատահարի գծով պատահարի պատճառների, ինչպես նաև տվյալ գույքին պատճառված վնասների կրկնակի և լրացուցիչ փորձաքննություն կարող է նշանակվել առավելագույնը մեկական անգամ՝ համապատասխան փորձաքննության արդյունքների առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումը ստանալուց հետո բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքներով համապատասխան հիմքեր կան վնասների առաջնային |

| | |
|---|---|
| | և/կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքների վերանայման համար, որի դեպքում վնասների լրացուցիչ փորձաքննությունը կարող է իրականացվել երկրորդ անգամ: Ընդ որում՝ սույն հավելվածով նախատեսված համապատասխան գործընթացների համար նախատեսված ժամկետների հաշվարկը սկսվում է համապատասխան փորձաքննության արդյունքներն առաջին անգամ (ներառյալ առաջին անգամ ծանուցված արդյունքների ճշգրտման) ծանուցումն ստանալու պահից: |
| Զ | Կրկնակի փորձաքննության արդյունքները հիմք են ընդունվում տվյալ պատահարի գծով իրականացվող բոլոր հատուցման գործընթացներում որպես կրկնակի փորձաքննության արդյունքներ: Համապատասխանաբար, պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության արդյունքների առկայության դեպքում տվյալ պատահարով հատուցման հետագա բոլոր գործընթացների նկատմամբ կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների կրկնակի փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները: |
| Է | *(Ուժը կորցրել է Բյուրոյի խորհրդի 25"04"2023թ"-ի թիվ 15-Լ որոշմամբ:)* |
| Ը | Անձնական վնասների հատուցման գործընթացում կիրառելի չեն (շրջանցվում են) գույքին պատճառված վնասների փորձաքննության և հատուցման ձևի ընտրության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները: |
| Թ | Մեկ ավտոտրանսպորտային միջոցի մասնակցությամբ ԱՊՊԱ պատահարի հետևանքով տուժողին պատճառված անձնական վնասների հատուցման գործընթացում կիրառելի չեն (շրջանցվում են) պատահարի պատճառների փորձաքննության հետ կապված սույն հավելվածով սահմանված գործողությունները: |
| Ժ | Եթե առկա է քաղաքացիական, քրեական կամ դատական կարգով հարուցված վարչական գործ, և ապահովագրական հատուցման վճարումը կախված է այդ գործի ելքից, ապա փորձաքննություն նշանակելու, ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցման վճարումը մերժելու մասին որոշում ընդունելու կամ փորձաքննության անցկացման, ինչպես նաև այդ որոշումների և փորձաքննության արդյունքների մասին ծանուցելու՝ Օրենքով և սույն կանոններով սահմանված ժամկետները կասեցվում են մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը, ինչի մասին կասեցումից մեկ օրվա ընթացքում ԴՍԱ-ն Հավելված 1-ի **Ձև 2.6-ով** սահմանված ձևով ծանուցում է այն անձանց, ում սույն կանոնների համաձայն պարտավոր է ծանուցել ապահովագրական հատուցումը վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումը: Ընդ որում, ապահովագրական պատահարի հիման վրա հարուցված քրեական գործով վարույթը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին (հայտնի չէ անձը, որը գործով պետք է ներգրավվի որպես մեղադրյալ) կամ 2-րդ (մեղադրյալը թաքնվել է քննությունից կամ դատից, կամ |

| | |
|---|---|
| | նրա գտնվելու վայրն այլ պատճառներով պարզված չէ) կետով սահմանված հիմքով կասեցվելը դիտվում է որպես հարուցված գործն ըստ էության լուծող դատական ակտի չընդունում, որի դեպքում Օրենքի 21-րդ հոդվածի ուժով պատճառված վնասների չափը գնահատվում է, և դրանում անձի մեղավորության աստիճանը որոշվում է փորձագետի (բժշկական կամ այլ հաստատության կամ մասնագետի) կողմից: *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)* |
| **Ի** | Ապահովագրական հատուցում վճարելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տուժողի կողմից տվյալ ԱՊՊԱ պատահարի հետևանքով առաջացած անձնական վնասի չափի վրա ազդող լրացուցիչ փաստաթղթեր ԴՍԱ-ին ներկայացնելը Օրենքի և սույն կանոնների իմաստով չի դիտվում որպես ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ նոր դիմում, և ԴՍԱ-ն, ստանալով համապատասխան փաստաթղթերը, պարտավոր է վերաբացել նախկինում սկսված հատուցման գործընթացը և երեք օրվա ընթացքում որոշում կայացնել նշանակված ապահովագրական հատուցման չափը մեծացնելու (լրացուցիչ ապահովագրական հատուցում վճարելու), նվազեցնելու կամ ապահովագրական հատուցման վճարումը դադարեցնելու մասին՝ ընդունված որոշման հետ կապված հետագա գործընթացները կազմակերպելով Հավելված 6.3-ով սահմանված ընդհանուր կարգով: *(փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)* |
| **Լ** | Եթե պատահարի առաջացման պատճառների առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության ընթացքում կամ դրանց արդյունքների ծանուցումից հետո, բայց ոչ ուշ քան համապատասխան փորձաքննության հիման վրա ընդունված ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասներորդ օրը, իսկ ԴՍԱ-ի և ՀՊԱ-ի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նաև մեկ ամիսը, որևէ եղանակով ԴՍԱ-ին (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքների ծանուցումից հետո՝ Բյուրոյին) ներկայացվել է այդ փորձաքննությունների հիմքում դրված Ելակետ 1-ի և (կամ) Ելակետ 2-ի՝ սահմանված կարգով շտկված տարբերակը, տվյալ պատահարի հանգամանքներն ընդգրկող տեսագրությունը, որը տարբերվում է համապատասխանաբար առաջնային, լրացուցիչ կամ կրկնակի փորձաքննության հիմքում նախկինում դրված տեսագրությունից կամ փորձաքննության հիմքում նախկինում տեսագրություն առկա չի եղել (այսուհետ սույն պարբերությունում՝ շտկված կամ նոր ելակետային տվյալներ), ապա ԴՍԱ-ն (առաջնային կամ լրացուցիչ փորձաքննության արդյունքները ծանուցված լինելու դեպքում՝ Բյուրոն) վերջին փորձաքննություն իրականացնող կամ իրականացրած միևնույն փորձագետին տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ համապատասխան փորձագետը իր փորձագիտական եզրակացության հիմքում դնում է շտկված կամ նոր ելակետային տվյալները, իսկ փորձագիտական եզրակացությունն արդեն իսկ տրամադրած լինելու դեպքում՝ սույն |

| | |
|---|---|
| | կանոններով տվյալ փորձաքննության համար սահմանված միևնույն ժամկետներում տրամադրում է շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացությունը կամ պատասխանում է, որ կամ նոր ելակետային տվյալները որևէ ազդեցություն չունեն նախկինում տվյալ գործով իր կողմից տրամադրված եզրակացության վրա: Համապատասխանաբար, այն դեպքում, երբ փորձագետի կողմից տրամադրվում է ճշգրտված փորձագիտական եզրակացություն, դրա հիման վրա ճշգրտվում են նաև սույն կանոնների համաձայն արդեն իսկ իրականացված գործընթացներն ու որոշումները: Ընդ որում, շտկված կամ նոր ելակետային տվյալների հիման վրա ճշգրտված փորձաքննության եզրակացություն տրամադրելու համար փորձագետի կողմից լրացուցիչ վճար պահանջվելու դեպքում ԴՍԱ-ի (Բյուրոյի) կողմից փորձաքննության արդյունքների ճշգրտման գործընթացի նախաձեռնումը կարող է պայմանավորվել հատուցման գործընթացում ներգրավված որևէ անձի կողմից այդ վճարի կատարման պարտավորությունն ստանձնելու հանգամանքով: *(լրաց. է 29/03/2022թ թիվ 6-Լ)* |

***Հոսքագրի տեխնիկական մասի բացատրություններ***

| | |
|---|---|
|  | Գործողություն |
|  | Ժամկետ<br>(գործողության համար նախատեսված առավելագույն աշխատանքային օրեր) |
|  | Պատասխանատու |
|  | Պայման |
|  | Պարտադիր գործողություն |
|  | Պարտադիր է զուգահեռ գործողություններից որևէ մեկը |

Հոսքագրում յուրաքանչյուր փուլի գործընթացն սկսվում է նախորդ գործընթացից հետո: Ընդ որում, ներկայացված դիմումի հիման վրա սահմանված ժամկետում հոսքագրով նախատեսված համապատասխան գործողությունը Բյուրոյի կամ ԴՍԱ-ի կողմից չիրականացվելու դեպքում նախքան այդ գործողության իրականացումը չի սկսվում հաջորդ փուլի գործընթացը (եթե կոնկրետ փուլի համար այլ բան նախատեսված չէ սույն հավելվածով), և սահմանված ժամկետների կետանցման համար համապատասխան ուշացված օրերի համար տույժերի վճարման պատասխանատվությունը կրում է սահմանված ժամկետում համապատասխան գործողությունը չիրականացրած Բյուրոն (ԴՍԱ-ն): Սահմանված ժամկետների կետանցմամբ դիմումի մերժումը հիմք չէ դիմումատուի կամ այլ անձանց համար հոսքագրով նախատեսված

| |
|---|
| գործողությունների համար սահմանված ժամկետների երկարաձգման կամ վերսկսման համար: *(լրաց. Է 31/03/2020թ թիվ 9-Լ)* |
| Գործընթացների հաջորդականությունն իրականացվում է սլաքների ուղղությամբ: |
| Հոսքագրում զուգահեռ գործողությունները տարբեր ժամկետներ ունենալու դեպքում հիմք է ընդունվում առավելագույն ժամկետ ունեցող գործողության ժամկետը: |

*Հավելված 7*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների*

# ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են՝

1) ԱՊՊԱ ոլորտում պատահարի պատճառների փորձաքննության գործընթացի կազմակերպման կարգն ու ընդհանուր սկզբունքները,

2) ԱՊՊԱ ոլորտում պատահարի պատճառների փորձաքննության մեթոդաբանությունը:

2. Սույն հավելվածով չեն կարգավորվում քրեական և վարչական վարույթ իրականացնող մարմինների գործողությունները: Սույն կետով նախատեսված մարմինների կողմից պատահարի պատճառների փորձագիտական եզրակացությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ պատահարի գծով համապատասխան ակտ (արձանագրություն, որոշում, եզրակացություն կամ այլ նմանատիպ փաստաթուղթ) կազմելու միջոցով: Ընդ որում՝ Ելակետ 1-ը համարվում է պատահարի պատճառների փորձագիտական եզրակացություն՝ Հավելված 6.2-ով նախատեսված դեպքերում:

2.1. Սույն հավելվածով սահմանված կարգավորումները տարածվում են Պարզեցված հատուցման գործընթացի շրջանակներում իրականացվող հետքաբանական և (կամ) նյութագիտական փորձաքննությունների վրա կիրառելիության դեպքում:

~~2.1.~~2.2. Սույն հավելվածով չեն կարգավորվում սույն կանոններով նախատեսված դեպքերում ԱՄՄՊ համակարգում ինքնաշխատ ձևավորված պատահարի պատճառների փորձաքննությունների իրականացման հետ կապված հարաբերությունները: Սույն կետով նախատեսված փորձագիտական եզրակացությունները ձևավորվում են՝ հաշվի առնելով փորձաքննության համար տրամադրված համադրելի ելակետային տվյալների հիման վրա նախկինում տրամադրված փորձաքննության արդյունքները:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն հավելվածում օգտագործվող լրացուցիչ հասկացությունները սույն հավելվածում ունեն հետևյալ իմաստը.

1) **փորձագետ**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ԱՊՊԱ պատահարի պատճառների փորձագետ,

2) **փորձաքննություն**՝ ԱՊՊԱ պատահարի պատճառների առաջնային և (կամ) լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննություն,

3) **ինքնաշխատ պատվեր՝** Բյուրոյի կանոններով սահմանված դեպքերում և կարգով՝ ԱՄՄՊ-ից փորձագետին ինքնաշխատ եղանակով և հերթականության սկզբունքով տրվող առաջնային փորձաքննության պատվեր,

4) **Պատվիրատու՝** սույն կանոնների համաձայն՝ փորձագետին փորձաքննության պատվեր ներկայացրած կամ այն ներկայացնելու պարտավորություն ունեցող Ապահովագրող կամ Բյուրո,

5) **փորձագետի աշխատակից՝** փորձագետի հետ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ գտնվող և Բյուրոյի կանոնների համաձայն ԱՊՊԱ ոլորտում համապատասխան փորձաքննությունն իրականացնելու իրավունք (որակավորում) ունեցող ֆիզիկական անձ:

## ԳԼՈՒԽ 3. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

4. Սույն կանոններով նախատեսված կարգով և դեպքերում ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննությունը կարող է հանձնարարվել (պատվիրվել) միայն Բյուրոյի կանոնների համաձայն համապատասխան որակավորում ունեցող փորձագետներին: Կրկնակի փորձաքննությունը չի կարող իրականացվել տվյալ պատահարի հետ կապված առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից:

5. Սույն կանոններով սահմանված կարգով պատվիրված և ստացված փորձաքննության արդյունքները կիրառելի են բոլոր Ապահովագրողների (Բյուրոյի) համար:

6. Փորձաքննություն իրականացնելու պատվեր փորձագետները կարող են ստանալ բացառապես Հավելված 6-ով նախատեսված Ապահովագրողից կամ Բյուրոյից, ինչպես նաև ինքնաշխատ պատվերի ձևով:

7. Պատվիրատուն ապահովագրական պատահարի առաջացման պատճառների առաջնային (լրացուցիչ) փորձաքննությունը նշանակում է Ձև 4.1-ով, իսկ ապահովագրական պատահարի առաջացման պատճառների կրկնակի փորձաքննությունը՝ Ձև 4.2-ով սահմանված պատվերներ ներկայացնելու միջոցով: Ընդ որում՝ Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.1-րդ դաշտով նախատեսված առաջադրանքը պարտադիր է և մշտապես ներկայացվում է փորձագետին, իսկ նույն ձևերի 3.2.2-րդ դաշտով նախատեսված առաջադրանքը ներկայացվում է Պատվիրատուի հայեցողությամբ՝ ի լրումն Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.1-րդ դաշտով նախատեսված առաջադրանքի՝ բացառությամբ սույն կանոններով սահմանված վնասների առանձնացված գնահատման գործընթացում առանձին հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտության անհրաժեշտության դեպքերի, երբ փորձագետին կարող է ներկայացվել պատվեր՝ Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.2-րդ դաշտով ներկայացված առանձին առաջադրանքով: Սույն կետում նշված առաջադրանքներից տարբերվող առաջադրանքներ պատվերում չեն կարող ներառվել, իսկ ներառվելու դեպքում՝ փորձագետի կողմից հաշվի չեն առնվում փորձաքննություն իրականացնելիս:

7.1. Պարզեցված հատուցման գործընթացի դեպքում պատվիրատուի հայեցողությամբ փորձագետին կարող է ներկայացվել պատվեր՝ համաձայն Ձև 4.1.2-ի՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական հետազոտության իրականացնելու առաջադրանքով:

8. Սույն կանոններով սահմանված կարգով և դեպքերում ԴՍԱ-ի կողմից ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննության նշանակման համար սահմանված ժամկետներում ԴՍԱ-ի (ԴՍԱ-ներից որևէ մեկի) կողմից համապատասխան փորձաքննություն չնշանակվելու դեպքում սահմանված ժամկետի ավարտին ապահովագրական պատահարի առաջացման պատճառների փորձաքննությունը նշանակվում է ինքնաշխատ:

9. Ինքնաշխատ պատվերը համարվում է տրված փորձաքննության արդյունքներով տուժող ճանաչված անձի (անձանց) համար ԴՍԱ համարվող Ապահովագրողի (Ապահովագրողների) կողմից, որն (որոնք) էլ հանդիսանում է (են) տվյալ փորձաքննության համար փորձագետին վճարելու պարտավորություն կրող անձ: *(փոփ. է 29/09/2020թ թիվ 34-Լ)*

10. Փորձաքննության պատվերի հետ փորձագետին պարտադիր տրամադրվում են համապատասխան պատահարի խմբի համար նախատեսված հետևյալ ելակետային տվյալները (փաստաթղթերը, տեղեկություններն ու նյութերը)՝

| **Պատահարի խումբը** | **Ելակետային տվյալների ցանկը** |
|---|---|
| Պարզեցված հատուցման գործընթաց | Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ՝<br>1) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների գծով դրանց հաշվառման ազգային վկայագրերի դարձերեսին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն լրացման ենթակա տվյալները (այն մասով, որով փաստացի լրացված են): Ընդ որում՝ նշված տվյալները կարող են տրամադրվել փորձագետին պատվերին կցված կամ ԱՄՄՊ-ում փորձագետին այդ տվյալներին համապատասխան հասանելիություն տալով:<br>2) սույն տողի 1-ին ենթակետում չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի լուսապատճենները |
| | Համաձայնեցված հայտարարագրի լուսապատճենը կամ էլեկտրոնային տարբերակը |
| | Ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված բոլոր լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային ֆայլերը կամ դրանց հղումները |
| Ստանդարտ հատուցման գործընթաց 1 | Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ՝<br>1) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների գծով դրանց հաշվառման ազգային վկայագրերի |

| | |
|---|---|
| | դարձերեսին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն լրացման ենթակա տվյալները (այն մասով, որով փաստացի լրացված են): Ընդ որում՝ նշված տվյալները կարող են տրամադրվել փորձագետին պատվերին կցված կամ ԱՄՄՊ-ում փորձագետին այդ տվյալներին համապատասխան հասանելիություն տալով:<br>2) սույն տողի 1-ին ենթակետում չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի լուսապատճենները |
| | Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույք վնասված լինելու դեպքում՝ վերջինիս նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) լուսապատճենները |
| | Ելակետ 1-ի և Ելակետ 2-ի լուսապատճենները կամ էլեկտրոնային տարբերակը |
| | Առկայության դեպքում՝ ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված բոլոր լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային ֆայլերը կամ դրանց հղումները *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | Կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում՝ բողոքարկվող փորձագիտական եզրակացության լուսապատճենը |
| Ստանդարտ հատուցման գործընթաց 2 | Պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վերաբերյալ՝<br>1) Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների գծով դրանց հաշվառման ազգային վկայագրերի դարձերեսին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման համաձայն լրացման ենթակա տվյալները (այն մասով, որով փաստացի լրացված են): Ընդ որում՝ նշված տվյալները կարող են տրամադրվել փորձագետին պատվերին կցված կամ ԱՄՄՊ-ում փորձագետին այդ տվյալներին համապատասխան հասանելիություն տալով:<br>2) սույն տողի 1-ին ենթակետում չնախատեսված ավտոտրանսպորտային միջոցների գծով՝ հաշվառման (գրանցման) վկայագրերի կամ մաքսային հայտարարագրերի կամ նմանատիպ այլ փաստաթղթերի լուսապատճենները |
| | Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույք վնասված լինելու դեպքում՝ վերջինիս նույնականացման տվյալները |

| | |
|---|---|
| | պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) լուսապատճենները |
| | Տվյալ պատահարի գծով հարուցված (նախաձեռնված) գործով (վարույթով) օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտի կամ քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում ընդունված եզրափակիչ դատավարական այլ ակտի կամ քրեական հետապնդման ժամկետները կասեցնելու վերաբերյալ դատավարական ակտի կամ իրավասու պետական մարմնի կողմից նախաձեռնված վարույթի շրջանակներում քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ տրամադրված փաստաթղթի կամ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացության և (կամ) որոշման և այդ ակտի (այլ փաստաթղթի) հիմքում ընկած փաստաթղթերի (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) լուսապատճենները |
| | Առկայության դեպքում՝ ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված բոլոր լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային ֆայլերը կամ դրանց հղումները *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | Կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում՝ բողոքարկվող փորձագիտական եզրակացության լուսապատճենը |

11. Ստանդարտ հատուցման գործընթաց 1-ի և Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի դեպքում Պատվիրատուի կողմից փորձագետին կարող են տրամադրվել նաև հետևյալ լրացուցիչ փաստաթղթերը և (կամ) նյութերը՝

1) Բյուրոյի խորհրդի կողմից թույլատրված համակարգչային ծրագրերով ստացված պատահարի վայրի սխեման՝ հիմնված բացառապես լուսանկարների և տեսաձայնագրությունների վրա,

2) պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վրա առկա՝ ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից (գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալները:

12. Պատվիրատուն իրավունք չունի փորձաքննության հետ կապված փորձաքննության պատվերից բացի այլ գրավոր կամ բանավոր ցուցումներ, ուղղորդումներ և (կամ) հանձնարարություններ տալ փորձագետին, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ:

13. Փորձաքննության իրականացման համար սույն հավելվածով նախատեսված փաստաթղթերից, նյութերից և տեղեկություններից բացի այլ փաստաթղթերի, նյութերի

և (կամ) տեղեկությունների ներկայացումն արգելվում է, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ:

14. Պատվիրատուն պարտավոր է մինչև տվյալ պատահարի գծով փորձաքննություն նշանակելը ստուգել Ելակետ 1-ում և Ելակետ 2-ում տվյալների ՀՀ օրենսդրությանը համաձայն ամբողջական լրացված լինելը: Այն դեպքում, երբ որևէ ելակետային տվյալում առկա են չլրացված տեղեկություններ (բացառությամբ ավտոմեքենաների հետվթարային դիրքերն ու միմյանց նկատմամբ չափային տվյալներն արտացոլող տեխնիկական տվյալների, որոնք ավտոտրանսպորտային միջոցների տեղաշարժից հետո օբյեկտիվորեն հնարավոր չէ վերականգնել), Պատվիրատուն պարտավոր է ոչ ուշ, քան ապահովագրական հատուցում ստանալու վերաբերյալ դիմումն ստանալուց և Ելակետ 1-ը և Ելակետ 2-ն ԱՄՄՊ-ում մուտքագրվելուց հետո՝ երկու օրվա ընթացքում (երկու ամսաթվերից ամենաուշ ամսաթվից սկսած), Բյուրոյի և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի միջև համաձայնեցված՝ ելակետային տվյալների (Ելակետ 1 և Ելակետ 2) փոխանցման պայմաններին (այսուհետ՝ Պայմաններ) համապատասխան՝ ներկայացնել ելակետային տվյալների շտկման պահանջ: Ընդ որում, սույն կետի համաձայն շտկման պահանջ ներկայացվելու դեպքում տվյալ հատուցման համար ներկայացման ենթակա փաստաթղթերը համարվում են ԴՍԱ-ի կողմից ամբողջական և պատշաճ կերպով չստացված մինչև շտկված Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը ԱՄՄՊ-ում մուտքագրվելը, բայց ոչ ուշ, քան Ելակետային տվյալների շտկման համար Պայմաններով սահմանված ժամկետի ավարտը: Ելակետային տվյալների շտկման համար Պայմաններով սահմանված ժամկետի ավարտից հետո Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը համարվում են չփոփոխված, և Պատվիրատուն պարտավոր է սահմանված կարգով և ժամկետներում շարունակել սույն կանոններով նախատեսված հետագա գործընթացները: Պատվիրատուն պատասխանատվություն է կրում սույն հավելվածով նախատեսված ոչ ամբողջական ելակետային տվյալների շտկման (ամբողջականացման) ազդակ չներկայացնելու հետևանքով առաջացած վնասների հատուցման համար: Բոլոր դեպքերում ԱՊՊԱ ոլորտում սկսված և (կամ) ավարտված գործընթացները չեն զրկում շահագրգիռ անձանց օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու իրենց պատահարին վերաբերող ելակետային տվյալները կամ իրավասու պետական մարմինների կողմից կամ դատական կարգով հավաքագրելու համապատասխան փաստեր: *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

15. Ինքնաշխատ պատվերի դեպքում սույն կանոնների 14-րդ կետով նախատեսված պարտավորություններն ու դրանց չկատարման պատասխանատվությունը կրում է պատվերն ստացած փորձագետը:

15.1. Պատվիրատուի կողմից նշանակված փորձաքննությունը հետ կանչվելու դեպքում տվյալ պատահարի գծով փորձաքննության նոր պատվերը կարող է տրամադրվել բացառապես միևնույն փորձագետին, եթե առկա չեն տվյալ փորձագետի կողմից համապատասխան փորձաքննության իրականացումն արգելող՝ օրենքով կամ Բյուրոյի կանոններով սահմանված հանգամանքներ: Ընդ որում, փորձաքննության նոր պատվեր տրվելու դեպքում փորձաքննության իրականացման համար սույն կանոններով սահմանված ժամկետները հաշվարկվում են սկզբնական նշանակման օրվանից, բացառությամբ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար պատասխանատու պետական մարմնի կողմից ելակետային տվյալներում շտկումներ կատարված լինելու դեպքերի:

** Կարմիր գունավորմամբ նշված կարգավորումներն ուժի մեջ կմտնեն համապատասխան տեխնիկական հնարավորությունների ապահովման պահին, ինչի մասին Բյուրոյի կողմից լրացուցիչ կիրազեկվի:*

16. Փորձագետը պարտավոր է Պատվիրատուից համապատասխան պատվերն ստանալուց հետո, իսկ սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված դեպքերում ելակետային տվյալների շտկման պահանջ ներկայացրած լինելու դեպքում՝ շտկված Ելակետ 1-ը և Ելակետ 2-ը ԱՄՄՊ-ում մուտքագրվելուց կամ ելակետային տվյալների շտկման համար Պայմաններով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ սույն կանոններով նախատեսված օրերի ընթացքում, իրականացնել փորձաքննություն և Պատվիրատուին տրամադրել փորձագիտական եզրակացություն կամ 3 օրվա ընթացքում տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխան (սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում պատասխանը տրվում է եզրակացության հետ միաժամանակ): Ընդ որում, փորձագետն իրավունք ունի տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխան բացառապես հետևյալ դեպքերում և հիմքերի առկայությամբ՝

1) Ելակետ 1-ում և (կամ) Ելակետ 2-ում առկա են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, սակայն չլրացված այնպիսի տեղեկություններ, որոնք փորձագետի համար անհնարին են դարձնում պատշաճ փորձաքննության իրականացումը և պատահարում մեղավոր կողմի որոշումը՝ բացառությամբ այն դեպքերի, եթե փորձագետի կողմից չի կատարվել սույն կանոնների 15-րդ կետով նախատեսված պարտականությունը:

1.1) Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի շրջանակներում փորձագետին չեն տրամադրվել այնպիսի տեղեկություններ, որոնք ՀՀ օրենսդրության համաձայն՝ լրացվում են Ելակետ 1-ում և Ելակետ 2-ում, եթե դրանց բացակայությունը փորձագետի համար անհնարին է դարձնում պատշաճ փորձաքննության իրականացումը և պատահարում մեղավոր կողմի որոշումը:

2) Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.2-րդ դաշտով տրված առաջադրանքների դեպքում (այդ առաջադրանքների մասով) կամ Ձև 4.1.2-ի համաձայն տրված պատվերի դեպքում՝ պատահարում ներգրավված որևէ գույքի գծով ապահովված չէ (չեն կատարվել) սույն կանոնների 92-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությունը, ինչի հետ կապված ներկայացվել են համապատասխանաբար վերանորոգված կամ ապամոնտաժված գույքի լուսանկարները կամ ապացույցներ՝ առ այն, որ փորձագետն փորձել է իրեն տրված պատվերում՝ վնասված գույքի զննության համար նշված անձի հեռախոսահամարով կապ հաստատել տվյալ անձի հետ, նույն կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեով իրականացրել է սույն կանոնների Ձև 5.3-ով նախատեսված ծանուցումը, սակայն ծանուցումն ուղարկելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, անհնարինության հիմքերը չեն վերացվել կամ փորձաքննությունն անհնարին դարձնող հիմքերի բացակայության մասին հետպատասխան չի ստացվել: *(16-րդ կետը լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ և լրաց. և փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

17. Փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխանը պետք է տրվի՝ համաձայն Ձև 6-ի՝ նշելով փորձաքննության անհնարինություն առաջացնող՝ սույն հավելվածով նախատեսված հիմքերը, ստորագրված լինի փորձագիտական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և փորձագետի աշխատակցի (կրկնակի փորձաքննության դեպքում՝ փորձագետի երկու

աշխատակցի) կողմից՝ վերջինների՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:

18. Եթե փորձագետի կողմից սույն հավելվածով նախատեսված կարգով տրվել է փորձաքննության անհնարինության մասին գրավոր պատասխան, ապա համարվում է, որ փորձագիտական եզրակացությամբ պատահարի առաջացման մեջ մեղավորությունը բաշխվել է հետևյալ կերպ.

1) Ա~~ա~~ռաջնային փորձաքննության դեպքում՝ հաստատված են համարվում Ելակետ 1-ում կատարված՝ մեղավորության մասին պատահարի կողմերի նախնական նշումները. համապատասխանաբար, բոլոր այն վարորդները, ովքեր ընդունել են պատահարում իրենց մեղավորությունը (կատարել են «Մեղավոր եմ» նշումը) փորձաքննության արդյունքի տեսանկյունից ճանաչվում են հավասարազոր մեղավոր, իսկ մնացած վարորդները՝ անմեղ: Եթե Ելակետ 1-ում պատահարին մասնակից բոլոր վարորդները կատարել են «Մեղավոր չեմ» նշումը, ինչպես նաև եթե փորձաքննությունը նշանակվել է Ստանդարտ հատուցման գործընթաց 2-ի շրջանակներում, ապա փորձաքննության արդյունքի տեսանկյունից բոլոր վարորդները ճանաչվում են հավասարազոր մեղավոր:

2) լրացուցիչ փորձաքննության դեպքում՝ հաստատված են համարվում առաջնային փորձաքննության արդյունքները:

~~2)~~3) կրկնակի փորձաքննության դեպքում՝ հաստատված~~ել~~ են համարվում առաջնային (լրացուցիչ փորձաքննություն իրականացված լինելու դեպքում՝ լրացուցիչ) փորձաքննության արդյունքները:

19. Փորձագետի կողմից տրվող եզրակացությունները պետք է բավարարեն համապատասխանաբար Ձև 5.1-ով, Ձև 5.1.1-ով և Ձև 5.1.2-ով սահմանված ձևերին և բովանդակությանը, ստորագրված լինեն փորձագիտական կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի և փորձագետի աշխատակցի (կրկնակի փորձաքննության դեպքում՝ փորձագետի երկու աշխատակցի) կողմից՝ վերջինների՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ: Կրկնակի փորձաքննության եզրակացությունը ստորագրած փորձագետի երկու աշխատակիցները հավասարաչափ պատասխանատվություն են կրում եզրակացության բովանդակության և կատարված եզրահանգումների համար:

20. Փորձագիտական եզրակացության «հետևություններ» բաժնում առաջնային (լրացուցիչ) փորձաքննություն իրականացնող փորձագետը, իսկ 4.1.2-ի համաձայն տրված պատվերի դեպքում՝ հետքաբանական և (կամ) նյութագիտական փորձաքննություն իրականացնող փորձագետը իրականացված հետազոտությունների արդյունքներով համապատասխան ձևերում արտացոլված հստակ (ստանդարտացված) նշումներով ներկայացնում է իր եզրահանգումները (4.1.2-ի համաձայն տրված պատվերի դեպքում՝ միայն 5-րդ ենթակետով նախատեսված եզրահանգումը).

1) իր կողմից ստացված (վերականգնված) պատահարի իրական մեխանիզմի նկարագրությունը և եզրահանգումները պատահարի առաջացման պատճառների և վարորդի (վարորդների), ինչպես նաև այլ անձանց կողմից թույլ տրված խախտումների վերաբերյալ: Ընդ որում, եթե փորձագետի կողմից դիտարկվել են վթարի առաջացման մեկից ավելի հնարավոր մեխանիզմներ, ապա նա պարտավոր է ամբողջական և խորը ուսումնասիրություններով և համապատասխան նկարագրություններով (ներառյալ ուսումնասիրման ընթացքում առաջ քաշված հնարավոր տարբերակների բացառման միջոցով) տրամադրել վթարի առաջացման առավել հավանական մեկ հստակ մեխանիզմ, որի վրա են հիմնվում իր հետագա եզրահանգումները,

2) իր կողմից վերականգնված պատահարի իրական մեխանիզմի՝ փորձաքննությանը տրամադրված ելակետային տվյալների հետ համապատասխանելիության վերաբերյալ: Ընդ որում, դրանց ըստ էության անհամապատասխանելիության դեպքում եզրակացության «Հետազոտության արդյունքում հայտնաբերված հակասությունները և անհամապատասխանությունները» մասում փորձագետը պետք է հանգամանորեն անդրադառնա պատահարի իրական մեխանիզմի համապատասխանությանը փորձաքննությանը տրամադրված ելակետային տվյալների հետ՝ ԱՄՄՊ-ում կատարելով ելակետային տվյալների ճշգրտում,

3) Վթարի իրական մեխանիզմի պայմաններում յուրաքանչյուր վարորդի, իսկ վարորդներից բացի պատահարում այլ անձանց ներգրավված լինելու կամ պատահարի առաջացումն այլ անձանց գործողությունների (անգործության) հետ պատճառահետևանքային կապի մեջ գտնվելու դեպքում՝ նաև վերջինների մասով հստակ մեղավորության կամ անմեղության վերաբերյալ,

4) Պատահարի ձևացման վերաբերյալ, եթե փորձագետի կողմից պարզվում է, որ վթարի ոչ մի մեխանիզմի պայմաններում նման պատահար չէր կարող առաջանալ և (կամ) պատահարի արդյունքում փորձ է կատարվում ծածկել նախկինում այլ հանգամանքներում գույքին պատճառված վնասները: Ընդ որում՝ եթե փորձագետն իր եզրահանգումներում նշում է պատահարի ձևացման վերաբերյալ, ապա փորձագիտական եզրակացության՝ «Հետազոտության արդյունքում հայտնաբերված հակասությունները և անհամապատասխանությունները» մասում նա պետք է հանգամանորեն անդրադառնա այդ փաստերի հիմնավորմանը: Սույն ենթակետով նախատեսված դեպքերում փորձագիտական եզրակացության «հետևություններ» բաժնում չեն կատարվում սույն կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված եզրահանգումները:

5) Տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի՝ վթարի հետ համատեղելիության վերաբերյալ, եթե պատվերում փորձագետին տրված է համապատասխան առաջադրանք: Ընդ որում, փորձագետը տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերի՝ պատվերին կից ներկայացված վթարի հետ անհամատեղելիության վերաբերյալ եզրահանգում կարող է կատարել միայն այն դեպքերում, երբ վթարի ոչ մի մեխանիզմի պայմաններում տրանսպորտային միջոցների վրա առկա հետքերը չէին կարող առաջանալ:

6) Պատահարի հետևանքով վնասված գույքացանկի՝ ներառյալ պատահարին մասնակից վնասված ավտոտրանսպորտային միջոցների ցանկի վերաբերյալ,

7) Պատահարի առաջացման վրա կողմնակի ազդեցություն ունեցած հանգամանքների վերաբերյալ, եթե փորձագետի կողմից բացահայտվել են պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վարորդների և տուժողների գործողություններից տարբերվող այնպիսի հանգամանքներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն են ունեցել պատահարի առաջացման վրա:

21. Կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետն ըստ էության ստուգում է առաջնային փորձաքննություն իրականացրած փորձագետի փորձաքննության արդյունքները՝ փորձագիտական եզրակացության յուրաքանչյուր բաժնի «Ա» մասում նույնությամբ լրացնելով առաջնային փորձաքննության արդյունքները, իսկ «Կ» մասում լրացնելով իր դիտարկումներն առաջնային փորձաքննության արդյունքները սույն կանոններին համապատասխանելու վերաբերյալ՝

անհամապատասխանությունների հայտնաբերման պարագայում հստակ շարադրելով դրանք:

22. Պատվիրատուի լրացուցիչ պահանջով փորձագետը, իր կողմից կատարված եզրահանգումները հիմնավորելու համար, պարտավոր է երկու օրվա ընթացքում վերջինին տրամադրել նման եզրահանգումների համար հիմք հանդիսացող՝ Բյուրոյի խորհրդի կողմից թույլատրված (փորձագետի որակավորման հիմք հանդիսացող)՝ ճանապարհատրանսպորտային պատահարների համար հավաքագրվող ելակետային տվյալների հիման վրա վթարի մեխանիզմը վերականգնելու ծրագրով ստացված վթարի մոդելավորման արդյունքները: Մոդելավորման արդյունքների տրամադրման պարտավորություն փորձագետը չունի բոլոր այն դեպքերում, երբ տրամադրված ելակետային տվյալներում առկա է պատահարի ամբողջական տեսագրությունը:

23. Այն դեպքում, երբ պատահարում ներգրավված են երկուսից ավելի ավտոտրանսպորտային միջոցներ, և փորձագետի կարծիքով տվյալ պատահարի արդյունքում առաջացած տարբեր բախումներում առկա են վարորդների մեղավորության տարբեր բաշխվածություններ, ապա փորձագիտական եզրակացության հետևություններ բաժինը, նույն կառուցվածքի պահպանմամբ, լրացվում է լրացուցիչ հավելվածով, որտեղ նշումներ են կատարվում վարորդներից յուրաքանչյուրի մեղավորության կամ անմեղության մասին՝ ըստ ավտոտրանսպորտային միջոցներին և (կամ) այլ գույքին պատճառված առանձին վնասների:

## ԳԼՈՒԽ 4. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

24. Փորձագետը փորձաքննություն իրականացնում է բացառապես հետևյալ ելակետային տվյալների հիման վրա՝

1) Պատվիրատուի կողմից սույն կանոնների համաձայն իրեն տրամադրված ելակետային տվյալները,

2) փորձագետի նախաձեռնությամբ կատարված՝ պատահարի վայրի հետազոտության արդյունքում ստացված օբյեկտիվ ելակետային տվյալները,

3) Ձև 4.1-ի և Ձև 4.2-ի 3.2.2-րդ դաշտով փորձագետին տրված առաջադրանքի դեպքում՝ նաև պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների և այլ գույքի հետազոտության արդյունքում ստացված օբյեկտիվ ելակետային տվյալները՝ ներառյալ ավտոտրանսպորտային միջոցի վրա առկա ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից (գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալները: Ընդ որում, սույն ենթակետով նախատեսված դեպքում փորձագետը պարտավոր է զննել պատահարում ներգրավված բոլոր ավտոտրանսպորտային միջոցները՝ անկախ դրանցից մեկի կամ մի քանիսի հետվթարային վիճակից: Փորձագետը համապատասխան զննությունն իրականացնում է իր հաշվին՝ կազմակերպելով իր ներկայացուցչի կողմից զննության իրականացման ողջ գործընթացը: Փորձագետի կողմից՝ իր հաշվին զննությունը կազմակերպելու՝ սույն ենթակետով նախատեսված պահանջը գործում է, եթե ավտոտրանսպորտային միջոցը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

25. Փորձագետը փորձաքննության համար իրեն տրամադրված փաստաթղթերում (նյութերում) արտացոլված տեղեկությունների միջև հակասություն հայտնաբերելու դեպքում պետք է առաջնություն տա պատահարի վայրում կատարված

տեսագրությունում կամ լուսանկարներում արտացոլված ելակետային տվյալներին (առկայության դեպքում), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ավտոտրանսպորտային միջոցի վրա առկա ելակետային տվյալները պահպանող մոդուլային համակարգերից (գործարանային նախատեսված՝ պատահարները արձանագրող տվյալների կրիչներից) ստացված ելակետային տվյալներին (դրանց առկայության կամ դրանց ստացման հետ կապված տեխնիկական հնարավորության դեպքում):

26. ԱՊՊԱ ոլորտում փորձաքննության իրականացման և համապատասխան եզրահանգումներ կատարելու առումով մեղավորություն է համարվում սույն հավելվածի 27-րդ կետով նախատեսված խախտումը: Ընդ որում՝ նման որոշումը հիմնվում է՝

1) սույն կանոններով նախատեսված ելակետային տվյալների հետազոտությունների վրա,

2) ճանապարհային երթևեկության կանոնները և անվտանգության նորմերը կարգավորող միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ ենթաօրենսդրական ակտերի՝ մասնավորապես ճանապարհային երթևեկության կանոնների վրա՝ սույն կանոններով նախատեսված բացառություններով (վերապահումներով):

27. Փորձագետի եզրակացությամբ մեղավոր է ճանաչվում այն անձը, ով, ըստ սույն գլխում առկա ելակետային տվյալների հետազոտության արդյունքների, խախտել է սույն գլխում նշված իրավական ակտերից որևէ մեկով սահմանված որևէ պահանջ, և ում խախտումն ուղիղ պատճառահետևանքային կապի մեջ է գտնվում պատահարի առաջացման հետ: Ընդ որում, վարորդի մեղավորության որոշման համար հաշվի են առնվում բացառապես նրա կողմից փաստացի կատարված գործողությունները կամ անգործությունը, որի արդյունքում վնաս է պատճառվել մեկ այլ ավտոտրանսպորտային միջոցի և (կամ) գույքի և (կամ) անձի: Վարորդի մեղավորությունը չի կարող բացառվել և դրա չափը չի կարող նվազեցվել՝ հիմք ընդունելով պատահարին ուղեկցող և (կամ) պատահարի առաջացման պատճառ (կամ պատճառներից մեկը) հանդիսացող հետևյալ գործոնները՝

1) ավտոտրանսպորտային միջոցի տեխնիկական վիճակը,

2) պատահարի պահին եղանակային և ճանապարհային պայմանները, տեսանելիությունը,

3) պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վարորդներից և տուժողներից բացի ցանկացած երրորդ անձանց կամ կենդանիների գործողությունները,

4) վարորդների առողջական, ֆիզիոլոգիական և (կամ) հոգեբանական վիճակը,

5) վարորդի կողմից պատահարը կանխելու տեխնիկական հնարավորությունը: Սույն ենթակետով նախատեսված գործոնը կարող է հիմք հանդիսանալ վարորդի մեղավորությունը բացառելու կամ նվազեցնելու համար միայն այն դեպքում, եթե պատահարում ներգրավված որևէ այլ վարորդի (վարորդների) գործողություններում առկա են պատահարն առաջացրած՝ սույն կանոններով նախատեսված այլ խախտումներ:

28. Սույն հավելվածի 27-րդ կետով նախատեսված պահանջը չի ազատում փորձագետին պարտավորությունից՝ հաշվի առնել նշված կետով նախատեսված գործոնները՝ որպես վարորդին մեղավոր ճանաչելու կամ նրա մեղավորությունը մեծացնելու հիմք:

29. Արգելվում է՝

1) փորձագետի եզրակացությամբ պատահարի առաջացման մեջ մեղավոր ճանաչել բացառապես պատահարին ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների վարորդներից և տուժողներից տարբերվող անձանց,

2) փորձագետի եզրակացությամբ պատահարի առաջացման մեջ որևէ անձի մեղավոր չճանաչել:

30. Փորձագետը պարտավոր է փորձաքննություն իրականացնելիս ելակետային տվյալներում առկա օբյեկտիվ տվյալների օգտագործմամբ իր կողմից օգտագործվող ծրագրով ստանալ վթարին նախորդող պահին պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների արագությունները (առնվազն՝ «տվյալ վայրում վարել է թույլատրելի արագությամբ» կամ «ոչ թույլատրելի արագությամբ» ձևակերպումներով)՝ Փորձագիտական եզրակացության «Դեպքի վայրի և/կամ ՏՄ-ի մասով կատարված լրացուցիչ զննությունները, դրանց ամսաթվերը» մասում առանձին-առանձին անդրադառնալով պատահարի առաջացման հետ ավտոտրանսպորտային միջոցների արագությունների պատճառահետևանքային կապին: Եթե սույն կանոնների համաձայն՝ ելակետային տվյալների ամբողջական չլինելու հանգամանքն անհնար է դարձրել փորձագետի կողմից վթարին նախորդող պահին պատահարում ներգրավված ավտոտրանսպորտային միջոցների արագությունների որոշումը, ապա փորձագետի կողմից ընդունվում է, որ նախքան վտանգը հայտնաբերելը համապատասխան վարորդը երթևեկել է տվյալ իրավիճակում թույլատրելի առավելագույն արագությամբ:

31. Բյուրոյի կազմում գործում է փորձագետների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե), որի մեջ ընդգրկվում են բոլոր փորձագետներից երկուական ներկայացուցիչ՝ փորձագետի աշխատակիցներ: Կոմիտեի նիստերի կազմակերպման, անցկացման և որոշումների ընդունման կարգը սահմանվում է Բյուրոյի խորհրդի կողմից հաստատված աշխատակարգով: Սույն հավելվածով սահմանված փորձաքննության մեթոդաբանության մաս են հանդիսանում նաև Կոմիտեի կողմից հաստատված և Բյուրոյում գրանցված մեթոդական ցուցումները և իրավիճակային խնդիրների լուծումները:

*Հավելված 8.1*
*«ԱՊՊԱ ընդհանուր պայմաններ» կանոնների*

# ԱՊՊԱ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն հավելվածով սահմանվում են՝

1) ԱՊՊԱ ոլորտում տուժողի գույքին պատճառված վնասների գնահատման գործընթացի կազմակերպման կարգն ու ընդհանուր սկզբունքները,

2) ԱՊՊԱ ոլորտում տուժողի գույքին պատճառված վնասների գնահատման մեթոդաբանությունը:

## ԳԼՈՒԽ 2. ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն հավելվածում օգտագործվող լրացուցիչ հասկացությունները սույն հավելվածում ունեն հետևյալ իմաստը.

1) **փորձագետ՝** վնասների փորձագետ,

2) **փորձաքննություն՝** ԱՊՊԱ պատահարի հետևանքով գույքին պատճառված վնասների առաջնային և (կամ) լրացուցիչ և (կամ) կրկնակի փորձաքննություն,

3) **գործարանային արտադրության բաղադրիչ՝** տվյալ ավտոտրանսպորտային միջոցի արտադրության ընթացքում տեղադրվող բաղադրիչ կամ արտադրող կազմակերպության կողմից առաջարկվող համապատասխան դետալ կամ հանգույց,

4) **բաղադրիչ՝** գույքի մաս, դետալ, հանգույց և այլ բաղկացուցիչ մաս, որի առանձնացված առաջարկն առկա է շուկայում:

## ԳԼՈՒԽ 3. ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3. Ապահովագրողը սույն կանոններով նախատեսված դեպքերում փորձաքննություն նշանակելիս այն կարող է հանձնարարել (պատվիրել) միայն Բյուրոյի կանոնների համաձայն համապատասխան որակավորում ունեցող փորձագետներին: Կրկնակի փորձաքննությունը չի կարող իրականացվել տվյալ պատահարի հետ կապված առաջնային և (կամ) լրացուցիչ փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից:

4. Փորձաքննություն իրականացնելու պատվեր փորձագետները կարող են ստանալ ԴՍԱ-ից, իսկ կրկնակի փորձաքննության պատվերը՝ Բյուրոյից:

5. ԴՍԱ-ն փորձաքննությունը նշանակում է Ձև 4-ով սահմանված պատվերը ներկայացնելու միջոցով: Ձև 4-ում նշված հարցադրումներից տարբերվող հարցադրումներ պատվերում չեն կարող ներառվել, իսկ ներառվելու դեպքում՝ փորձագետի կողմից հաշվի չեն առնվում փորձաքննություն իրականացնելիս:

6. Փորձաքննության պատվերին կցվում են համապատասխան պատահարի խմբի համար նախատեսված հետևյալ ելակետային տվյալները (փաստաթղթերն ու նյութերը)՝

| Պատահարի խումբը | Փաստաթղթերի (նյութերի) ցանկը |
| --- | --- |
| Պարզեցված | Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման (գրանցման) վկայագրի կամ մաքսային հայտարարագրի կամ նմանատիպ այլ փաստաթղթի պատճենը (լուսապատճենը) |
| | Համաձայնեցված հայտարարագրի լուսապատճենը |
| | 1) Պատահարի վայրում իրականացված լուսանկարների և (կամ) տեսագրության էլեկտրոնային կրիչը (ֆայլերը) կամ դրանց հղումները, այլ օբյեկտիվ տվյալներ և/կամ ապացույցներ, որոնք կարող են օգտակար լինել փորձագետի համար հնարավորին ամբողջական և օբյեկտիվ փորձաքննություն իրականացնելու համար *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | Բողոքարկվող փորձագիտական եզրակացության պատճենը (լուսապատճենը) (կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում) |
| | Գնահատվող գույքի մասով՝ ԴՍԱ-ի մոտ առկա (ԴՍԱ-ի կողմից տիրապետվող) ԱՊՊԱ համակարգում նախկինում կատարված հատուցումների համար հիմք հանդիսացած վնասների լուսանկարները և/կամ տեսագրությունները |
| | Լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմումի պատճենը (լուսապատճենը) (լրացուցիչ փորձաքննության պատվերի դեպքում) |
| Ստանդարտ հատուցման գործընթաց 1 | Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման (գրանցման) վկայագրի կամ մաքսային հայտարարագրի կամ նմանատիպ այլ փաստաթղթի, իսկ վնասված գույքը ավտոտրանսպորտային միջոցից տարբերվելու դեպքում՝ վերջինի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) լուսապատճենը |
| | Ելակետ 1-ի և Ելակետ 2-ի պատճենները (լուսապատճենները կամ էլեկտրոնային տարբերակները) |
| | Առկայության դեպքում՝ ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչը (ֆայլերը) կամ դրանց հղումները, այլ օբյեկտիվ տվյալներ և/կամ ապացույցներ, որոնք կարող են օգտակար լինել փորձագետի համար հնարավորին ամբողջական և օբյեկտիվ փորձաքննություն իրականացնելու համար *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |

| | |
|---|---|
| | Առկայության դեպքում՝ տվյալ պատահարի գծով իրականացված պատահարի առաջացման պատճառների գծով տրամադրված վերջին փորձագիտական եզրակացության պատճենը (լուսապատճենը) |
| | Բողոքարկվող փորձագիտական եզրակացության պատճենը (լուսապատճենը) (կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում) |
| | Գնահատվող գույքի մասով՝ ԴՍԱ-ի մոտ առկա (ԴՍԱ-ի կողմից տիրապետվող) ԱՊՊԱ համակարգում նախկինում կատարված հատուցումների համար հիմք հանդիսացած վնասների լուսանկարները և/կամ տեսագրությունները |
| | Լրացուցիչ փորձարննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմումի պատճենը (լուսապատճենը) (լրացուցիչ փորձարննության պատվերի դեպքում) |
| Ստանդարտ հատուցման գործընթաց 2 | Ավտոտրանսպորտային միջոցի հաշվառման (գրանցման) վկայագրի կամ մաքսային հայտարարագրի կամ նմանատիպ այլ փաստաթղթի, իսկ վնասված գույքը ավտոտրանսպորտային միջոցից տարբերվելու դեպքում՝ վերջինի նույնականացման տվյալները պարունակող փաստաթղթի (փաստաթղթերի) լուսապատճենը |
| | Տվյալ պատահարի գծով հարուցված (նախաձեռնված) գործով (վարույթով) օրինական ուժի մեջ մտած գործն ըստ էության լուծող (եզրափակիչ) դատական ակտի կամ քրեական դատավարության օրենսդրության շրջանակներում ընդունված եզրափակիչ դատավարական այլ ակտի կամ քրեական հետապնդման ժամկետները կասեցնելու վերաբերյալ դատավարական ակտի կամ իրավասու պետական մարմնի կողմից նախաձեռնված վարույթի շրջանակներում քրեական հետապնդում չհարուցելու վերաբերյալ տրամադրված փաստաթղթի կամ վարչական վարույթ իրականացնող մարմնի կողմից ընդունված եզրակացության և (կամ) որոշման և այդ ակտի (այլ փաստաթղթի) հիմքում ընկած փաստաթղթերի (դեպքի վայրի սխեմա, բացատրություններ, փորձագիտական եզրակացություն) լուսապատճենները |
| | Առկայության դեպքում՝ ցանկացած եղանակով ստացված՝ պատահարի վայրում իրականացված լուսանկարների և (կամ) տեսագրության և (կամ) պատահարի տեսաձայնագրության էլեկտրոնային կրիչը (ֆայլերը) կամ դրանց հղումները, այլ օբյեկտիվ տվյալներ և/կամ ապացույցներ, որոնք կարող ենք օգտակար լինել փորձագետի համար հնարավորին |

| | |
|---|---|
| | ամբողջական և օբյեկտիվ փորձաքննություն իրականացնելու համար *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Լ)* |
| | Առկայության դեպքում՝ տվյալ պատահարի գծով իրականացված պատահարի առաջացման պատճառների գծով տրամադրված վերջին փորձագիտական եզրակացության պատճենը (լուսապատճենը) |
| | Բողոքարկվող փորձագիտական եզրակացության պատճենը (լուսապատճենը) (կրկնակի փորձաքննության պատվերի դեպքում) |
| | Գնահատվող գույքի մասով՝ ԴՍԱ-ի մոտ առկա (ԴՍԱ-ի կողմից տիրապետվող) ԱՊՊԱ համակարգում նախկինում կատարված հատուցումների համար հիմք հանդիսացած վնասների լուսանկարները և/կամ տեսագրությունները |
| | Լրացուցիչ փորձաքննություն իրականացնելու պահանջի վերաբերյալ դիմումի պատճենը (լուսապատճենը) (լրացուցիչ փորձաքննության պատվերի դեպքում) |

7. ԴՍԱ-ն իրավունք չունի փորձաքննության հետ կապված փորձաքննության պատվերից բացի այլ գրավոր կամ բանավոր ցուցումներ, ուղղորդումներ և (կամ) հանձնարարություններ տալ փորձագետին, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ:

8. Փորձաքննության իրականացման համար սույն հավելվածով նախատեսված փաստաթղթերից բացի այլ փաստաթղթերի և (կամ) նյութերի ներկայացումն արգելվում է, իսկ ներկայացվելու դեպքում՝ դրանք փորձագետի կողմից հիմք չեն ընդունվում փորձաքննության ժամանակ:

9. Փորձագետը պարտավոր է ապահովագրողից համապատասխան պատվերն ստանալուց հետո՝ Հավելված 6-ով նախատեսված օրերի ընթացքում, իրականացնել փորձաքննություն և պատվիրատուին տրամադրել փորձագիտական եզրակացություն կամ 3 (համաձայնեցված հայտարարագրով գործընթացի դեպքում՝ 1) օրվա ընթացքում, պատվիրատուին տրամադրել փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխան՝ նշելով փորձաքննության անհնարինություն առաջացնող հիմքերը: Ընդ որում՝ սույն կանոնների համաձայն, որպես փորձաքննության անհնարինությունն առաջացնող հիմք կարող է դիտարկվել միայն սույն կանոնների 92-րդ կետի 2-րդ կամ 3-րդ ենթակետով սահմանված պարտավորությունը չկատարվելը, ինչի հետ կապված ներկայացվել են, համապատասխանաբար, վերանորոգված կամ ապամոնտաժված գույքի լուսանկարները կամ ապացույցներ՝ առ այն, որ փորձագետն իրեն տրված պատվերի 1.3-րդ կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեով իրականացրել է սույն կանոնների Հավելված 1-ի Ձև 5.3-ով նախատեսված ծանուցումը, փորձել է նույն կետում նշված հեռախոսահամարով կապ հաստատել տվյալ անձի հետ, սակայն ծանուցումն ուղարկելուց հետո՝ 1 օրվա ընթացքում, անհնարինության հիմքերը չեն վերացվել կամ փորձաքննությունն անհնարին դարձնող հիմքերի բացակայության մասին

հետպատասխան չի ստացվել: *(լրաց. է 28/04/2020թ թիվ 10-Ն և փոփ. և լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Ն)*

9.1. Փորձագիտական եզրակացություն տալու անհնարինության մասին գրավոր պատասխանը պետք է տրվի՝ համաձայն Ձև 6-ի՝ նշելով փորձաքննության անհնարինություն առաջացնող՝ սույն հավելվածով նախատեսված հիմքերը, *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Ն)* ստորագրված լինի ֆիզիկական անձ փորձագետի, իսկ փորձագիտական կազմակերպությունների դեպքում՝ փորձագիտական կազմակերպության անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի և փորձագետի (կրկնակի փորձաքննության դեպքում՝ երկու փորձագետի) կողմից՝ վերջինների՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:

9.2. Եթե կրկնակի փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից սույն հավելվածով նախատեսված կարգով տրվել է փորձաքննության անհնարինության մասին գրավոր պատասխան, ապա համարվում է, որ հաստատվել են առաջնային փորձաքննության արդյունքները: *(լրաց. է 30/03/2021թ թիվ 12-Ն)*

10. Փորձագետը փորձագիտական եզրակացություն կազմելու համար վնասված գույքի զննությունն իրականացնում է իր հաշվին՝ կազմակերպելով իր ներկայացուցչի այցելությունը գույքի՝ պատվերում նշված գտնվելու վայրը, եթե վնասված գույքն արդեն իսկ չի ներկայացվել փորձագետի գործունեության վայրը: Փորձագետի կողմից իր հաշվին զննությունը կազմակերպելու՝ սույն կետով նախատեսված պահանջը գործում է, եթե գույքը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում: Վնասված գույքի զննության արդյունքներով փորձագետը պետք է կազմի արձանագրություն՝ համաձայն Ձև 5.4-ի՝ դրանում արտացոլելով զննության ընթացքում իր կողմից բացահայտված բոլոր վնասված բաղադրիչները՝ վնասվածքների մասին անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ վնասվածքներն առաջացել են համապատասխան պատահարից, թե՝ ոչ:

11. Առաջնային և կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետի կողմից տրվող եզրակացությունները տրամադրվում են համապատասխանաբար Ձև 5.2-ի և Ձև 5.2.1-ի համաձայն՝ ստորագրված ֆիզիկական անձ փորձագետի, իսկ փորձագիտական կազմակերպությունների դեպքում՝ փորձագիտական կազմակերպության անունից հանդես գալու իրավունք ունեցող անձի և եզրակացությունը (ակտը) կազմած փորձագետի (կրկնակի փորձաքննության դեպքում՝ երկու փորձագետի) կողմից՝ վերջինների՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունելի էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ: Կրկնակի փորձաքննության եզրակացությունը ստորագրած երկու փորձագետները հավասարաչափ պատասխանատվություն են կրում եզրակացության բովանդակության և կատարված եզրահանգումների համար:

12. Փորձագետը պարտավոր է փորձագիտական եզրակացությունում նշել.

1) ԴՍԱ-ի հետ համագործակցող վերանորոգող կազմակերպությունների ցանկում ներառված այն վերանորոգող կազմակերպության անվանումը և հեռախոսահամարը, որի կողմից ԴՍԱ-ի համար տրամադրված գներից օգտվել է գույքին պատճառված վնասի չափի հաշվարկում բաղադրիչի վերանորոգման և տեղադրման հետ կապված աշխատանքների արժեքը որոշելիս,

2) վնասված և փոխարինման ենթակա բաղադրիչներին փոխարինող բաղադրիչների ձեռքբերման հստակ աղբյուրները (անունը, ազգանունը/անվանումը և հեռախոսահամարը), որոնց գներից օգտվել է գույքին պատճառված վնասի չափի հաշվարկում փոխարինող բաղադրիչի արժեքը որոշելիս:

13. Կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետն ըստ էության ստուգում է առաջնային փորձաքննություն իրականացրած փորձագետի փորձաքննության արդյունքները՝ առաջնային փորձագետի եզրակացության յուրաքանչյուր տողի դիմաց համապատասխան նշում կատարելու միջոցով: Ընդ որում, այն դեպքում, երբ կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետի կողմից հավաստվում է, որ՝

1) առաջնային փորձաքննության համապատասխան տողում արտացոլված արդյունքը համապատասխանում է սույն կանոններով սահմանված մեթոդաբանությանը, ապա փորձագետի կողմից տվյալ տողի դիմաց կատարվում է «Համապատասխանում է» նշում, իսկ կրկնակի փորձաքննության արդյունքները լրացվում են առաջնային փորձաքննության եզրակացության մեջ արտացոլված արժեքներով,

2) առաջնային փորձաքննության համապատասխան տողում արտացոլված արդյունքը չի համապատասխանում սույն կանոններով սահմանված մեթոդաբանությանը, ապա փորձագետի կողմից տվյալ տողի դիմաց կատարվում է «Չի համապատասխանում» նշում, և անմիջապես դրան հաջորդող սյուներում նշվում են ճիշտ տվյալները: Ընդ որում, տվյալ տողում ներառված որևէ արդյունք տվյալ բաժնում ներառման ոչ ենթակա լինելու դեպքում, տողի դիմաց՝ համապատասխան սյուներում դրվում է գծիկ,

3) անհրաժեշտ է ավելացնել նոր տողեր, ապա համապատասխան բաժնի վերջում ավելացվում են նոր տողեր և այդ տողերի՝ առաջնային փորձաքննության համար նախատեսված սյուներում դրվում է գծիկ, իսկ տողի դիմաց կատարվում է «Չի համապատասխանում» նշումը, և անմիջապես դրան հաջորդող սյուներում նշվում են կրկնակի փորձաքննությամբ ստացված տվյալները:

14. Փորձագիտական եզրակացությունում փորձագետը պարտավոր է ապահովել վնասված գույքի ամբողջական պատկերը և դրա վնասված բոլոր բաղադրիչները պարունակող (բոլոր վնասվածքները հստակորեն արտացոլող) գունավոր լուսանկարներ, որոնք պետք է բավարարեն առնվազն հետևյալ տեխնիկական չափանիշներին՝

1) պարունակում է 5 մեգապիքսել թույլտվություն,

2) ունի լուսավորության բավարար մակարդակ,

3) հստակ է և պարզ (ոչ աղավաղված),

4) որևէ ծրագրային փոփոխության չի ենթարկվել, մասնավորապես՝ չի կատարվել գույնի ձևափոխում, հայելային արտապատկերում և այլն, ինչպես նաև չեն փոփոխվել լուսանկարների EXIF տվյալները,

5) կատարված է .jpg կամ .png ձևաչափով:

## ԳԼՈՒԽ 4. ՎՆԱՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

15. Փորձագետի կողմից ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասների գնահատումը իրականացվում է հետևյալ սկզբունքներով և մեթոդաբանությամբ.

1) Վնասի հաշվարկում հաշվի են առնվում գույքին պատճառված միայն այն վնասվածքները, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են գտնվում համապատասխան պատահարի հետ:

2) Վնասված գույքի և դրանց առանձին բաղադրիչների, վերանորոգման համար անհրաժեշտ նյութերի և կատարման ենթակա աշխատանքների արժեքը որոշելիս հիմք են ընդունում փորձագիտական եզրակացությունը կազմելու օրվա դրությամբ սույն հավելվածով նախատեսված գները՝ բացառությամբ ստուգիչ փորձաքննության, որի դեպքում հիմք է ընդունվում ստուգվող փորձագիտական եզրակացությունը կազմելու օրվա դրությամբ սույն հավելվածով նախատեսված գները:

3) Եթե տեխնիկապես հնարավոր է (վնասված բաղադրիչի վերականգնումը հնարավոր է դրա նպատակային նշանակությունը և արտաքին տեսքը պահպանելով) և տնտեսապես հիմնավորված (վերանորոգման ծախսերը չեն գերազանցում տվյալ բաղադրիչի՝ սույն հավելվածով նախատեսված գնի 80 տոկոսը) վնասված բաղադրիչի վերականգնումը, ապա պատճառված վնասի չափի մեջ փորձագետը հաշվարկում է այդ բաղադրիչի՝ սույն հավելվածով սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված վերանորոգման հետ կապված աշխատանքների արժեքը: Նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում պատճառված վնասի չափի մեջ հաշվարկվում է համանման բաղադրիչի՝ սույն հավելվածով սահմանված մեթոդաբանությամբ հաշվարկված ձեռքբերման արժեքը,

4) այն դեպքում, երբ գույքին պատճառված վնասի ընդհանուր չափը գերազանցում է մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը գույքի շուկայական արժեքի 80 տոկոսը, և (կամ) գույքի վերանորոգումը տեխնիկապես անհնարին է (վնասված գույքի վերականգնումը հնարավոր չէ դրա նպատակային նշանակությունը և արտաքին տեսքը պահպանելով) ապա գնահատումն իրականացվում է մնացորդային արժեքի մեթոդով՝ սույն հավելվածի 5-րդ գլխով սահմանված մեթոդաբանությամբ,

5) ավտոտրանսպորտային միջոցին պատճառված վնասի հաշվարկում վնասված բաղադրիչի ձեռքբերման արժեքը որոշվում է հետևյալ մեթոդաբանությամբ՝

**Աղյուսակ 1**

| Ավտոտրանսպորտային միջոցի արտադրության մայր երկիրը | Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը և վազքը | Ավտոտրանսպորտային միջոցի վնասված բաղադրիչի ձեռքբերման արժեքի որոշման մեթոդաբանությունը |
|---|---|---|
| Նախկինում ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկված երկրներ | երկուսից ոչ ավելի տարվա արտադրության և 40 000 կիլոմետրից ոչ ավելի վազք ունեցող | Հիմք է ընդունվում գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը |
| Նախկինում ԽՍՀՄ-ի կազմում չընդգրկված երկրներ | հինգից ոչ ավելի տարվա և 100 000 կիլոմետրից ոչ ավելի վազք ունեցող | |

| | | |
|---|---|---|
| Նախկինում ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկված երկրներ | երկու տարուց ավելի կամ 40 000 կիլոմետրից ավելի վազք ունեցող | Հիմք է ընդունվում հետևյալ արժեքներից որևէ մեկը՝ առավելություն տալով առավել բարձր ենթակետում նշված տարբերակին և առավել ցածր ենթակետում նշված տարբերակը դիտարկելով միայն նախորդ ենթակետում նշված արժեքի բացակայության դեպքում.<br><br>1) Հայաստանի Հանրապետությունում ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորին նույն տարիքի և մաշվածության գործարանային արտադրության բաղադրիչի արժեքը,<br>2) Հայաստանի Հանրապետությունում գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը՝ մասհանելով համապատասխանաբար Աղյուսակ 2-ում կամ 3-ում նշված մաշվածության տոկոսները,<br>3) Հայաստանի Հանրապետությունում ոչ գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը,<br>4) Հայաստանի Հանրապետությունից դուրս ձևավորված օգտագործված պահեստամասերի շուկայում առկա հնարավորին նույն տարիքի և մաշվածության գործարանային արտադրության բաղադրիչի արժեքը՝ ավելացնելով Հայաստանի Հանրապետության տարածք դրա |
| Նախկինում ԽՍՀՄ-ի կազմում չընդգրկված երկրներ | հինգ տարուց ավելի կամ 100 000 կիլոմետրից ավելի վազք ունեցող | |

| | | |
|---|---|---|
| | | տեղափոխման և մաքսազերծման արժեքը,<br>5) Հայաստանի Հանրապետությունից դուրս գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը՝ մասհանելով համապատասխանաբար Աղյուսակ 2-ում կամ 3-ում նշված մաշվածության տոկոսները և ավելացնելով Հայաստանի Հանրապետության տարածք դրա տեղափոխման և մաքսազերծման արժեքը,<br>6) Հայաստանի Հանրապետությունից դուրս ոչ գործարանային արտադրության համանման նոր բաղադրիչի արժեքը՝ ավելացնելով Հայաստանի Հանրապետության տարածք դրա տեղափոխման և մաքսազերծման արժեքը: |

**Նախկինում ԽՍՀՄ-ի կազմում ընդգրկված երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների վնասված բաղադրիչների արժեքի հաշվարկման համար կիրառվող մաշվածության տոկոսները**

**Աղյուսակ 2**

| **Վազքը (Հազ.կմ)** | **Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը (տարի)** | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **0-ից 2** | **3-ից 10** | **11-ից 15** | **16-ից 20** | **21 և ավելի** |
| **0-40** | Չի կիրառվում | 6 | 11 | 13 | 16 |
| **41-100** | 5 | 8 | 12 | 14 | 20 |
| **101-150** | 6 | 9 | 13 | 15 | 23 |
| **151-200** | 9 | 11 | 13 | 16 | 25 |
| **201-300** | 10 | 12 | 14 | 17 | 27 |
| **300-ից ավելի** | 12 | 13 | 15 | 18 | 30 |

**Նախկինում ԽՍՀՄ-ի կազմում չընդգրկված երկրներում արտադրված ավտոտրանսպորտային միջոցների վնասված բաղադրիչների արժեքի հաշվարկման համար կիրառվող մաշվածության տոկոսները**

**Աղյուսակ 3**

| Վազքը (Հազ.կմ) | Ավտոտրանսպորտային միջոցի տարիքը (տարի) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 0-ից 2 | 3-ից 4 | 5 | 6-ից 8 | 9-ից 10 | 11 և ավելի |
| **0-40** | Չի կիրառվում | | | 17 | 21 | 24 |
| **41-80** | | | | 20 | 23 | 27 |
| **81-100** | | | | 24 | 28 | 30 |
| **101-140** | 18 | 22 | 24 | 27 | 29 | 31 |
| **141-160** | 20 | 23 | 26 | 28 | 29 | 32 |
| **161-180** | 22 | 26 | 27 | 30 | 31 | 33 |
| **181-200** | 24 | 27 | 29 | 31 | 32 | 33 |
| **201-250** | 25 | 28 | 30 | 32 | 33 | 35 |
| **251-350** | 32 | 33 | 36 | 38 | 38 | 40 |
| **350-ից ավելի** | 40 | 42 | 44 | 46 | 46 | 47 |

Ընդ որում՝

ա. եթե ապացուցվում է, որ վնասված բաղադրիչը եղել է համապատասխան ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող հնության (ավելի նոր կամ ավելի հին), ապա դրա ձեռքբերման արժեքի հաշվարկման համար կիրառվում է տվյալ բաղադրիչի տարիքին համարժեք տարիքի ավտոտրանսպորտային միջոցի բաղադրիչի գնահատման համար նախատեսված մեթոդաբանությունը,

բ. եթե ապացուցվում է, որ վնասված բաղադրիչը եղել է ոչ գործարանային արտադրության, ապա դրա ձեռքբերման արժեքի հաշվարկման համար

հիմք է ընդունվում ոչ գործարանային արտադրության համանման բաղադրիչի արժեքը՝ առանց որևէ մաշվածություն մասահանելու,

գ. որպես ավտոտրանսպորտային միջոցի տարիք ընդունվում է փորձաքննության իրականացման տարեթվի (ընդ որում՝ մինչև յուրաքանչյուր տարվա 5-րդ օրը կատարվող կրկնակի փորձաքննություններում ավտոտրանսպորտային միջոցի տարիքի հաշվարկման համար, որպես տարեթիվ ընտրվում է նախորդ տարին) և տվյալ ավտոտրանսպորտային միջոցի արտադրության տարեթվի տարբերությունը: *(փոփ. է 30/03/2021թ թիվ 12-Լ)*

դ. եթե ավտոտրանսպորտային միջոցի վազքի ցուցիչի հիման վրա տեխնիկապես հնարավոր չէ (չգործելու, վնասված լինելու կամ այլ նմանատիպ պատճառով) վերծանել ավտոտրանսպորտային միջոցի վազքը, կամ ավտոտրանսպորտային միջոցի վազքի ցուցիչը պարունակում է հինգ կամ պակաս նիշ, ինչի պատճառով հնարավոր չէ ստույգ որոշել ավտոտրանսպորտային միջոցի իրական վազքը, ապա այլ ապացույցների

բացակայության դեպքում սույն կետով նախատեսված կանոնների կիրառման նպատակով համարվում է, որ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վազքը արտադրման ամսաթվից մինչև փորձագիտական եզրակացության կազմման օրը յուրաքանչյուր տարվա համար որպես տաքսի կամ երթուղային տաքսի շահագործվող ավտոտրանսպորտային միջոցներից բացի բոլոր ավտոտրանսպորտային միջոցների համար կազմել է 20 հազար կիլոմետր, իսկ որպես տաքսի կամ երթուղային տաքսի շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների համար 40 հազար կիլոմետր (ոչ ամբողջական տարվա համար տարեկան վազքը նվազեցվում է չլրացած օրերի քանակին համամասնորեն)։

6) Բաղադրիչի վերանորոգման և տեղադրման հետ կապված աշխատանքների արժեքը որոշելիս հիմք են ընդունվում ԴՍԱ-ի հետ համագործակցող վերանորոգող կազմակերպությունների ցանկում ներառված որևէ վերանորոգող կազմակերպության կողմից ԴՍԱ-ի համար տրամադրված գները, որոնք հասանելի կլինեն (փորձագիտական եզրակացության մեջ նշված գնով կտրամադրվեն տուժողին) եզրակացության հիման վրա ընդունված ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասն օրերի ընթացքում: Ընդ որում՝

ա. ԴՍԱ-ն պարտավոր է այդ գնացուցակը հասանելի դարձնել տվյալ փորձագետի համար՝ այն հրապարակելով իր պաշտոնական ինտերնետային կայքում կամ փոխանցելով փորձագետին որևէ էլեկտրոնային միջավայրի միջոցով կամ տեղադրելով ԱՄՄՊ-ում կամ նշված տարբերակներից բոլորի բացակայության դեպքում՝ տրամադրելով փորձագետին՝ վերջինի պահանջն ստանալուց հետո՝ ոչ ուշ, քան 1 օրվա ընթացքում:

բ. կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետն իր զննության արդյունքում հիմնավորված՝ վերանորոգման ենթակա բաղադրիչների աղբյուրների և դրանք գների մասով հիմք է ընդունում առաջնային փորձաքննության եզրակացության մեջ նշված աղբյուրները (դրանք առաջնային փորձաքննության եզրակացության մեջ առկա լինելու դեպքերում), բացառությամբ այն դեպքերի, երբ կրկնակի փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից այդ աղբյուրները ստուգելու (մոնիթորինգի ենթարկելու) արդյունքում պարզվում է, որ վերջինները չեն բավարարում սույն (7-րդ) կետով ներկայացվող հասանելիության պահանջներին:

7) Վնասված և փոխարինման ենթակա բաղադրիչներին փոխարինող բաղադրիչների ձեռքբերման արժեքը որոշելիս հիմք են ընդունվում այնպիսի աղբյուրներ, որոնք հասանելի կլինեն (փորձագիտական եզրակացության մեջ նշված գնով կտրամադրվեն տուժողին) եզրակացության հիման վրա ընդունված ապահովագրական հատուցում վճարելու (մերժելու) վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող տասն օրերի ընթացքում: Ընդ որում, կրկնակի փորձաքննություն իրականացնող փորձագետն իր զննության արդյունքում հիմնավորված՝ վնասված և փոխարինման ենթակա բաղադրիչների աղբյուրների և դրանց գների մասով հիմք է ընդունում առաջնային փորձաքննության եզրակացության մեջ նշված աղբյուրները (դրանք առաջնային փորձաքննության եզրակացության մեջ առկա լինելու դեպքերում), բացառությամբ այն դեպքերի, երբ կրկնակի փորձաքննություն իրականացրած փորձագետի կողմից այդ աղբյուրները ստուգելու (մոնիթորինգի ենթարկելու) արդյունքում պարզվում է, որ վերջինները չեն բավարարում սույն կետով ներկայացվող հասանելիության պահանջներին: Փորձագետն

ամբողջական պատասխանատվություն է կրում սույն ենթակետով նախատեսված հասանելիության ապահովման համար:

8) Եթե ապացուցվում է, որ պատահարի արդյունքում վնասված բաղադրիչը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը նույնպես վնասված է եղել, ապա փորձագետը սույն հավելվածի համաձայն հաշվարկված՝ բաղադրիչի ձեռքբերման կամ վերանորոգման արժեքից նվազեցնում է նախքան պատահարն առկա վնասի՝ սույն հավելվածով նախատեսված օրվա դրությամբ վերականգնման արժեքը:

9) Եթե ապացուցվում է, որ պատահարի արդյունքում վնասված բաղադրիչը մինչև ապահովագրական պատահար տեղի ունենալը վերանորոգված է եղել, ապա փորձագետը որպես բաղադրիչի ձեռքբերման արժեք հիմք է ընդունում տվյալ համանման վերանորոգված գործարանային արտադրության բաղադրիչի արժեքը, իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարանային արտադրության նոր բաղադրիչի արժեքից կատարում է մասհանում այն չափով, որով, ըստ փորձագետի, նվազել է բաղադրիչի արժեքը վերանորոգման արդյունքում: Ընդ որոմ, սույն ենթակետով նախատեսված մասհանումը չի կարող գերազանցել տվյալ համանման նոր բաղադրիչի արժեքի 30 տոկոսը:

10) Հաշվի առնելով առանձին դեպքերում փորձաքննության բարդությունը, ինչպես նաև այն դեպքերում, երբ փորձագետի կարծիքով վնասված գույքի ապամոնտաժման դեպքում հավանական է թաքնված վնասների առկայություն, փորձագետի հայեցողությամբ հաշվարկվող վնասի չափը կարող է ավելացվել չնախատեսված կամ թաքնված այլ ծախսերի չափով, որոնք չեն կարող գերազանցել տվյալ գույքին պատճառված՝ սույն հավելվածով (առանց սույն ենթակետով նախատեսված պայմանի կիրառման) հաշվարկված վնասի չափի 5%-ը:

11) Եթե մեկ պատահարի հետևանքով տվյալ գույքին պատճառված վնասներն առաջացել են մի քանի բախման արդյունքում, ապա փորձագետի կողմից յուրաքանչյուր բախումից առաջացած վնասների հստակ տարանջատման անհնարինության դեպքում համարվում է, որ յուրաքանչյուր բախումից առաջացել է հավասարաչափ վնաս: Ընդ որում, սույն ենթակետի իմաստով մեկ պատահար են համարվում իրար հաջորդող բոլոր այն բախումները, որոնք տեղի են ունեցել նախքան իրավասու պետական մարմնի կողմից նախորդ բախման գծով պատահարի գրանցումը,

12) Վնասված գույքը երաշխիքային ժամկետում գտնվելու դեպքում երաշխիքային ժամկետ տրամադրված անձի կողմից վնասվածքների վերականգնման հատուկ պայմաններ (կոնկրետ վերանորոգող կազմակերպություն և այլն) սահմանված լինելու դեպքում այդ պայմանները հաշվի են առնվում վնասի գնահատման գործընթացում,

16. Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող այլ գույքին պատճառված վնասը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան գույքի գնահատման համար սահմանված պահանջներին համապատասխան, իսկ նման կարգավորման բացակայության դեպքում՝ սույն գլխով սահմանված այն սկզբունքներին և մեթոդաբանությանը համաձայն, որոնք կիրառելի են տվյալ տեսակի գույքի համար:

## ԳԼՈՒԽ 5. ԳՈՒՅՔԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔՈՎ ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Գույքին պատճառված վնասը մնացորդային արժեքով որոշվում է գույքի՝ նախքան պատահարն առկա վիճակի շուկայական արժեքը գույքի մնացորդային արժեքով նվազեցնելու միջոցով:

18. Ավտոտրանսպորտային միջոցի մնացորդային արժեքի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա_մ = (1 - Գ_ա) \times Մ_ա \times \sum_{i=1}^{17} Հ_i$$

որտեղ՝

| | |
|---|---|
| **Ամ՝** | գույքի մնացորդային արժեքն է՝ ՀՀ դրամով |
| **Գա՝** | գործակից է, որն արտացոլում է գույքի բաղադրիչների ապամոնտաժման, փորձարկման, պահպանման և վաճառքի հետ կապված ծախսերի մեծությունը (Գա=0.65) |
| **Մա՝** | մինչև վնասվելը գույքի շուկայական արժեքն է՝ ՀՀ դրամով |
| **Հi ՝** | գույքի պիտանի բաղադրիչների շուկայական արժեքի տեսակարար կշիռն է մինչև վնասվելը գույքի շուկայական արժեքի նկատմամբ, որոնց հստակ չափերը աղյուսակ 4-ում նշված առավելագույն շեմի շրջանակներում վնասվածության աստիճանից ելնելով ինքնուրույնաբար որոշում է փորձագետը |
| **i** | գույքի բաղադրիչներն են, որոնց տեսակները սույն աղյուսակի համար սահմանված են աղյուսակ 4-ով |

19. Գույքի մնացորդային արժեքի հաշվարկման համար պիտանի է համարվում այն բաղադրիչը, որը՝

1) տեխնիկապես հնարավոր է անվնաս առանձնացնել գույքից,

2) տվյալ բաղադրիչի վաճառքի երկրորդային շուկայում ունի պահանջարկ,

3) չունի այնպիսի վնասվածք, որը կազդի դրա ամբողջականության և ապրանքային տեսքի վրա,

4) շահագործման ենթակա է,

5) կառուցվածքով, ամբողջականությամբ և չափերով չի փոխվել արտադրողի կողմից նախատեսված վիճակից,

6) նախկինում չի վերանորոգվել,

7) գտնվում է տեխնիկական շահագործման կանոններով թույլատրելի մաշվածությունը չգերազանցող վիճակում:

20. Սույն հավելվածի 18-րդ կետով սահմանված մեթոդաբանության արդյունքում ստացված մնացորդային արժեքը (դրա հաշվարկում մասնակցած բաղադրիչի արժեքը) կարող է փոխարինվել ավելի բարձր գնով, որով վնասված գույքը կամ դրա համապատասխան բաղադրիչը տուժողի գրավոր համաձայնությամբ ձեռք է բերվել երրորդ անձի կողմից:

**Մինչև վթարվելը ավտոտրանսպորտային միջոցի բաղադրիչների արժեքի առավելագույն տեսակարար կշիռը ավտոտրանսպորտային միջոցի արժեքի նկատմամբ**

**Աղյուսակ 4**

| N | Բաղադրիչի անվանումը | Հi (%) |
|---|---|---|
| 1 | Սրահ | 18 |
| 1.1 | Ղեկանիվ (անվտանգության բարձիկով) և ցուցիչ սարքերի վահանակ լրակազմ (անվտանգության բարձիկով) | 8 |
| 1.2 | Սրահի այլ դետալներ և հանգույցներ | 10 |
| 2 | Թափքի կմախք (հատակի շեմ, կանգնակներ, տանիք, դիմապակի, հետնապակի) | 13 |
| 3 | Առջևի ձախ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի ձախ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի ձախ սարքավորումներ | 3 |
| 4 | Առջևի աջ անվաթև, անվաթևի ցայտապաշտպան, լանժերոն, առջևի աջ երկայնահեծան, արտաքին լուսավորության՝ առջևի աջ սարքավորումներ | 3 |
| 5 | Շարժիչի ծածկոց, ջերմափոխանակիչի շրջանակ, ջերմափոխանակիչի շրջանակի կախովի տարրեր, դիմացի թափարգել | 2.5 |
| 6 | Ետևի ձախ անվաթև (կողամաս), ետևի ձախ անվակամար, լուսավորության՝ ետևի ձախ սարքավորումներ | 2 (2.5)* |
| 7 | Ետևի աջ անվաթև (կողամաս), ետևի աջ անվակամար (арка), լուսավորության՝ ետևի աջ սարքավորումներ | 2 (2.5)* |
| 8 | Բեռնախցիկի ծածկոց (ետևի դուռ), բեռնախցիկի հատակ՝ իր երկայնահեծաններով, ետևի լայնական վահանակ՝ իր կախովի դետալներով, բեռնախցիկի պաստառներ, ետևի թափարգել | 2.5 |
| 9 | Դռներ (իրենց լրակազմ դետալներով) | 4 (2)* |
| 10 | Շարժիչ (իր կցորդիչով և կախովի սարքավորումներով) | 16 |
| 10.1 | Շարժիչ (իր կցորդիչով՝ առանց կախովի սարքավորումների) | 10 |
| 11 | Մեխանիկական (ավտոմատ) փոխանցման տուփ | 7 (8) |
| 12 | Առջևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնակահեծան) (կիրառելի չէ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար) | 10 (8)** |
| 13 | Ղեկային կառավարման մեխանիզմ | 2 |
| 14 | Ետևի կախոց՝ իր լրակազմ դետալներով (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնակահեծան, ետևի կամրջակ) (կիրառելի չէ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար) | 8 (10)** |
| 14.1 | Կախոց՝ իր լրակազմ դետալներով լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար (կայունարար, ձգաձողեր, արգելակման համակարգ, անվահեծեր, անվադողեր, լայնակահեծան, ետևի կամրջակ) (կիրառելի չէ ոչ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար) | 18 (9+9)*** |
| 15 | Բաժանարար փոխանցման տուփ | 2 |
| 16 | Ջերմափոխանակիչներ (ջրի, յուղի, օդորակչի և այլն), վառելիքի, ջրի բաքեր, գազերի արտանետման համակարգ | 2 |
| 17 | 1-16-րդ կետերում չնշված այլ բաղադրիչներ | 3 |

*- երկդռնանի ավտոտրանսպորտային միջոցների համար,
**- ետևի քարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար,

***- լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար 12-րդ և 14-րդ կետերի փոխարեն կիրառվում է միայն 14.1-րդ կետը, իսկ ոչ լիաքարշակ ավտոտրանսպորտային միջոցների համար կիրառվում են համապատասխանաբար 12-րդ և 14-րդ կետերը՝ 15-րդ կետը ընդունելով 0 %:

21. Ավտոտրանսպորտային միջոցից տարբերվող գույքի մնացորդային արժեքը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան գույքի մնացորդային արժեքի գնահատման համար սահմանված պահանջներին համապատասխան, իսկ նման կարգավորման բացակայության դեպքում՝ սույն գլխով սահմանված այն սկզբունքներին և մեթոդաբանությանը համաձայն, որոնք կիրառելի են տվյալ տեսակի գույքի համար:

*Աղյուսակ 8.2.1.1*

**ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ՝**
**ԸՍՏ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ**

| Հ/հ | Վնասվածքների հիմնական խմբերը | Տուժողի վերականգնողական բուժման առավելագույն ժամկետը | |
|---|---|---|---|
| | | **Մեկ նշանակման համար** | **Մեկ պատահարի գծով տվյալ տուժողին կատարված բոլոր նշանակումների համար** (*ժամկետի սկիզբը է համարվում՝ 1) Տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասների գծով միայն ամբուլատոր բուժօգնություն և (կամ) վիրահատական միջամտությամբ չուղեկցված ստացիոնար բուժօգնություն ստացված լինելու դեպքում՝ ~~առաջնային վնասվածքների համար~~ առաջին անգամ բժշկական հաստատությունից տուժողի դուրս գրման օրը, 2) տվյալ պատահարի հետևանքով պատճառված վնասների գծով վիրահատական միջամտությամբ ուղեկցված ստացիոնար բուժօգնություն ստացված լինելու դեպքում՝ վերջին վիրահատական միջամտությունից հետո բժշկական հաստատությունից տուժողի դուրս գրման օրը*) |
| ***1. Գանգուղեղային վնասվածքներ*** | | | |
| 1) | թեթև | 1 ամիս | 1 ամիս |
| 2) | միջին ծանրության | 2 ամիս | 3 ամիս |
| 3) | ծանր | 2 ամիս | 12 ամիս |
| ***2. Ողնուղեղային վնասվածքներ*** | | | |
| 1) | պարապարեզ | 2 ամիս | 2 ամիս |
| 2) | պարապլեգիա | 2 ամիս | 3 ամիս |
| 3) | կվադրիպարեզ | 2 ամիս | 6 ամիս |
| 4) | կվադրիպլեգիա | 2 ամիս | 12 ամիս |
| ***3. Կոտրվածքներ, նյարդերի, փափուկ հյուսվածքների և ներքին օրգանների վնասվածքներ, այրվածքներ*** | | | |
| 1) | ողնաշարի, ազդրոսկրի, մեծ ոլոքի կոտրվածքներ, կոնքազդրային հոդի և ծնկահոդի ներհոդային կոտրվածքներ | 2 ամիս | 6 ամիս |

| | | | |
|---|---|---|---|
| 2) | այլ կոտրվածքներ | 2 ամիս | 4 ամիս |
| 3) | փափուկ հյուսվածքների վնասվածքներ | 2 ամիս | 2 ամիս |
| 4) | նյարդերի վնասվածքներ՝ ֆունկցիայի խանգարմամբ | 2 ամիս | 6 ամիս |
| 5) | ներքին օրգանների վնասվածքներ | 2 ամիս | 4 ամիս |
| 6) | այրվածքներ առանց սպիացման և ֆունկցիայի խանգարման | 2 ամիս | 2 ամիս |
| 7) | այլ այրվածքներ | 2 ամիս | 12 ամիս |